


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈՒԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ	
Վ.Ա.Յ. — Յրաժարիկը խաւարէն եւ դառնանք լոյսին	625
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	628
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ	
ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (3.13-17).....	631
ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ	
ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՅԾԵԱՆ — Սուրբ Յոզիին պտուղը կամ արդիւնքները	639
ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	645
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Բացայայտում մը Միջին Արեւելքի քրիստոնէաներու հոգեւորութեան	649
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԷՅԵԱԵԱՆ — Աստուածիմաստութիւն	653
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	661
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	663
ՀՈԿՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ	
* * * — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց թեմէն ներս.....	666
ՏՕՆԱԿԱՆ	703
ՀԱՅ ԴԱՏ	713
ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ	718
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	719
ԳԻՏԱԺՈՂՈՎ	723
ԴՊՐԵՎԱՆՔ	724
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	734
ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ	739
«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ	741
«ՆԱՐԵԿԱՅԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ	743
Հ.Ե.Հ.Ո.Ս.	746
ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ	750
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	755
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ	758



ՊԱՇՏՏՈՒՆԿԱԿԱՆ ԿՐԹՈՒՊԵԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՎՅՈՑ
ՄԵԾԻ ՏԵՆ ԿՐԿԿԻՈՅ

ՂԲ. ՏԱՐԻ 2023

ՆՈՅՏՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻԻ 11-12

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՀՐԱԺԱՐԻՆՔ ԽԱԲԱՐԷՆ ԵՒ ԴԱՌՆԱՆՔ ԼՈՅՍԻՆ

Տարեմուտ է, հաշուեյարդարի ժամ:

Նոր աւերածութիւններու, նոր տեղահանութիւններու եւ սպանդներու թատերաբեմի մը առջեւ, մարդկային անկարողութեան մատնուած՝ հարկադրաբար մեր ակնարկը կը սեւեռենք դարձեալ ամենակարող Փրկչին:

Աշխարհի փրկիչը «Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու, որպէս իրմէ ստեղծածուածներ» (Յի 1.11), կը վկայէ աւետարանիչ առաքեալը:

Չինք մերժողները աւագ քահանաներն էին, կրօնքի ուսուցիչներն ու դպիրները, այսինքն երկրի ղեկավարները իսկ հետեւորդները՝ պարզ մարդիկ, որ յաղթանակը ապահովեցին:

Քրիստոս, աշխարհ գալէն առաջ կը ճանչնար մարդկութիւնը, ինչպէս այսօր կը ճանչնայ ամբողջ աշխարհը որպէս Տէր եւ Աստուած, ստեղծիչ եւ փրկիչ: Երկրի վրայ ճանչցաւ կոյրը եւ բացաւ անոր աչքերը, ճանչցաւ անդամալոյծը եւ բժշկեց զայն, ճանչցաւ Ղազարոսը եւ յարութիւն տուաւ անոր: ճանչցաւ կրօնքի ուսուցիչներն ու աւագ քահանա-

ները, դպիրներն ու վաշխարուները, երկիրը շահագործողները եւ մարդիկը ստրկացնողները եւ զայրացաւ անոնց դէմ ու մտրակով մաքրեց Աստուծոյ տունը՝ սուրբ տաճարը, իր հետեւորդներուն յայտարարելով. «Դուք էք տաճարը եւ ես ձեր մէջ պիտի բնակիմ»:

Աստուած մեր մէջ կը բնակի, երբ մենք կ'ամբողջացնենք իր պատուիրանները եւ կը մաքրենք, կը սրբենք մեր հոգիները, որովհետեւ Աստուած մեղքերով աղտոտ վայրերու մէջ չի բնակիր: Ի՞նչպէս կը մաքրենք մեր հոգիները, որպէսզի արժանի ըլլանք կոչուելու Աստուծոյ որդիներ: Մեր հոգիները կը մաքրենք, երբ Աւետարանի պատգամները կը կարդանք եւ զանոնք կեանքի կը վերածենք: Աւետարանը պարզ գիրք մը չէ, որ կարդանք եւ մէկ կողմ նետենք: Աւետարանը միշտ բաց պիտի մնայ մեր բոլորին տան ամենամաքուր մէկ անկիւնը, մեր սեղանին վրայ եւ մեր անկողնի սնարին մօտ: Աւետարանը կեանքի մանրանկարն է, որուն պիտի հետեւինք: Պիտի հետեւինք որ մեր կեանքը ըլլայ ընդարձակ Աւետարան մը, տարածուած մեր ապրած օրերուն վրայ: Պիտի ապրինք այնպէս, ինչպէս առաքեալները ապրեցան: Խոնարհ, անաչառ, անշահախնդիր, պարկեշտ ու համբերատար:

Քրիստոսի օրերէն 2024 տարիներ ետք, այսօր, երբ մեր շուրջը կը նայինք, երբ մարդոց ապրելակերպին եւ գործակերպին կը հետեւինք, յստակօրէն կը տեսնենք, որ մարդը, հակառակ Աստուծոյ խոնարհութեան, հեզութեան ու քաղցրութեան, հակառակ անոր յորդորներուն, նոյնիսկ յանդիմանութիւններուն, իր գիտցածէն չէ շեղած: Այսօր քիչ են իսկապէս Քրիստոսի հաւատացողներն ու անոր հետեւողները, այսօր քիչ են Աստուծոյ որդիներ կոչուելու արժանիները: Այսօր ամբողջ աշխարհը դարձած է ձեւապաշտ: Քրիստոնէայ ժողովուրդները աւանդութեամբ միայն քրիստոնէայ անունը կը կրեն եւ խորքին մէջ հրեայ քահանաներուն եւ ուսուցիչներուն պէս իրենց սեփական շահերը միայն կը հետապնդեն, անունով միայն քրիստոնէայ են, ձեւակերպութեամբ միայն մկրտուած են քրիստոնէայ: Հեռու են Աստուծմէ: Ահա թէ ինչու պատերազմները չեն լւեր եւ թշնամութիւնները չեն դադրիր:

Մեր ժողովուրդը, որ առաջինը հանդիսացաւ Քրիստոսը գրկելու, իր ղեկավարութեամբ եւ ամբողջ ժողովուրդով, այսօր նոյնպէս կը հետեւի նոյն ձեւակերպութեան: Անունով միայն մնացած ենք քրիստոնէայ, երբ զիրար կը մերժենք, զիրար կը վիրաւորենք, իրարու իրաւունքները կը խլենք: Այդ պատճառով ալ հայրենիքը կը կաղայ, Արցախը կրակի ու ողբի մէջ է, մշակոյթը կը մարի, եկեղեցին եւ դպրոցը կը պարպուին:

Այսօր պետք է մտածենք, բոլորս միասին, ղեկավար թէ հետեւորդ, հոգեւորական թէ աշխարհական, հարուստ թէ աղքատ, էգ եւ արու, թէ

ինչպես կրկանք վերադառնալ մեր նախահայրերուն, մեր արմատներուն, մեր ինքնութեան եւ ըլլալ Աստուծոյ բնակարանը՝ Աստուծոյ տաճարը, որ մեր փրկիչը մեր մէջ բնակի, հոն ապրի եւ մեզ ամրապնդէ: Դժուար չէ ասիկա, որքան ալ ցրուած ու տկարացած ըլլանք:

Աստուծոյ տաճար ըլլալու առաջին պայմանը Սէրն է: Սիրել զԱստուած, սիրել ազգը, սիրել նմանը, սիրել եկեղեցին, մշակոյթը եւ հոգեւոր գանձերը, որոնցմով հարուստ ենք:

Երկրորդ, Աստուծոյ տունը կ'ըլլանք աստուածավախութեամբ, խոնարհութեամբ եւ հեզութեամբ:

Երրորդ, Աստուծոյ բնակարանը կ'ըլլանք մարդասիրութեամբ, բարեգործութեամբ, ողորմածութեամբ, անաչառութեամբ եւ անշահախնդրութեամբ:

Աստուծոյ տունը կ'ըլլանք երբ լոյս եւ ուրախութիւն կը բաշխենք մարդոց, տկարին, հիւանդին, աղքատին: Մենք սովոր ենք մեր մեռելները, մեր նահատակները մեծարելու, ինչ որ սքանչելի է, բայց պատրաստ եւ վարժ պիտի ըլլանք ողջերը, զիրար յարգելու նոյնպէս եւ նոյնչափ, որպէսզի ըլլանք տոկուն:

Աշխարհի ղեկավարները սկիզբէն մերժեցին Տէրը: Մեր ղեկավարները իմաստուն եւ հեռատես գտնուեցան եւ ընկալեցին Չայն: Իսկ այսօր, անոնք ալ Աւետարանէն հեռացած, անհեռատես ու անճարակ՝ աներներ կը գործեն: Դարձած են վարձկան հովիւներ, անպաշտպան ու անտէր ձգելով իրենց յաճնուած հօտը՝ ժողովուրդը: Արհամարհելով հողը՝ հայրենիքը:

Ցասումով կ'արձանագրենք այս տողերը 2023 տարուան աւարտին: Հաշուեյարդարի ժամ է այժմ, օգտուինք առիթէն, մաքրուինք ու դառնանք Աստուծոյ որդիներ:

Հրաժարինք խաւարէն ու դառնանք լոյսին, որ սպառնազինուինք...

Վ.Ա.Հ.

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Ղեւոնդ Քհնյ. Լօշխաճեանին, Քահանայական Լանջախաչ կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՁԱԽԱԶ

կրելու արտօնութիւն՝ յընթաց տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը իր ձեռքով չի կորստի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

*Տուալ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԳ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
(Ս. Աստուածածին եկեղեցւոյ հիմնադրութեան
400-ամեակին առթիւ)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ, ինչպէս նաեւ Սպահանի մեր ժողովուրդի սիրելի զաւակները:

Սպահանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Եպս. Չարեանի Մեզի ուղղած նամակէն ուրախութեամբ իմացանք, որ Նոր Ջուղայի մէջ հաստատուած Ս. Աստուածածին եկեղեցին պիտի նշէ իր հիմնադրութեան 400-ամեակը: Նոր Ջուղա Մեր հովուապետական այցելութեան ընթացքին կը յիշենք Մեր այցելութիւնը նաեւ Մեծ Մէլտան թաղամասին մէջ գտնուող եւ 1613-ին Խոջայ Աւետիք Բարաքեանի կողմէ կառուցուած եւ գեղեցկօրէն նկարազարդուած այս եկեղեցին:

Արդարեւ, չորս հարիւր տարիներ շարունակ Ս. Աստուածածին եկեղեցին եղաւ մեր ժողովուրդի հոգեւոր տունը, ուր մեր ժողովուրդի զաւակները միասին եղան Աստուծոյ ներկայութեան դիմաց, միասին աղօթեցին ու իրենց քրիստոնէական հաւատքը ամրապնդեցին: Ս. Աստուածածին եկեղեցին նաեւ եղաւ հայ հոգեւոր մշակոյթի կեդրոններէն մէկը՝ իր կարեւոր նպաստը բերելով Նոր Ջուղայի մշակութային առաքելութեան առաւել ծաղկման:

Այսօր, երբ յետադարձ ակնարկ մը կը նետէք Ս. Աստուածածին եկեղեցւոյ չորս հարիւր տարիներու կեանքին ու առաքելութեան, հարկ է որ յիշէք բոլոր այն հոգեւոր թէ աշխարհական պատասխանատուները, որոնք զանազան հանգամանքներով իրենց գործօն մասնակցութիւնը բերին այս եկեղեցւոյ պայծառութեան: Անցեալը յիշել նաեւ կը նշանակէ անցեալին ձեռք ձգուած իրագործումները առաւել հաւատքով շարունակել՝ հաւատարիմ մնալով հայ եկեղեցւոյ սրբազան կոչումին: Արդարեւ, Նոր Ջուղան իր եկեղեցիներով ու մշակութային նուաճումներով յատուկ տեղ է գրաւած մեր ժողովուրդի պատմութեան մէջ: Ան կոչուած է վերանորոգ յանձնառութեամբ շարունակելու իր հոգեմտաւոր առաքելութիւնը ընդհանրապէս հայ ժողովուրդի ու յատկապէս Պարսկաստանի հայութեան կեանքէն ներս:

Այս առիթով կ'աղօթենք հոգիներուն համար բոլոր անոնց, որոնք Աւետա-

րանի բացատրությամբ՝ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ծառայութեան գանձանակին մէջ իրենց լուսնային դրին: Բարձրօրէն կը գնահատենք այն բոլոր հոգեւոր թէ աշխարհական մշակները, որոնք Ս. Աստուածածին եկեղեցւոյ ճամբով կը ծառայեն Նոր Զուղայի ու Սպահանի մեր ժողովուրդի զաւակներուն: Թող Աստուած միշտ պայծառ պահէ մեր սուրբ եկեղեցին իր պայծառակերպիչ առաքելութեամբ:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 30-ն Հոկտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ ՇՅԻԴ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Ղեւոնդ Վրդ. Բէնդէգեանին, վարդապետական Լանջախաչ կրելու իրաւունք ստանալուն առթիւ)

Ի գնահատութիւն հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս Ձեր մատուցած ծառայութիւններուն, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք **ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԼԱՆԶԱԽԱՉ** կրելու իրաւունք:

Վստահ ենք, որ Աստուծոյ օրհնութեամբ պիտի շարունակէք Ձեր նուիրեալ գործունէութիւնը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճամբով Ձեր ծառայութիւնը մատուցելով մեր հաւատացեալ ժողովուրդին:

Կ'օրհնենք Ձեզ, եւ կ'աղօթենք որ Ամենաբարին Աստուած ֆիզիքապէս ու հոգեպէս զօրացնէ Ձեզ Իր շնորհաց հեղումովը Ձեր անձին վրայ, որպէսզի վերանորոգ խանդով շարունակէք Ձեր հոգեւոր առաքելութիւնը, եւ կարենաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի բառերով ըսել «*Ծառայք անպիտանք եւք, զոր պարտէաքն առնել 'արարաք*» (ՂՈՒԿԱՍ ԺԷ. 10):

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դրուն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 30-ն Նոյեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ ՇՅԻԵ.*

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

**ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ
(3.13-17)**

«Այդ օրերուն Յիսուս Գալիլեայէն Յորդանան գետ եկաւ Յովհաննէսի մօտ՝ անկէ մկրտուելու համար» (Մտ 3.13):

Ինչո՞ւ համար Տէրը Յորդանան գետ եկաւ մկրտուելու Յովհաննէսի ձեռքով: Մխիթար Վրդ. Սեբաստացի կը թուէ վեց պատճառներ.-

1) Յիսուս Գալիլեայէն Յորդանան գետ եկաւ, ո՛չ թէ որպէսզի մկրտէ ուրիշները, այլ՝ որպէսզի ինք մկրտուի իր ծառային՝ Յովհաննէսի ձեռքով, եւ այդ ձեռով խոնարհութեան օրինակ տուած ըլլայ մեզի: Արդարեւ, խոնարհ էր Յիսուս, որովհետեւ, ինք որ մարդիկը պիտի մկրտէր Սուրբ Հոգիով ու կրակով՝ եկաւ ջուրի մկրտութիւն ստանալու իր իսկ արարածին ձեռքով:

2) Որպէսզի կատարած ու իր լրումին հասցուցած ըլլայ ամբողջ արդարութիւնը:

3) Որպէսզի իր բոլոր անդամները (հաւատացեալները), իրենք եւս Յորդանան երթան եւ Յովհաննէսի ձեռքով մկրտուին, եւ այդ ձեռով պատրաստուած ըլլան ստանալու Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը:

4) Որպէսզի իր ամենասուրբ մարմինին հպումովը ջուրին՝ զօրութիւն պարգեւէ անոր, եւ իր մկրտութեան համար սուրբ նիւթի փոխակերպէ զանիկա:

5) Որպէսզի հաստատած ըլլայ մկրտութեան խորհուրդը, որ տեղի պիտի ունենար Հօր, Որդիին, եւ Սուրբ Հոգիին անունով:

6) Որպէսզի յայտնի ըլլայ Իսրայէլին թէ ինք Մեսիան է, եւ Տէրն ու Փրկիչը բոլորին: Արդարեւ, Յովհաննէս վկայեց իրեն համար՝ թէ ան աշխարհի մեղքը վերցնող Գառնուկն է (Յհ 1.29), եւ թէ ան Աստուծոյ Որդին է (Յհ 1.34): Հայրը վկայեց՝ թէ ան իր սիրելի Որդին է (Մտ 3.17): Եւ Սուրբ Հոգին անոր վրայ իջնելով ու հանգչելով՝ վկայութիւն տուած եղաւ թէ ան է որ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ մարդիկը (Յհ 1.33):

«Բայց Յովհաննէս ընդդիմացաւ անոր, ըսելով. "Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու, եւ դո՞ւն ինձի կու գաս"» (Մտ 3.14):

1) Յովհաննէս ուզեց արգիլել Յիսուսին որ մկրտուի իր ձեռքով, որովհետեւ ինքզինք կը նկատէր մաքրութեան կարօտ, իսկ Յիսուսը՝ անկարօտ, ինքզինք կը նկատէր աստղ, իսկ Յիսուսը՝ արեգակ: Յովհաննէս մերժեց մկրտել Յիսուսը, որովհետեւ ինք կարիքը կը զգար մկրտուելու եւ լուսաւորուելու: Յովհաննէս իր այս կեցուածքով, կարծէք Յիսուսին կ'ըսէր. – Ես անգամ մը մաքրուեցայ մօրս արգանդին մէջ, երբ երկրպագութիւն մատուցանեցի քեզի, հիմա եւս պէտք է մաքրուիմ ձեռքովդ իմ մնացեալ բիծերէս. արդ, դուն որ բնաւ բիծ չունիս, ի՞նչպէս կու գաս ինձի մկրտուելու ձեռքովս (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

2) Յովհաննէս կը գիտակցէր թէ կարիքը ունէր մկրտուելու Գառնուկին ձեռքով, որովհետեւ ան էր որ աշխարհի մեղքը պիտի վերցնէր (Յճ 1.29) (Ստեփանոս Սիւնեցի):

3) Յովհաննէս անշուշտ գիտէր որ Յիսուս իր մօտ պիտի գար մկրտուելու, բայց պատշաճութիւնը կը պահանջէր որ խոնարհաբար անոր ըսէր. «Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու»: Ինչպէս ծառայ մը պիտի վարուէր իր տիրոջ հետ, կամ արարածը՝ Արարիչին հետ, Յովհաննէս այնպէս վարուեցաւ Յիսուսի հետ: «Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու», ես ճրագս՝ Արեգակիդ կողմէ, անապատին մէջ հնչող ձայնս՝ Խօսքիդ կողմէ, փեսաւէրս՝ Փեսայիդ կողմէ, մարդոց մէջ մեծագոյնս՝ արարածներուն մէջ Անդրանիկիդ կողմէ: Ես կարիքը ունիմ ոչ միայն մկրտուելու քեզմէ, այլեւ՝ արեամբ մկրտուելու քու օրէնքիդ համար, որպէսզի, ինչպէս երկրի վրայ կենդանարար գալուստդ կը քարոզեմ ողջերուն, այնպէս ալ, մեռելներուն քարոզեմ՝ դժոխքին մէջ: «Դո՞ւն ինձի կու գաս»: Դուն որ սուրբերուն Սուրբն ես՝ տաժանեալի՞ս կու գաս մաքրութիւն ընդունելու համար: ... Յովհաննէս չըսաւ. «Դո՞ւն ինձի կու գաս մկրտուելու», այլ ըսաւ՝ «Դո՞ւն ինձի կու գաս»: Մկրտուելու մասին չխօսեցաւ՝ քանի ամչցաւ (Ներսէս Շնորհալի):

4) Թէպէտ Յովհաննէս ջուրի մկրտութիւն չստացաւ, բայց ստացաւ շա՛տ աւելի մեծ մկրտութիւն մը՝ արեան մկրտութիւնը (Մտ 14.10): Յիսուս խօսեցաւ Յովհաննէսին ու Յակոբոսին արեան մկրտութեան մասին (Մտ 20.22):

5) «Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու»: Յովհաննէս ուզեց ինք մկրտուիլ, այլ խօսքով՝ մաքրուիլ Յիսուսի ձեռքով, որովհետեւ ինքզինք մեղաւոր կը զգար: Գալով մեզի, մենք չե՞նք ուզեր մկրտուիլ, այլ խօսքով՝ մաքրուիլ Յիսուսի ձեռքով: Չունի՞նք մեղքերու մուրեք որոնցմէ սրբուիլ կ'ուզենք: Չունի՞նք մեղքերու տիղմեր որոնցմէ մաքրուիլ կ'ուզենք: Չունի՞նք մեղքերու շղթաներ որոնցմէ ազատագրուիլ կ'ուզենք: Կը գիտակցի՞նք թէ միայն Յիսուսի ձեռքը կրնայ մաքրել մեզ, որովհետեւ միայն Յիսուսի ձեռքերը ծակուեցան մեր մաքրու-

թեան համար: Եթէ Յիսուս մեզ շուայ ու շմաքրէ՝ իրեն հետ բաժին պիտի չունենանք երկինքի մէջ. այս ճշմարտութիւնն էր որ ան յայտնեց երբ Պետրոսի ըսաւ. «Եթէ ոտքերդ շուամ՝ ինձի հետ բաժին պիտի չունենաս» (Յճ 13.8):

6) «Ե՛ս պէտք ունիմ... դո՛ւն ինձի կու գաս»: Այո՛, մե՛նք պէտք ունինք Յիսուսին, եւ սակայն ի՛նք կու գայ մեզի: Փոխանակ մե՛նք փնտռենք Յիսուսը եւ խնդրենք որ մեզ ազատէ մեր տրտմալից վիճակէն, ի՛նք մեզ կը փնտռէ: Եւ անառարկելի իրականութիւնը այն է, որ եթէ Տէրը մեզ չփնտռէ ու իրեն չդարձնէ՝ մենք յաւերժապէս կը կորսուինք: Եթէ Տէրը չփնտռէր Ադամն ու Եւան՝ անոնք բնա՛ւ զինք պիտի չփնտռէին, մանաւանդ որ մեղք գործած էին եւ իբրեւ հետեւանք՝ կորսնցուցած էին Տիրոջ առջեւ կենալու իրենց համարձակութիւնը. արդարեւ, մեղքը կը խլէ՛ մարդուն սրտէն՝ Տիրոջ առջեւ կենալու համարձակութիւնը (Եզր 9.15): Չմոռնանք նաեւ, որ եթէ Հովիւր չփնտռէր կորսուած ոչխարը ու գայն գտնելով տուն չդարձնէր՝ անկարելի էր որ ոչխարը ինք փնտռէր Հովիւր ու գայն գտնէր:

«Յիսուս պատասխանեց. "Հիմա թո՛ղ տուր որ այսպէս ըլլայ, որովհետեւ այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամբը": Եւ Յովհաննէս թոյլ տուաւ» (Մտ 3.15):

1) Ի՞նչ էր Աստուծոյ արդար կամբը, որ Յիսուս կատարած պիտի ըլլար իր մկրտութեամբ: Աստուծոյ արդար կամբն էր՝ նոյնինքն մարդուն արդարացումը: Աստուած իր Որդին աշխարհ դրկեց, որպէսզի սրբէր ու արդարացնէր մարդ արարածը: Հարկաւ մարդուն արդարացումը միայն մկրտութեամբ չէր որ տեղի պիտի ունենար: Մարդուն արդարացումը ամբողջ ընթացք մըն էր, որ պիտի սկսէր Յիսուսի ծնունդով, շարունակուէր անոր մկրտութեամբ, իրականանար անոր խաչելութեամբ, ամբողջանար անոր յարութեամբ, եւ կատարելագործուէր Սուրբ Հոգիին տըւութեամբ. –

ա) Ծնունդը: Աստուծոյ Որդին մարդը ստեղծեց իր նմանութեամբ (Մն 1.27): Մարդը ընտրեց հպարտութեան ճամբան եւ կորսնցուց աստուածային իր նմանութիւնը, իսկ Աստուծոյ Որդին ընտրեց խոնարհութեան ճամբան եւ ծնաւ խոնարհ պայմաններու մէջ՝ վերադարձնելու մարդը իր նմանութեան:

բ) Մկրտութիւնը: Յովհաննէս առաքեալ կը վկայէ, թէ Յիսուս «մեզ սրբելու եկաւ իր մկրտութեամբ եւ իր արիւնով: Ո՛չ միայն ջուրով, այլ՝ ջուրով եւ արիւնով» (Ա.Յճ 5.6): Ներսէս Շնորհալի կ'ըսէ, թէ Յիսուս յանձն առաւ խոնարհիլ եւ իր ծառային ձեռքով մկրտուիլ, որպէսզի ի գործ դրած ըլլար արդարութիւնը, զոր նախահայրը կորսնցուց իր հպարտութեամբ:

գ) Խաչելութիւնը: Օրէնքին համաձայն «անիծեալ է ան՝ որ փայտէ կը կախուի» (Գղ 3.13): Յիսուս կախուեցաւ՝ որպէսզի ազատէ մեզ Օրէնքի անէծքէն եւ Աստուծոյ զաւակներ դարձնէ (Գղ 4.4-5): Եթէ ընդգրկենք Քրիստոսի խա-

չով իրագործուած ազատագրութիւնը՝ «կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամբը»:

դ) Յարութիւնը: Իր յարութեամբ արդարացանք (Հո 4.25): Բոլոր անոնք որոնք կ'ընդունին Քրիստոսի մահը իրենց մեղքերուն համար եւ կը մկրտուին՝ հաղորդակից կ'ըլլան Քրիստոսի մահուան, եւ անոր հետ ալ յարութիւն կ'առնեն (Հո 6.3-8): Առաջին հերթին խօսքը անշուշտ հոգեւոր յարութեան մասին է (Կղ 2.12, 3.1), իսկ ժամանակներու աւարտին՝ մարմնաւոր յարութիւնն ալ տեղի պիտի ունենայ: Մենք «կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամբը», եթէ հաղորդակից դառնանք Քրիստոսի մահուան, այլ խօսքով անոր թաղումը՝ դարձնենք թաղումը մեր մեղքերուն, եւ անոր յարութիւնը՝ դարձնենք յարութիւնը մեր հոգիներուն՝ մեղքի վիճէն:

ե) Սուրբ Հոգիին տրւութիւնը: Յովհաննէս կ'ըսէ, թէ մեր սրբուած ու փրկուած ըլլալը կը հաստատուի երեք վկաներով, «եւ այս երեք վկաները՝ Սուրբ Հոգին, մկրտութեան ջուրը եւ արիւնը» իրենք են (Ա.Յճ 5.8): Ընդունինք այս երեք վկաները մեր կեանքին մէջ եւ իբրեւ մեր կեանքը, եւ մենք «այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամբը»:

2) «Հիմա թո՛յլ տուր որ այսպէս ըլլայ, որովհետեւ այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամբը»: Ի՞նչ կ'ըսէ այս խօսքը քեզի՝ քու այսօրուան կեանքիդ մէջ. «Եթէ մարդիկ քեզ կը բամբասեն ու կը հալածեն, հիմա թո՛յլ տուր որ այդպէս ըլլայ, որովհետեւ այդպիսով կատարած պիտի ըլլաս Աստուծոյ արդար կամբը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ լոյսեամբ տանիլ ամէն բամբասանք ու հալածանք, որպէսզի մեծ ըլլայ վարձքդ երկինքի մէջ (Մտ 5.11-12): Եթէ մարդիկ քեզ մերժեն քու հաւատքիդ համար, մի՛ բարկանար ու մի՛ ընդվզիր, այլ թո՛յլ տուր որ այդպէս ըլլայ, որովհետեւ այդպիսով կատարած պիտի ըլլաս Աստուծոյ արդար կամբը: Արդարեւ, Աստուծոյ արդար կամբն է որ խաղաղութեամբ տանիս ամէն հալածանք ու մերժում, որովհետեւ ատիկա փրկութեանդ ապացոյցն է»:

3) «Եւ Յովհաննէս թոյլ տուաւ»: Յովհաննէսի նման, մենք եւս թոյլ տանք, թէ կողմ չհասկնանք թէ ինչո՞ւ այս կամ այդ դէպքը կը պատահի մեր կեանքին մէջ: Թոյլ տալ կը նշանակէ՝ խոնարհիլ Աստուծոյ կամքին դիմաց: Թոյլ տալ կը նշանակէ՝ խոնարհիլ Աստուծոյ հզօր ձեռքին տակ:

«Յիսուս մկրտուելէ ետք՝ անմիջապէս ջուրէն դուրս ելաւ: Եւ անա երկինքը բացուեցաւ, եւ տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղանիի նման կ'իջնէր եւ կու գար իր վրայ» (Մտ 3.16):

1) Մարդիկ Յովհաննէս Մկրտիչի ձեռքով մկրտուած ժամանակ՝ ջուրին մէջ կը մնային եւ իրենց մեղքերը կը խոստովանէին, բայց քանի Յիսուս խոստովանելիք մեղք չունէր՝ «անմիջապէս ջուրէն դուրս ելաւ» (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

2) Յովհաննէս Մկրտիչի մկրտութիւնը ապաշխարութեան մկրտութիւն էր (Մտ 3.11): Արդ, ինչո՞ւ համար Յիսուս մկրտուեցաւ երբ մեղք չունէր.–

ա) Մկրտուեցաւ, ցոյց տալու որ եթէ ինք անմեղ էր եւ կարիքը ունէր մկրտութեան, որքա՞ն աւելի մեղաւորները կարիքը ունին մկրտութեան (Ստեփանոս Սիւնեցի):

բ) Յիսուսի մկրտութիւնը փոխանորդական, այսինքն՝ մեր փոխարէն կատարուած մկրտութիւն էր:

գ) Յիսուս ապաշխարութեան մկրտութիւն ստացաւ, ցոյց տալու թէ ամէն մարդ պէտք է անցնի ապաշխարութեան ընթացքէն: Յովհաննէս «կը քարոզէր ապաշխարել եւ մկրտուիլ՝ որպէսզի Աստուած մեղքերուն թողութիւն տայ» (Մր 1.4): Մարդիկ իրենց մեղքերը կը խոստովանէին եւ անկէ ետք կը մկրտուէին (Մր 1.5): Յիսուս մեղք չունէր, բայց ան իր մկրտութեամբ պարզեց, թէ իր արեան կողքին՝ իր մկրտութիւնը նաեւ սրբեց մեր մեղքերը (Ա.Յհ 5.6):

դ) Մկրտուեցաւ, հաստատած ու վաւերացուցած ըլլալու համար Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը:

ե) Մկրտուեցաւ, իր մարմինով մաքրելու Յորդանան գետի ջուրը, որ մկրտութեան աւազանին խորհրդանիշը պիտի ըլլար: Իր մկրտութեամբ հետագային հաստատուելիք մկրտութեան աւազանն էր որ սրբագործեց:

զ) Իր մկրտութեամբ, թլփատութիւնը փոխարինուեցաւ մկրտութեան խորհուրդով:

3) Երկինքը ուրիշներուն համար չբացուեցաւ, այլ միայն Քրիստոսի համար: Դուկաս կը վկայէ, թէ «երբ Յիսուս կ'աղօթէր, երկինքը բացուեցաւ» (Ղկ 3.21): Յիսուսի խոնարհութեան ու ըրած աղօթքին համար էր որ երկինքը բացուեցաւ, եւ ոչ թէ Յովհաննէսի շնորհած մկրտութեան համար (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

4) Երբ առաջին Ադամը մեղք գործեց՝ երկինքը փակուեցաւ, եւ ալ չբացուեցաւ մինչեւ անոր մեղքին վերցուիլը երկրորդ Ադամին մկրտութեամբ: Յիսուսով տրուած պարգեւը աւելի մեծ էր, քան Ադամին տրուած պատիժը, որովհետեւ, այնտեղ փակուեցաւ դրախտին դուռը, իսկ այստեղ բացուեցաւ երկինքի՝ արքայութեան դուռը: Այս պատճառով ալ, Աւետարանիչը չ'ըսեր լոկ «բացուեցաւ», այլ կ'ըսէ՝ «բացուեցաւ երկինքը անոր համար»: [Այսինքն, երկինքը ոչ միայն Յիսուսով բացուեցաւ, այլեւ՝ Յիսուսի սիրոյն համար բացուեցաւ]: ... Սա կը նշանակէ, թէ Հայրը յանուն իր Որդիին հաշտուեցաւ մարդկութեան հետ, եւ բացաւ երկինքը՝ հրաւիրելով բոլորը որ հոն մտնեն, եւ դառնան երկինքի արքայութեան ժառանգորդ իր Որդիին մկրտութեամբ (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

5) Ինչո՞ւ Սուրբ Հոգին աղանիթի նմանութեամբ իջաւ ու հանգչեցաւ Յիսուսի վրայ.–

ա) Աղանիի նմանութեամբ իջաւ, յիշեցնելու համար մեզի, թէ ջրհեղեղի աւարտի աւետիսը այդ նոյն թռչունն էր որ բերաւ, բերնին մէջ պահելով ձիթենիի նոր փրցուած տերեւ մը (Մն 8.11), իբրեւ կեանքի առհաւատչեայ (երաշխիք, գրաւական): Այդ աղանին նման էր այս աստուածային Աղանիին, որ ձիթենիի տերեւի փոխարէն՝ մարդկային ցեղին բերաւ ազատութիւն եւ որդեգրութիւն Հօրմէն՝ սուրբ իւղի օծման միջոցաւ, [որով կը դրոշմուի ու կը կնքուի մանուկը] (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

բ) Սուրբ Հոգին մեզի ծանօթ շնչաւոր աղանիի ձեւով շիջաւ Յիսուսի վրայ: Երկինքի հրեշտակները իրենք էին որ օդեղէն մարմին մը կազմելով աղանիի ձեւ առին, եւ Սուրբ Հոգին անոնց հետ իջաւ Յիսուսի վրայ (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

գ) Սուրբ Հոգին աղանիի նմանութեամբ իջաւ Յիսուսի վրայ, քանի աղանին պայծառ, հեզ, անմեղ, պարզ, նախանձայոյզ, իր ձագերը սիրող, ծննդական, մարդոց բարեկամ, բոլորին կողմէ սիրուող կենդանի է: Յիսուս ինք նաեւ ունի այս բոլոր յատկութիւնները: Այս ճշմարտութիւնը պարզելու համար էր որ Սուրբ Հոգին աղանիի նմանութեամբ իջաւ (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

դ) Աղանին խաղաղասէր կենդանի է, եւ նշանակ՝ խաղաղութեան: Սուրբ Հոգին աղանակերպ իջաւ, բացայայտելու համար, թէ՛ Յիսուս խաղաղութեան իշխանն էր (Ես 9.6), թէ՛ ահա Աստուած կու գար իր Որդիին միջոցաւ խաղաղութեան ուխտ կնքելու մարդկութեան հետ, եւ թէ՛ մարդիկ կոչուած են ընդգրկելու այդ խաղաղութիւնը: Եթէ մենք Քրիստոսով բացայայտուած խաղաղութիւնը ունինք մեր սրտին մէջ, կը նշանակէ թէ Սուրբ Հոգին աղանակերպ հանգչած է մեր վրայ: Սուրբ Հոգին մեզ կ'առաջնորդէ Քրիստոսի, բայց չի բնակիր մեր մէջ մինչեւ որ Քրիստոս ինք բնակի մեր մէջ. իսկ Քրիստոս կը բնակի մեր մէջ միայն այն ատեն երբ ընդունինք իր փրկութիւնը:

«Երկինքէն լուսեցաւ ձայն մը, որ կ'ըսէր. "Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ"» (Մտ 3.17):

1) Կը հաստատուի թէ «երկինքէն լուսեցաւ ձայն մը», ինչ որ ցոյց կու տայ թէ հոն ներկայ գտնուողները բոլորը լսեցին ձայնը, եւ բոլորը պէտք էր լսէին, որովհետեւ Հօր Աստուծոյ վկայութիւնը միայն Յիսուս ինք չէր որ պէտք էր լսէր, միայն Յովհաննէս ինք չէր որ պէտք էր լսէր, այլեւ՝ բոլոր ներկաները: Յիսուս կարիքը չունէր լսելու Հօրը վկայութիւնը իր անձին մասին: Յովհաննէս ալ այդ վկայութիւնը լսելու կարիքը չունէր, որովհետեւ իրեն ուրիշ նշան մը տրուած էր, որ Սուրբ Հոգիին աղանակերպ էջքն էր, որով պիտի ճանչնար Յիսուսը (Յհ 1.33):

2) Ձայնին երկինքէն լսուիլը՝ Քրիստոսի երկնային ծագումն է որ կը բացայայտէ, եւ միաժամանակ ցոյց կու տայ թէ Քրիստոս Տէրն ու Աստուածն էր երկինքին: Քրիստոս երկիր եկած ժամանակ՝ չղաղրեցաւ երկինքի գահակալ

Աստուածը ըլլալէ: Ան երկրի վրայ եղած ատեն՝ միաժամանակ երկինքի մէջ եղող Աստուածն էր (Յճ 3.13): Ան իբրեւ անձ բաժնուեցաւ իր Հօրմէն ու աշխարհ եկաւ, բայց իբրեւ էութիւն ու բնութիւն Հօրմէն անբաժան մնաց (Յճ 1.18), որովհետեւ Հօրը հետ մէկ եւ նոյն էութիւնն ու բնութիւնը ունի, այլապէս պիտի չըսէր թէ ինք եւ Հայրը մէկ են (Յճ 10.30, 17.11):

3) Զայնին երկինքէն լսուիլը ցոյց կու տայ մեր երկնաւոր Հօր ուրախութիւնը՝ մարդոց փրկութեան համար, որ իր Որդիով կը յայտնուէր: Չորս դարերէ ի վեր լուսած էին մարգարէներուն ձայները: Չորս դարերէ ի վեր լուսած էր երկինքի Աստուածը. երկինքէն բնաւ ձայն չկար: Յիսուսի մկրտութեան ժամանակ սակայն, երկինքի Աստուածը սկսաւ խօսելու, եւ առաջին խօսքը որ ըսաւ՝ «Ասիկա է իմ սիրելի Որդիս» խօսքն էր: Եւ այս խօսքը միայն իր Որդիին ուղղուած չէր, այլ անոր ընդմէջէն ուղղուած էր բոլորիս: Ժամանակը հասած էր, որ մարդիկ Աստուծոյ սիրելի Որդիին միջոցաւ՝ դառնային Աստուծոյ սիրելի տղաքն ու աղջիկները:

4) «Ասիկա է իմ սիրելի Որդիս»: Ասիկա Հօր վկայութիւնն է Որդիին մասին: Յիսուս Հօր Որդին չեղաւ մկրտութեան ժամանակ, ինչպէս կ'ըլլայ մարդոցս պարագային: Ան Հօր Որդին է բնութեամբ, եւ ի յաւիտենից: Որդին Հօրմէն ծնած է (Սղ 2.7): Ինչպէս մարդէն ծնածը՝ մարդ կ'ըլլայ, այնպէս ալ, Աստուծմէ ծնածը՝ Աստուած: Մենք մեր երկնաւոր Հօր զաւակները կը դառնանք երեք կերպերով.՝ Հաւատքի միջոցաւ (Յճ 1.12), որդեգրութեամբ (Հն 8.23), եւ աստուածային սիրոյ իբրեւ արտայայտութիւն (Ա.Յճ 3.1): Իսկ Քրիստոս, ինչպէս ըսի, Հօր Որդին է իր բնութեամբ, որովհետեւ Հօր հետ նոյն բնութիւնը ունի:

5) Յիսուսի մկրտութեան ժամանակ տրուած այս վկայութիւնը կը յիշեցնէ մեզի, թէ երբ մենք մանուկը կը մկրտենք՝ երկինքը կը բացուի եւ Սուրբ Հոգին կ'իջնէ անոր վրայ, եւ մեր երկնաւոր Հայրը վկայութիւն կու տայ ըսելով. «Ասիկա իմ սիրելի զաւակս է, որուն ես հաճեցայ»: Մանուկի մը մկրտութեան ժամանակ սակայն երկինքը մեքենականօրէն չի բացուիր եւ Սուրբ Հոգին մեքենականօրէն չ'իջներ: Երկինքը կը բացուի եւ Սուրբ Հոգին կ'իջնէ միայն այն պարագային՝ երբ աղօթք ու աղաչանք կը բարձրանայ երկինք մկրտութեան պահուն: Ղուկաս Աւետարանիչ կը վկայէ, թէ Յիսուս մկրտութեան ժամանակ ու մկրտութենէն ետք կ'աղօթէր, եւ երբ կ'աղօթէր՝ երկինքը բացուեցաւ (Ղկ 3.21-22): Երբ դէպի երկինք բարձրացող ջերմեռանդ աղօթք չկայ՝ երկինքի գահակալ Աստուածը չի բանար երկինքի դուռը եւ չի ղրկեր իր Սուրբ Հոգին:

6) Հայրը ո՛չ միայն կը յայտարարէ թէ Յիսուս իր Որդին է, այլեւ կը յայտարարէ իր Որդիին՝ իրեն համագոյակից ըլլալը, ինչ որ ցոյց կու տայ «իմ» անձնական դերանունը: Մխիթար Վրդ. կը հաստատէ, թէ «իմ» անձնական դերանունը ցոյց կու տայ որ Որդին համագոյակից ու բնութենակից է Հօրը:

7) «Իմ սիրելի»: Որդին Հօրը սիրելի Որդին է, որովհետեւ Հօրը սիրոյն

մարդեղացումն է, թանձրացումն է: Որդին Հօրը սիրոյն հեղումն է՝ սիրոյ կարօտ մարդոց վրայ: Երբ մենք կը մկրտուինք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով՝ մե՛նք ալ կը դառնանք Աստուծոյ սիրելիները, եւ անշուշտ Աստուած կը դառնայ մեր սիրելին: Մեզմէ ո՞վ կրնայ սրտի ամենայն խաղաղութեամբ ըսել թէ ինք Աստուծոյ սիրելին է, որուն կը հաճի Աստուած:

8) «Որում ես հանեցայ»: Հայրը հաճեցաւ իր Որդիին, որովհետեւ Որդին սիրայօժար կերպով թողուց երկինքն ու անոր փառքը եւ երկիր իջաւ, եւ որովհետեւ ան մեծ խոնարհութեամբ իր վրայ առաւ մեր ծառայական կերպարանքն ու մեր մեղքերը եւ խաչ բարձրացաւ (Փլպ 1.7-8): Աստուած մեզի՛ ալ կրնայ հաճիլ, եթէ երբեք իր Որդիին նման պատրաստ ըլլանք թողուլ մեր փառքն ու փառասիրութիւնը, եւ աշխատիլ մեր եւ այլոց փրկութեան համար:

9) Յիսուս իր մկրտութենէն ետք է որ սկսաւ իր առաքելութեան: Այս իրողութիւնը մեզի պէտք է յիշեցնէ, թէ մենք երբ կը մկրտենք մեր մանուկները՝ առաքելութիւն մըն է որ մեզի կը յանձնուի, եւ այդ առաքելութիւնն է՝ քրիստոնէական կրթութիւն ջամբել մկրտեալ մանուկին: Մկրտութեամբ մանուկը Քրիստոսի անունը կը կրէ, բայց անոր քրիստոնէական կրթութիւն ջամբելով է որ անիկա Քրիստոսի սիրտը նաեւ պիտի կրէ:

10) Քրիստոսի մկրտութեան ժամանակ է որ Աստուած բացայայտօրէն կը յայտնուի իբրեւ Երրորդութիւն: Աստուածային երեք անձերուն ներկայութիւնը շատ յստակ ու դիպուկ է: Ներկայ է անշուշտ Որդին որ մկրտուողն է, Սուրբ Հոգին՝ որ մկրտեալ Որդիին վրայ հանգչողն է, եւ Հայրը՝ որ Որդիին համար իր վկայութիւնը տուողն է: Օգոստինոս կ'ըսէ, թէ «մկրտութեան ժամանակ մեր Աստուածը ինքզինք յայտնեց իբրեւ Երրորդութիւն, ... իբրեւ երեք անձեր՝ երեք տարբեր դերերով. Հայրը ձայնն է, Որդին՝ մարդը, իսկ Սուրբ Հոգին՝ աղանակերայ յայտնուողը: Անոնք մէկ Աստուած են, եւ սակայն Որդին Հայրը չէ եւ Հայրը Որդին չէ, եւ Սուրբ Հոգին ո՛չ Հայրն է եւ ո՛չ ալ Որդին: Մենք գիտենք որ այս անասելի Երրորդութիւնը կը բնակի ինքնիւր մէջ, կը նորոգէ բոլորը, կը ստեղծէ, կը կանչէ, կը դատապարտէ եւ կը փրկէ: Այս Երրորդութիւնը, ինչպէս գիտենք, անասելի ու անբաժան է»:

11) Հօրը եւ Սուրբ Հոգիին ներկայութիւնը մկրտութեան ժամանակ կը պարզէ, թէ Սուրբ Երրորդութեան անձերէն իւրաքանչիւրը իր դերը ունի մեր փրկութեան մէջ: Ծիշդ է որ Որդին ինքն է որ ինքզինք իբրեւ զոհ ընծայեց մեր փրկութեան համար, եւ սակայն ինքզինք ընծայեց «յալիտենական Հոգիին միջոցաւ», եւ ընծայեց իր Հօրը (Եբր 9.14): Հոս ունինք ընծայուողը՝ Որդին, ընծան ընդունողը՝ Հայրը, եւ Սուրբ Հոգին՝ որուն միջոցաւ ընծայումը տեղի կ'ունենայ:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 8)

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

**ՍՈՒՐԲ ՀՈԳԻԻՆ ՊՏՈՒՂԸ
ԿԱՄ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ**

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ոմանք Առաջին Կորնթացիներուն նամակին 12.8-11 համարներուն մէջ յիշուած Ս. Հոգիին պարգեւները կը շփոթեն Ս. Հոգիին պտուղին կամ արդիւնքներուն հետ: Ս. Հոգիին պարգեւները Ս. Մկրտութեան ճամբով քրիստոնեային տրուած բնատուր պարգեւներն են, որոնք քրիստոնեայ մարդը կ'ունենայ առանց յաւելեալ ճիգի, մինչ Ս. Հոգիին պտուղը կամ արդիւնքները կեանքի ընթացքին Ս. Հոգիին շնորհքով եւ զօրութեամբ քրիստոնեայ մարդուն ձեռքբերած առաքինութիւններն են:

Գաղատացիներուն ուղղած իր նամակին մէջ, Հեթանոսաց առաքեալը՝ Պօղոս կը թուէ Ս. Հոգիին պարգեւող իննը պտուղները հետեւեալ հերթակա՛նութեամբ. սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնււտութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն եւ ժուժկալութիւն (Գղ 5.22-23): Այս պտուղները կը բխին Ս. Հոգիէն եւ միաժամանակ կը բացայայտեն Անոր նկարագիրը. այսինքն՝ այսպէս ըսուած, անոնք Ս. Հոգիին «բնաւորութիւնը» կը յայտնեն: Եւ որովհետեւ Ամենասուրբ Երրորդութեան անձերը (Հայր, Որդին եւ Ս. Հոգին) մէկ են, այս պտուղները կը բացայայտեն նաեւ Աստուծոյ նկարագիրը եւ ինչպէս նաեւ՝ Աստուածորդիին նկարագիրը:

Ս. Հիերոմը կամ Ճերոմը (ծնած՝ 342-347-ի շուրջ, մահացած՝ 420-ին) իր Աստուածաշունչի լատիներէն թարգմանութեան մէջ, որ ծանօթ է Վուկասիա անունով, Պօղոս առաքեալի յիշած իննը պտուղներուն վրայ կ'աւելցնէ երեք պտուղներ, որոնք են՝ երկայնամտութիւն, համեստութիւն եւ մաքրոյաբարութիւն: Այս մէկը Կաթոլիկ եկեղեցւոյ պաշտօնական Աստուածաշունչ Մատեանին տարբերակն է: Սակայն, այս յօդուածը կը խօսի միայն իննին մասին, որ Ուղղափառ եկեղեցւոյ եւ Պօղոս առաքեալին գրած տարբերակն է:

Պօղոս առաքեալ «պտուղ» բառը օգտագործելով նկատի ունի մարդէն դուրս եկող պտուղը՝ Ս. Հոգիին անմիջական աջակցութեամբ: «Պտուղ» բառը կը վերաբերի բանի մը արտադրութեան կամ արդիւնքին: Ս. Հոգիին շնորհքն ու զօրութիւնը կ'աճեցնեն այս պտուղը մարդուն մէջ: Սակայն, միայն Ս. Հոգին չէ որ կ'աշխատի աճեցնել այս պտուղը մարդուն մէջ, այլ մարդը ինքն ալ պէտք է աշխատի անոր աճման գործընթացին համար: Այլ խօսքով՝ Ս. Հոգիին պտուղին աճումը կ'ենթադրէ մարդը եւ Ս. Հոգի սերտ համագործակ-

ցուծիւն, որովհետեւ առանց մարդ եւ Ս. Հոգի սերտ գործակցութեան, մարդ արարածը չի կարողանար պտուղ տալ: Այս համագործակցութեան գործին մեծապէս կ'օգնէ Աստուածաշունչ Մատեանի ընթերցանութիւնը, որովհետեւ Ս. Հոգիին պտուղը նուաճելու կերպերը շարունակական կերպով յիշուած են Ս. Գիրքին մէջ: Օրինակ՝ սիրելու կերպը կը գտնենք Մատթէոսի աւետարանին 22.37-39, Ա. Կորնթացիներուն 13.1-13 եւ Գաղատացիներուն 5.13-14-ին մէջ: Ուրախութեան կերպը կը գտնենք Փիլիպպեցիներուն 4.4 եւ Թեսաղոնիկեցիներուն 5.16-ին մէջ: Խաղաղութեան կերպը կը գտնենք Հռոմայեցիներուն 12.18 եւ Փիլիպպեցիներուն 4.7-ին մէջ: Տակաւին կարելի է շարքը երկարել: Հետեւաբար, կարելոր է ո՛չ միայն իմանալ Ս. Հոգիին պտուղը, այլ ջանասիրաբար փորձել զայն դարձնել քրիստոնէական սեփական կեանքին անբաժանելի մէկ մասնիկը: Այս պտուղին ձեռքբերումը կ'ենթադրէ կեանքի զիջում՝ Ս. Հոգիին առաջնորդութեամբ եւ Աստուածաշունչ Մատեանին օգտագործումով:

Պօղոս առաքեալ Գաղատացիներուն ուղղած իր նամակի 5-րդ գլուխին մէջ կը խօսի երկու տեսակի պտուղներու մասին: Առաքեալը առաջին տեսակին կու տայ «մարդկային գործեր» անունը, որոնք իրականութեան մէջ մեղքին պտուղները կամ արդիւնքներն են: Անոնք են՝ շնութիւնը, պոռնկութիւնը, անբարոյութիւնը, կռապաշտութիւնը, կախարդութիւնը, թշնամութիւնը, կռիւր, նախանձը, բարկութիւնը, հակառակութիւնը, երկպառակութիւնը, բաժանումները, շար կամեցողութիւնը, սպանութիւնը, արբեցողութիւնը եւ անառակութիւնը (Գղ 5.19-21): Դիտելի է, թէ մեղքին պտուղները թիւով աւելի են, քան Ս. Հոգիին պտուղը: Պօղոս առաքեալ պատահական կերպով չէ գրած այս մէկը: Ան ուզած է հաստատել, թէ մեղքին պտուղները աւելի են, որովհետեւ մեղքը միշտ մեղք կը ծնի: Այն մարդը, որ իր կեանքին մէջ զԱստուած չունի, այս տեսակի պտուղներ կու տայ: Երկրորդ տեսակի պտուղներուն առաքեալը կու տայ «Ս. Հոգիին պտուղ» անունը, որ իրականութեան մէջ հաւատացեալ մարդուն տուած պտուղն է: Այս տեսակի պտուղը մարդկային կեանքին տուած պտուղին լաւագոյն եւ արժէքաւոր տեսակն է, որովհետեւ Աստուծոյ Հոգիով ապրուած կեանքը միշտ քաղցր պտուղ կու տայ եւ անոնցմով ուրիշներուն ուշադրութիւնը կը գրաւէ եւ անպայմանօրէն կ'առաջնորդէ Փրկիչին:

ԻՆՉՈՒՒ Ս. ՀՈԳԻԻՆ ՊՏՈՒՂԸ ԵԶԱԿԻ ԶԵՒ ՈՒՆԻ, ԻՍԿ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ՝ ՅՈԳՆԱԿԻ

Յունարէն բնագրին մէջ Ս. Հոգիին պտուղը եզակի ձեւ ունի, իսկ մարդկային գործերունը՝ յոգնակի: Ս. Հոգիին միջոցաւ մարդուն նուաճած պտուղին յունարէն բառը հիմնականին մէջ կը նշանակէ ուտելու համար պտուղ, որուն առընթեր նաեւ ունի սերունդ, արարք, գործողութիւն, արդիւնք կամ

շահոյթ իմաստները: Այդ իսկ պատճառով, արդի աշխարհաբար թարգմանութիւնը պտուղի փոխարէն արդիւնք բառը օգտագործած է:

Ինչո՞ւ Պօղոս առաքեալը պտուղ բառը եզակի ձեւով օգտագործած է, իսկ մարդկային գործերունը՝ յոգնակի: Կան երկու տեսութիւններ.- Առաջինը կ'ըսէ, թէ մեղքին պարագային (մարդկային գործեր), մարդ կրնայ մէկ մեղքը գործել, իսկ միւսը՝ ոչ. այսինքն՝ ընտրութիւն գոյութիւն ունի: Սակայն Ս. Հոգիի պտուղին պարագային մարդ չի կրնար մէկ պտուղը ընտրել, իսկ միւսը մերժել, որովհետեւ անիկա Աստուծոյ կողմէ իբրեւ մէկ ամբողջութիւն եւ մէկ փաթեթ (package) կը տրուի քրիստոնեային. այսինքն՝ հոն ընտրանքի հարց չկայ. քրիստոնեան կա՛մ բոլորը միասին պիտի ընտրէ, եւ կա՛մ բոլորը միասին պիտի մերժէ: Այս տեսութեան հիմնական գաղափարը այն է, որ Ս. Հոգին իր կեանքին մէջ ունեցող մարդը պէտք է բոլոր առաքինութիւնները ունենայ: Այն քրիստոնեան, որ Ս. Հոգիին պարգեւած պտուղին առաքինութիւններուն ամբողջութիւնը շունչ իր կեանքին մէջ, կը նմանի այն անպտուղ թզենիին, որուն Քրիստոս մօտեցաւ պտուղ ստանալու ակնկալութեամբ, սակայն տերեւէ զատ ոչինչ գտաւ անոր վրայ (Մր 11.12-14): Իսկ երկրորդ տեսութիւնը կ'ըսէ թէ Ս. Հոգիին պտուղին եզակի ձեւը կը վերաբերի բերքահաւաքի եւ առաքինութիւններու միասնութեան: Այս բացատրութեան ջատագովները գլխաւոր պտուղը կը նկատեն սէրը, որուն կապուած են միւս ութը առաքինութիւնները: Անոնք իրենց թէզը պաշտպանելու համար կ'օգտագործեն Պօղոս առաքեալին կողմէ Կորնթացիներուն ուղղուած նամակին 13.1-13 հատուածը, ուր առաքեալը կը յայտնէ, թէ առաքինութիւններուն մեծագոյնը սէրն է: Այս բացատրութիւնը աւելի՛ հասկնալի կը դարձնէ առաքինութիւններուն մէկ ամբողջութիւն ըլլալը, որովհետեւ առաքինութիւնները կը ներկայացնէ իբրեւ մէկ ծառին, այս պարագային Ս. Հոգի եւ մարդ միացած ծառին, տեսակաւոր պտուղները, որոնք իրենց ոյժը կը ստանան արմատէն՝ սէրէն: Իսկ ինչ կը վերաբերի մարդկային գործերուն յոգնակի ձեւին, ան առաջին տեսութեան նոյն բացատրութիւնը կու տայ:

ԻՆՉՊԷ՛Ս ՊԷՏՔ Է ՀԱՍԿՆԱԼ ՊՏՈՒՂ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Աստուած քրիստոնեան իբրեւ ծառ դրած է այս աշխարհին մէջ: Ինչպէս որ ոեւէ մարդ ծառ կը տնկէ, որպէսզի անոր պտուղները վայելէ, այնպէս ալ Աստուած մարդկութիւնը այս աշխարհին մէջ տնկած է, որպէսզի անոր տուած պտուղները վայելէ, եւ ինչպէս աւետարանը կ'ըսէ. «Իւրաքանչիւր ծառ իր պտուղէն պիտի ճանչցուի» (Ղկ 6. 44): Այլապէս ծառը ինչ օգուտ կ'ունենայ, երբ անպտուղ է եւ միայն գեղեցիկ ու կանաչ տերեւներով ծածկուած:

Մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս, իր երկրաւոր առաքելութեան ընթացքին յաճախ օգտագործեց թզենիին օրինակը, որպէսզի ցոյց տայ, որ մարդ ինչպիսի՛ պտուղներ պէտք է տայ Աստուծոյ: Երբ թզենին կարճ կ'ըլլայ,

ան շատ համեղ ու քաղցր պտուղներ կու տայ: Իսկ երբ կը սկսի բարձրանալ, այլեւս համեղ եւ քաղցր պտուղներ չի տար: Այնպէս ալ երբ քրիստոնեան խոնարհ, հեզ եւ համեստ ըլլայ, քաղցր պտուղներով կը զարդարուի: Այն ծառը, որ պտուղներով առցուն է, ծռած կ'ըլլայ պտուղներուն ծանրութենէն: Մինչ այն ծառը, որ պտուղ չունի, թէեւ բարձրահասակ կ'ըլլայ, բայց որեւէ օգուտ չի ներկայացնէ: Հպարտ եւ ամբարտաւան մարդը, որ առաքինութիւններով ու խոնարհութեամբ չ'ապրիր, կը նմանի այդ բարձրահասակ եւ հսկայ ծառին, որ թէեւ գեղեցիկ տեսք ունի, բայց օգուտ չի տար իր շրջապատին եւ ո՛չ ալ իր անձին: Աստուած հպարտ սիրտեր չի փնտրեր, որպէսզի անոնց մէջ բնակի, այլ՝ հեզ եւ խոնարհ սիրտեր: Այս մասին Քրիստոս կ'ըսէ. «Ես ո՛ւր պէտք է բնակիմ, եթէ ոչ խոնարհ ու հեզ սրտերու մէջ»: Թզենին սկիզբը դառն պտուղ կու տայ, ապա՝ քաղցր պտուղ: Այնպէս ալ քրիստոնեան՝ Աստուծոյ կողմէ տնկուած ծառը, իր պտուղը քաղցրացնելու համար պէտք է այս աշխարհին դառնութիւններուն ու նեղութիւններուն մէջէն անցնի, որովհետեւ այդ ժամանակ է որ կրնայ քաղցր ու համադամ պտուղներ ունենալ: Թզենին երբեք չի պատուաստուիր ուրիշ ծառերու հետ: Այդպէս ալ քրիստոնեան պէտք չէ պատուաստուի ուրիշ ծառերու հետ, այլ միայն պէտք է պատուաստուի իր Տիրոջ հետ. ուրիշ խօսքով՝ իր պտուղները Տիրոջ պէտք է ընծայէ:

Ծառը պտուղ տալու համար պէտք է միշտ ոռոգուի եւ խնամուի: Քրիստոնեաներ այս աշխարհին մէջ կ'ոռոգուին եւ կը խնամուին Աստուածաշունչ մատեանով, աստուածային պատուիրաններով, եկեղեցի յաճախելով եւ Քրիստոսի կեանքը ընդօրինակելով: Ծառը որոշ ժամանակ մը ետք, կը կորսնցնէ իր պտուղ տալու ունակութիւնը: Սակայն քրիստոնեան իբրեւ աստուածային ծառ, այս աշխարհի ծառերէն կը տարբերի այս կէտին մէջ: Որովհետեւ քրիստոնեան կոչուած է պտուղ տալու մինչեւ իր երկրաւոր կեանքին վերջին շունչը:

Ս. ՀՈԳԻԻՆ ՊՏՈՒՂԻՆ ԿԱՄ ԱՐԴԻԻՆՔՆԵՐՈՒՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ ՀԵՐԹԱԲԱՐ

Ա) Սէ՛ր: Ինչո՞ւ սէրը առաջին յատկանիշն է: Պատահական չէ, որ Պօղոս առաքեալ առաջին անգամ սէրը թուարկած է, որովհետեւ սէրը այն հիմքն է, որուն վրայ հաստատուած է քրիստոնէական կրօնը: Պօղոս առաքեալ իր միւս նամակներուն մէջ, ինչպէս Ա. Կորնթացիներուն (13.13), Եփեսացիներուն (5.2) եւ Կողոսացիներուն (3.14), սիրոյ առաջնահերթութիւնը յարատեւօրէն շեշտած է:

Աստուածաշունչ Մատեանին սիրոյ սահմանումը շատ կը տարբերի աշխարհի եւ մարդկային մշակոյթի սիրոյ սահմանումէն: Աշխարհի սահմանումով սէրը զգացումի հետ կապուած է, մինչ Ս. Գիրքին պարագային սէրը հիմնուած է ո՛չ թէ մարդուն զգացումին, այլ՝ գործերուն հետ: Աշխարհի սիրոյ

ձեւը փոխադարձաբար է, այսինքն կը սիրեմ, որպէսզի սիրուիմ, մինչ Աստուածաշունչ Մատեանին սորվեցուցած սէրը առանց ակնկալիքի եւ պայմանի է: Օրինակի համար՝ Յիսուս կը պատուիրէ սիրել թշնամին (Մտ 5.44): Իր թշնամին սիրող անձը չ'ակնկալեր, որ իր թշնամին ալ զինք սիրէ, սակայն կը սիրէ, որովհետեւ այդ է սիրելու ճշմարիտ ձեւը:

Յունարէն լեզուն սիրոյ համար բազմաթիւ բառեր ունի, ինչպէս eros-ը, որ սեռական սէրն է, philos-ը, որ եղբայրական սէրն է եւ acabe-ն, որ կատարեալ սէրն է եւ միայն Աստուած կարող է զայն մարդուն տալ: Գաղատացիներուն նամակին 5.22-23 համարներուն մէջ Պօղոս առաքեալին կողմէ օգտագործուած սէրը acabe-ն է: Vine's Expository Dictionary of Old and New Testament words բառարանը, այսպէս կը բացատրէ acabe բառը. «Ազգայէն...կ'արտայայտէ կատարեալ էակին (Աստուծոյ) խոր եւ մշտական սէրը եւ հետաքրքրութիւնը բոլորովին անարժան առարկաներու (այս պարագային մարդոց) նկատմամբ՝ անոնց մէջ զարգացնելով սէրը զայն տուողին (Աստուծոյ) նկատմամբ, որպէսզի անոնք ալ իրենց կարգին օգնեն ուրիշներուն, որպէսզի սէր ունենան Աստուծոյ նկատմամբ» (Իմաստային թարգմանութիւն, W.E. Vine, Vine's Expository Dictionary of Old and New Testament words, Fleming H. Revell, U.S.A., 1981, page 422): Այս բացատրութիւնը կրնանք աւելի լաւ հասկնալ, երբ կարդանք Յովհաննու Աւետարանին 15.9-11 համարները, ուր Քրիստոս կ'ըսէ. «Ինչպէս որ Հայրս զիս սիրեց, նոյն ձեւով ալ ես ձեզ սիրեցի: Մնացէ՛ք իմ սիրոյս մէջ: Եթէ գործադրէ՛ք իմ պատուիրաններս, իմ սիրոյս մէջ մնացած պիտի ըլլաք, ինչպէս որ ես Հօրս պատուիրանները գործադրելով անոր սիրոյն մէջ կը մնամ: Ասոնք ըսի ձեզի, որպէսզի իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ»:

Սէրը քրիստոնեային համար անձնագոհութիւն է, որովհետեւ սիրող քրիստոնեան Յիսուսի օրինակին հետեւելով, ուրիշին կարիքները իր կարիքներէն առաջ կը դասէ: Այս մէկը լաւապէս կը բացայայտէ Ա. Կորնթացիներուն 13.4-7 համարները, ուր կը կարդանք. «Սէր ունեցողը համբերատար կ'ըլլայ եւ քաղցրաբարոյ: Սէր ունեցողը չի նախանձիր, չի գոռոզանար, չի հպարտանար, անպատշաճ վարմունք չ'ունենար, միայն ինքզինք չի մտածեր, բարկութեամբ չի գրգռուիր, շարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չ'ուրախանար, այլ՝ ուրախակից կ'ըլլայ ճշմարտութեան: Սէր ունեցողը միշտ կը զիջի, միշտ կը հաւատայ, միշտ կը յուսայ, միշտ կը համբերէ»: Ակնբախ է, որ այս հատուածին մէջ զգացումի վերաբերող բան մը չկայ, այլ միայն գործ է. զիջիլ, հաւատալ, յուսալ, համբերել, շնախանձիլ: Եւ Սէրը, զոր առաքեալը հատուածին մէջ շարունակական կերպով կը կրկնէ, իրականութեան մէջ քրիստոնեան ինքն է, ի՛ր գործով:

Աստուծոմէ դուրս մարդ չի կրնար կատարելապէս սիրել: Միայն Ս. Հոգիին աշխատանքով է, որ ան կարողութիւնը կ'ունենայ մէկզի դնելու իր եսասիրութիւնն ու մեղաւորութիւնը: Քանի որ Աստուած մարդուն հանդէպ ողորմութիւն

ցուցաբերած է, ան կրնայ ողորմութիւն ցուցաբերել եւս իր նմաններուն հանդէպ: Քանի որ Աստուած իր հանդէպ սէր ցուցաբերած է, ան կրնայ սէր ցուցաբերել ուրիշներուն նկատմամբ եւս: Յովհաննէս առաքեալ իր ընդհանրական առաջին նամակին 4.19-21 համարներուն մէջ կ'ըսէ. «Սիրե՛նք զԱստուած, որովհետեւ նախ ինք մեզ սիրեց: Այն մարդը, որ կ'ըսէ՝ «Ես կը սիրեմ զԱստուած», բայց իր եղբայրը կ'ատէ, ստախօս մըն է: Ով որ չի սիրեր իր եղբայրը՝ որ կը տեսնէ, ինչպէ՛ս կրնայ սիրել զԱստուած՝ որ չի տեսներ: Մինչդեռ Քրիստոսի մեզի տուած պատուէրը սա է.- Ով որ զԱստուած կը սիրէ, պէտք է իր եղբայրն ալ սիրէ»:

Բ) ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ: Ուրախութիւն բառը Նոր Կտակարանին մէջ 60 անգամ յիշուած է: Պօղոս առաքեալին յիշած ուրախութիւն բառը յունարէն Chara բառն է, որ Աստուծոյ պարգեւած բազում շնորհներուն գիտակցութիւնն է մարդուն կողմէ, ինչ որ մարդս յարատեւ ուրախ կը պահէ: Այս ձեւի ուրախութիւնը չի՛ նմանիր ժամանակաւոր ուրախութեան, որ այսօր կայ, իսկ վաղը՝ ոչ: Առաքեալին յիշած ուրախութիւնը տարբեր կացութիւններու ընթացքին մեր ունեցած զգացմունքային հակազդեցութիւնը (emotional reaction) չէ, որ անցողիկ է, այլ անիկա տեւական է եւ հաստատուն հիմք ունի: Աւելի՛ն. անիկա վերաբերմունքի աշխոյժ (active) ընտրութիւն մըն է, զոր մարդը կը կատարէ: Իբրեւ Քրիստոսի հետեւորդ, մարդ կ'ուրախանայ, որովհետեւ Աստուածորդիով ան փրկութեան կ'արժանանայ: Այս բացատրութիւնը լաւապէս հասկնալու համար պէտք է կարդանք Սաղմոս 71.23-ը, որ կ'ըսէ. «Մինչ քեզ (զԱստուած) կը ներբողեմ, պիտի ցնծան շրթներս, պիտի ցնծայ հոգիս՝ որ դուն փրկեցիր»: Այս համարը կը յայտնէ քրիստոնեային Աստուծով ապրած տեւական ուրախութիւնը:

Երբ աշխարհի դժուարութիւնները կը նեղեն մարդը, ան կրնայ հանգստութիւն եւ ուրախութիւն գտնել այն միսթարութեան մէջ, որ միայն Աստուած կարող է տալ, եւ հակառակ իր ապրած կացութեան՝ ուրախ ըլլալ: Այս բացատրութիւնը կարելի է հասկնալ հետեւեալ աստուածաշնչական հատուածներով.-

ա) «Տիրոջ ուրախութիւնը ձեր զօրութիւնն է» (Նե 8.10):

բ) «Ամէն անգամ որ խորհեցայ՝ թէ իյնալու վրայ եմ, քու սէրդ, Տէ՛ր, օգնութեան հասաւ ինձի: Ամէն անգամ որ բազմացան մտահոգութիւններս, մխիթարեցիր եւ հրճուեցուցիր (այսինքն ուրախացուցիր) սիրտս» (Սղ 94.18-19):

գ) «Միշտ ուրախ եղիք Տիրոջմով, դարձեալ կ'ըսեմ՝ ուրախ եղիք» (Փլպ 4.4):

դ) «Մեր աչքերը յառեմք Յիսուսի, մեր հաւատքի հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով, թէ ի՛նչ ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեցամօթը, յանձն առաւ իսաչի վրայ մեռնիլ, եւ Աստուծոյ արթոնի աջ կողմը նստիլ» (Եբր 12.2):

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՀՃԵԱՆ

(Շար. 1)

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

Տ. ՂԵԻՈՆԴ ԱՐՔ. ԶԵՊԵԵԱՆ

Ծնած է 2 Մայիս 1911-ին, Ատաբազար (Պոլսոյ արուարձան): Աւագանի անունն է ժիրայր: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին մէջ: 1921-ին ծնողքին հետ Պոլիս մեկնած է եւ իր ուսումը շարունակած՝ Պոլսոյ Գարակէօզեան Ազգ. Վարժարանին մէջ, ապա երկու տարի յաճախած է Վիէննական Միսիթարեան Վարժարանը:

1930-ին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորաբաց Դպրեվանքը, Անթիլիաս:

Աւարտելով ուսման ընթացքը, 19 Մայիս 1935-ին Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Շահէ Արք. Գասպարեանի:

16 Մայիս 1937-ին, Հոգեգալստեան տօնին, Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Պետրոս Արք. Սարաճեանի, եւ վերակոչուած՝ Տ. ՂԵԻՈՆԴ ԱԲԵՂԱՅ, օծակից ունենալով Տ. Խորէն Աբղ. Բարոյեանը (ապա Խորէն Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ):

8 Հոկտեմբեր 1938-ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է, ձեռամբ Կաթողիկոսական ընդհանուր Փոխանորդ Պետրոս Արք. Սարաճեանի:

1937-1946 վանական պաշտօններ վարած է Կաթողիկոսարանէն ներս: Միաբանական Ընդհ. Ժողովին կողմէ Մայր Տաճարի լուսարարապետ ընտրուած է, միաժամանակ դպրեվանքէն ներս ստանձնելով ուսուցչական ու տեսչական պաշտօններ:

1942-1946 նշանակուած է քարոզիչ Պէյրութի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ եւ ուսուցիչ՝ կարգ մը ազգային վարժարաններու:

19 Մայիս 1946-ին Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է, ձեռամբ Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեանցի:

24 Դեկտեմբեր 1946-ին Հայրապետական Կոնդակով ստանձնած է Կիպրո-

սի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդի պաշտօնը, իսկ 6 Մարտ 1952-ին՝ տեղւոյն Ազգ. Գաւառական Ժողովին կողմէ միաձայնութեամբ Առաջնորդ ընտրուած է նոյն թեմին:

Իր Առաջնորդութեան օրով ամբողջութեամբ վերանորոգուած է Առաջնորդանիստ Ս. Աստուածածին Եկեղեցին, ինչպէս նաեւ Մակարայ Վանքը:

16 Փետրուար 1947-ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ, օծակից ունենալով Տ. Փառէն, Տ. Զարեհ (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), Տ. Դերենիկ, Տ. Խորէն (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ) Ծայրագոյն Վարդապետները:

21 Հոկտեմբեր 1956-ին, Զարեհ Ա. Կաթողիկոս Սրբատառ Կոնդակով Արքութեան պատիւ եւ տիտղոս շնորհած է Դեւոնդ Սրբազանին:

17 Նոյեմբեր 1956-ին ստանձնած է Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդական պաշտօնը, որուն ընթացքին նորանոր շինութիւններով ծաղկեցուցած է թեմին ազգային-եկեղեցական կեանքը:

Ղընէմիէ, Արամօ, Ճեզիրէ ու Քեսապ իր առաջնորդութեան տարիներուն այցելելով, հիմնարկէք կատարած է եկեղեցիներու ու վարժարաններու, որոնք շուտով կառուցուած են, բաւարարելով շրջանի հայութեան հոգեւոր ու կրթական կարիքները:

Իր անձնական ծախսերով, ընտիր սպիտակ մարմարով կառուցել տուած է Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ կեդրոնական Պատարագի Ս. Սեղանը:

Իր օրով հիմնարկէքը կատարուած է Ազգ. Առաջնորդարանին, որուն կառուցումը սկսած է եւ աւարտած՝ Տաթեւ Արք. Սարգիսեանի Առաջնորդութեան շրջանին:

1968-ին, Սրբազանը 11 տարի հովուելէ ետք Բերիոյ Թեմը, իր հրաժարականը ներկայացուցած է, հրաժեշտ տուած Հալէպի եւ մեկնած՝ Մայրավանք:

1969-ին կարճ ժամանակ մը ստանձնելէ ետք Նոր Զուղայի Կաթողիկոսական Փոխանորդութեան պատասխանատուութիւնը, 1970-ին հանգստեան կոչուած է:

Սրբազանը իր կեանքի վերջին երեսնամեակը անցուցած է վանական մթնոլորտին մէջ, համեստ կեանք մը ապրելով:

9 Մարտ 2006-ի վաղ առաւօտեան, 95 տարեկանին փակած է իր աչքերը եւ մահկանացուն կնքած: Վերջին Օծման ու Թաղման կարգը տեղի ունեցած է 10 Մարտ 2006-ին, նախագահութեամբ Արամ Վեհափառ Հայրապետի: Ապա անոր մարմինը ամփոփուած է Կաթողիկոսարանի Զարեհեան Դամբարանի միաբանութեան բաժնին մէջ:

S. ՏԱՃԱՏ ԱՐՔ. ՈՒՐՖԱԼԵԱՆ

Ծնած է 30 Դեկտեմբեր 1919-ին, Պէլլան (Անտիոք): Աւագանի անունն է Մկրտիչ: 1933-ին ծնողքին հետ Գրրըզխան փոխադրուած է եւ 1935-ին աւարտած տեղւոյն Ազգ. Վարժարանը: Նոյն թուականի Հոկտեմբերին ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը: 1940-ին աւարտելով ժառանգաւորացի ընթացքը Սարկաւազ ձեռնադրուած է, ձեռամբ Խազ Արք. Աջապահեանի: Իսկ Ընծայարանի շրջանը աւարտելէ ետք, 24 Մայիս 1942-ին Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Եղիշէ Արք. Կարոյեանի, եւ վերակոչուած՝ S. ՏԱՃԱՏ ԱԲԵՂԱՅ:

Վանական իր կեանքի ընթացքին հետեւեալ պաշտօնները ստանձնած է. մատենադարանապետ, մատակարարապետ, Մեսրոպեան Վարժարանի տեսուչ, ՀԱՍԿ-ի վարչական գործերու վարիչ: Առ ի վարձատրութիւն իր աշխատանքին, 19 Նոյեմբեր 1944-ին Վարդապետական Գաւազան կրելու իշխանութիւն ստացած է, ձեռամբ Եփրեմ Արք. Տոհմունիի:

Այնուհետեւ, Պէլլութի Հ.Բ.Ը.Մ.-ի Դարունի Յակոբեան Աղջկանց բարձրագոյն Նախակրթարանի, Սահակեան Վարժարանի եւ Ս. Քառասնից Մանկանց Ազգ. Նախակրթարանին մէջ աւանդած է կրօնագիտութիւն եւ ազգային պատմութիւն: Նոյն թուականին, Նոր Մարաշի թաղականութեան խնդրանքով՝ Վանական Տնօրէն խորհուրդը զինք Պատուակալ Քարոզիչ կարգած է Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ: 1944-էն սկսեալ դասաւանդած է նաեւ դպրեվանքին մէջ՝ ազգային եւ Ս. Գրոց պատմութիւն, ինչպէս նաեւ քրիստոնէական: 1943-1944 տարեշրջանին, Յիսուսեան Համալսարանին մէջ հետեւած է եկեղեցագիտական դասընթացքներու:

1947-ին Բերիոյ Թեմի Խառն Ժողովին կողմէ նշանակուած է Ճէզիրէի Առաջնորդական Փոխանորդ:

Տաճատ Վրդ. Ուրֆալեան 16 տարի, որպէս Առաջնորդական Փոխանորդ, անխոնջ աշխատանքով հովուած է Սուրիոյ հիւսիս-արեւելեան կողմը գտնուող Ճէզիրէի հայ համայնքը: Իր կարեւորագոյն գործերէն մին եղած է Ազգ. Եփրատ Նախակրթարանը վերածել միջնակարգի, որուն դարպասէն ներս սերունդներ դաստիարակուած են ազգային շունչով եւ Հայաստանի ու հայութեան պատկանելիութեան ջերմ գգացումով: Իր օրով նախակրթարանի ու միջնակարգի շէնքերը նորոգուած են, Փոխանորդարանի շրջափակին ցանկապատումը կատարուած, Ս. Յակոբ Եկեղեցւոյ զանգակատունը կառուցուած, Փոխանորդարանի շէնքին կից գեղակերտ դահլիճ մը կառուցուած, հասութեան երեք խանութներ շինուած եւ վարձու տրուած, նորոգուած են Ռասուլ-Այնի եւ Հասիշէի Ազգային Վարժարաններուն արտաքին պատերը:

14 Հոկտեմբեր 1951-ին Տաճատ Վրդ. Ուրֆալեան Հալէպի Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան

ստացած է, ձեռամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Ջարեհ Եպս. Փայասլեանի:

Իսկ 21 Հոկտեմբեր 1956-ին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Ջարեհ Կաթողիկոսի:

1961-ի Փետրուարին, Ջարեհ Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով Տաճատ Եպս. Ուրֆալեան Արքուիթեան պատիւ եւ տիտղոս ստացած է:

Ջարեհ Ա. Հայրապետի վախճանումէն ետք, երբ Լիբանանի Առաջնորդ Խորէն Արք. Բարոյեան արժանաւորապէս յաջորդած է Ջարեհ Կաթողիկոսին, 14 Յունիս 1963-ին, Տաճատ Արք. Ուրֆալեան Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Գաւառական Ժողովին կողմէ միաձայնութեամբ Լիբանանի Հայոց Առաջնորդ ընտրուած է: Այնուհետեւ մինչեւ իր վախճանումը, 15 տարի հայ եկեղեցականի վայել հաւատարմութեամբ, ծառայասիրութեամբ եւ նուիրումով կատարած է Առաջնորդի մը վերապահուած բոլոր պարտաւորութիւններն ու պարտականութիւնները:

Որպէս թեմակալ Առաջնորդ, իր պաշտօնավարութեան ամբողջ տեւողութեան զօրավիգ կանգնած է հայ դպրոցի ծաղկման ու բարգաւաճման: Ոչ միայն շինարարական աշխատանքներով, այլեւ կրթական ծրագրի եւ մանկավարժական մեթոտիկ ուսմանց մարզերէն ներս հովանաւորած եւ քաջալերած է Ազգային Ուսումնական Խորհուրդի բոլոր նախաձեռնութիւնները: Իր գործունէութեան մէջ մասնաւոր տեղ գրաւած է կրօնական, պետական եւ դիւանագիտական անձնաւորութեանց հետ բարուք յարաբերութեան մշակումը: Բոլորէն սիրուած է իր պարզ եւ սիրալիր վերաբերմունքին համար: Ազգային ժողովականութեան հետ տասնհինգ տարի ներդաշնակ գործակցութեամբ յառաջ տարած է թեմին վարչական-կազմակերպչական գործերը:

Յատկապէս Լիբանանի ներքաղաքական տագնապի օրերուն, եղած է իր ժողովուրդին հետ, քաջարի կեցուածք ցուցաբերած եւ քաջալերած է իր ժողովուրդը, ամոքած՝ անոր ցաւերը եւ փորձած՝ հաւատարմօրէն առաջնորդել իր հօտը «ի վայրի դալարուջ...»:

Իր մահը անակնկալ եղած է: 6 Սեպտեմբեր 1978-ի առաւօտեան, Կաթողիկոսարանի իր սենեակին մէջ սրտի տագնապով անակնկալօրէն աւանդած է իր հոգին:

Վերջին Օծման եւ Թաղմանական կարգը տեղի ունեցած է 9 Սեպտեմբեր 1978-ին, հովանաւորութեամբ Խորէն Ա. Կաթողիկոսի եւ ձեռամբ Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի:

Յետ Թաղմանական ծիսակատարութեանց, Հոգելոյս Տաճատ Արք. Ուրֆալեանի աճիւնները ամփոփուած են Կաթողիկոսարանի Ջարեհեան Դամբարանի միաբանութեան բաժնին մէջ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 16)

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Gabriel Quicke, A Spiritual Discovery of the Christians in the Middle East, Gompel & Svacina, Belgium, c2020 (Բացայայտում մը Միջին Արևելքի քրիստոնեաներու հոգևորութեան)

10 դեկտեմբեր 2023-ին, Հոոմի մէջ, բարեկամական ջերմ եւ երկար զրոյցի մը աւարտին, “A Spiritual Discovery of the Christians in the Middle East” հատորը հեղինակը ինծի նուիրեց՝ ընթերցելու եւ տպաւորութիւններս իրեն փոխանցելու խնդրանքով: Իրեն գրելու կողքին, ՀԱՍԿ-ի էջերով մեր ընթերցողները եւս հաղորդ կը դարձնեմ 127 էջերէ բաղկացած այս հատորին ընդհանուր գիծերուն եւ իւրայատկութեան, որոնք կարելոր նպաստ կը բերեն Միջին Արևելքի քրիստոնէական վկայութեան:

Հեղինակը՝ Հայր Գաբրիէլ Քուիքէ, որ նաեւ արժանացած է Պապին կողմէ շնորհուած “Monsignor” տիտղոսին, պելճիքացի Կաթողիկէ Վարդապետ մըն է եւ 2009-2018-ին եղած է Վատիկանի Միջ-եկեղեցական բաժանմունքի Ուղղափառ եւ Արևելեան Ուղղափառ եկեղեցիներու հետ յարաբերութիւններու քարտուղարը: Այս մարզին մէջ, ի պաշտօնէ գործակցած եւ մտերմացած եմ իր հետ: 2008-2009-ին ան ուսուցած եւ ծառայած է Լիբանանի մէջ, այցելած է Միջին Արևելքի երկիրները եւ մօտէն ճանչցած շրջանի եկեղեցիները: Հոս նաեւ ան մասնագիտացած է ասորերէնի, արաբերէնի եւ իսլամագիտութեան մէջ: Այժմ ան հովուական, ակադեմական ու վարչական պաշտօններ կը վարէ Հոոմի մէջ:

Բացայայտում մը Միջին Արևելքի քրիստոնեաներու հոգևորութեան հատորը ունի հետեւեալ բովանդակութիւնը.

- Նախաբան,
- Քրիստոնէութեան ժամանակագրական տախտակ,
- Վեց գլուխ (Ա. Աշխարհագրական դրուածքը, Բ. Ուղղափառ եւ Արևելեան Ուղղափառ եկեղեցիներու զանազանութիւնն ու բաժանումը, Գ. Հոգևոր աւանդութիւն, Դ. Մարտիրոսներու եկեղեցի, Ե. Քրիստոնեաներու դերը Միջին Արևելքի մէջ, Զ. Արեւմուտքի պատասխանատուութիւնը քրիստոնեաներուն հանդէպ),

- Վերջաբան,
- Եկեղեցիներու ցանկը ըստ անոնց վարդապետութեան,
- Եկեղեցիներու ցանկը ըստ անոնց ծէսին,
- Օգտագործուած աղբիւրներ,
- Հեղինակի կենսագրական:

Նախաբանը կը բացատրէ, թէ հատորը ինչո՞ւ կը կրէ «բացայայտում հոգեւորութեան» եզրը, որ լատիներէն ‘spirare’ (‘to breathe’ – «շնչել») բայէն սերելով անգլերէնի մէջ ‘spirituality’ թարգմանուած է (տես էջ 9)¹: Ապա, կ’ուրուագծէ գիրքին բովանդակութիւնը: Հեղինակը շեշտադրած է հոգեւորութեան կենսականութիւնը, որովհետեւ «Այս գիրքով կը ջանամ Միջին Արեւելքի քրիստոնեաներուն հոգեւորութիւնը պեղել», կը գրէ ան (էջ 10): Նկատողութեան պէտք է առնել, թէ նեղ իմաստով եկեղեցաբանութիւն մը չի ներկայացնէր հատորը, այլ քրիստոնեաներու կեանքին մէջէն եկեղեցիներուն,– թէ՛ նուիրապետական կառոյց եւ թէ՛ Քրիստոսի անունով հաւատացեալներու համատեղում,– հոգեւոր երեսը կը բանայ ընթերցողին:

Առաջին գլուխը,– «Աշխարհագրական դրուածքը»,– կը ներկայացնէ Եգիպտոսի, Լիբանանի, Սուրիոյ, Իսրայէլի, Պաղեստինի, Յորդանանի, Թուրքիոյ, Իրաքի եւ Իրանի քրիստոնեաներուն պատմական արմատները, շրջանէն արտագաղթը եւ նորահաստատ երկիրներու մէջ անոնց դիմագրաւած մարտահրաւէրները:

Երկրորդ գլուխը,– «Ուղղափառ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու զանազանութիւնն ու բաժանումը»,– հաստատելէ ետք, թէ միջ-եկեղեցական շարժումը իր մղիչ ոյժը կը ստանայ Քրիստոսի խնդրանքէն՝ «Կ’աղօթեմ որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս որ դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես եւ ես քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան, որպէսզի աշխարհը հաւատայ, որ դուն ղրկեցիր զիս» (ՅՅ 17.21), կու տայ Արեւելքի ասորի եկեղեցիի, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու (ղպտի, Եթովպացի, էրիթրիացի, հայ [Ս. էջմիածնի Կաթողիկոսութիւն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Երուսաղէմի Պատրիարքութիւն, Կոստանդնուպոլսոյ Պատրիարքութիւն], ասորի, հնդիկ), Ուղղափառ եկեղեցիներու, Արեւելեան կաթողիկէ եկեղեցիներու (մարոնի, քաղղէացի, հայ, ղպտի, ասորի, Եթովպացի, ասորի-մալապար [հնդիկ], ասորի-մալանքարա [հնդիկ], յոյն, այլք) պատմականն ու ներկայ վիճակը՝ իւրաքանչիւրին Հոգեւոր Պետին անուան, հաւատացեալներու թիւին եւ հասցէին նշումով:

Երրորդ գլուխը,– «Հոգեւոր աւանդութիւն»,– առանձին ենթաբաժինով նախ կ’ամփոփէ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին 2 մայիս 1995-ին հրապարակած

¹ Գիտենք, թէ 5-րդ դարուն երբ մեր Ս. Թարգմանիչ վարդապետները Ս. Գիրքը հայերէնի թարգմանեցին, զայն «Աստուածաշունչ» կոչեցին: Ս. Գիրքը Աստուծոյ շունչը կը բերէ մեզի որպէս անսպառ եւ անփոխարինելի հոգեւոր սնունդ:

‘Orientale Lumen’ («Արեւելեան լոյսը») կոնգակը² եւ ապա յաջորդական ենթաբաժիններով՝ «Արեւելեան ականդութեան հոգեւոր ժառանգութիւնը» կը մանրամասնէ հետեւեալ հատուածներով. «Ս. Հոգիին դերակատարութիւնը», «Ս. Հոգիին ‘Եկեղեցւոյ հոգին է’», «Ս. Հոգիին հաւատացեալները ի հաղորդութիւն կը բերէ», «Ս. Հոգիին կենարար է», «Ս. Հոգիին ստեղծագործութիւնը կը վերանորոգէ», «Վանականութիւն»: Իսկ վերջին ենթաբաժինով՝ «Աստուածաբանական ականդութիւններ» կը ներկայացնէ երեք՝ ղպտի-եթովպացի-էրիթրիացի, ասորի-հնդիկ եւ հայ ականդութիւնները: Օրինակ, Հայ եկեղեցւոյ աստուածաբանական ականդութեան յատկացուած էջերուն մէջ կը խօսի Ս. Մեսրոպ Մաշտոցի, Հայ Գիրերու Գիւտի, Աստուածաշունչի եւ Եկեղեցւոյ հայրերու հայերէն թարգմանութեան, Ս. Ներսէս Շնորհալիի եւ Ս. Գրիգոր Նարեկացիի մասին, նշելով, թէ 12 ապրիլ 2015-ին Ֆրանսիա Պապը Ս. Գրիգոր Նարեկացիին դասեց Եկեղեցւոյ 36 «Տիեզերական վարդապետներու» կարգին:

Զորրորդ գլուխը,՝ «Մարտիրոսներու եկեղեցի»,՝ կը սկսի պատմական ակնարկով՝ «Առաջին դարու հաւատքի վկաները», ուր երկու սուրբեր կը յիշատակէ՝ Ս. Ինգնատիոս Անտիոքացի, որ գրած է «Ես որպէս ցորենահատիկ պիտի աղացուիմ գազաններուն կողմէ, որպէսզի անարատ հաց ըլլամ Քրիստոսի համար» եւ Ս. Տերտուղիանոս, որ գրած է «Մարտիրոսներու արիւնը Եկեղեցւոյ սերմն է», ապա կը կեդրոնանայ հաւաքական մարտիրոսութեան վրայ եւ «20-րդ դարու ցեղասպանութիւնները» գլխակարգումով լուսարձակի տակ կը բերէ «Հայոց Յեղասպանութիւնը» եւ «Ասորիներու (եւ քաղղէացիներու) ցեղասպանութիւնը», եւ կը փակէ «Արեան միջ-եկեղեցական վկայութիւն»-ով՝ անդրադառնալով մեր օրերուն Միջին Արեւելքի իսլամական արմատականութեան գործած սպանդներուն: «Հայոց Յեղասպանութիւնը» ենթաբաժինէն կը մէջբերեմ կարեւոր տեղեկութիւն մը. «Հայկական հարց»-ին մէջ Վատիկանի ունեցած դերը լաւապէս հասկնալու համար, պէտք է սերտեմք 19-րդ դարու աւարտի եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան պատմութիւնը: Ֆլաման Յիսուսեան մը՝ Ճորճ Ռուսսէն ռահվիրայի աշխատանք տարած է այս մարզին մէջ: Ան Վատիկանի արխիւները գիտականօրէն հետախուզելով Հայոց Յեղասպանութեան առնչուած նիւթերը հրատարակած է: Այս աշխատանքին շնորհիւ, աւելի լաւ գաղափար մը կ’ունենանք Սուրբ Աթոռի դերակատարութեան մասին: Տե՛ս Georges Ruysse, *La questione armena. Vol. 1-7. Documenti dell’archivio segreto vaticano (ASV), Valore Italiano, Lilanme, Roma, 2013-2015* եւ Georges Ruysse, *De Hellige Stoel en de Armeense genocide, in Werk voor het Oosten 274 (2015)*» (էջ 63-64): «Արեան միջ-եկեղե-

² Հատորը առատ մէջբերումներ ունի Պապերու կոնգակներէն ու քարոզներէն եւ այլ եկեղեցապետներու ու Պապերու փոխ-այցելութիւններու ընթացքին արտասանուած ողջոյնի խօսքերէն եւ ստորագրուած համատեղ յայտարարութիւններէն:

ցական վկայություն» ենթաբաժինին մէջ կը կարդանք. «Այսօր 196 երկիրներու մէջ 300 միլիոն քրիստոնեաներ հալածանքի ենթակայ են» (էջ 71):

Հինգերորդ գլուխը,- «Քրիստոնեաներու դերը Միջին Արեւելքի մէջ», - կը բացուի «Միջ-եկեղեցական յարաբերություններ. Կապերու ամրապնդում քրիստոնեաներու միջեւ»-ով, որ ունի երկու ենթաբաժին՝ «10-24 Հոկտեմբեր 2010-ին գումարուած Միջին Արեւելքի մասնաւոր սինոտը» եւ «Ֆրանսիա Պապի միջ-եկեղեցական դերակատարությունը», ուր կը վերլուծէ «Միասին քալել, միասին աղօթել եւ միասին գործել» Պապական կոչը: Ապա, «Միջ-կրօնական երկխօսություն. Կապերու ամրապնդում իսլամ հաւատացեալներու հետ» ենթաբաժինը, ուր պատմական ենթահոդին կը յաջորդեն «Ընդլայնակէս պատճառներ» ու «Հանդիպումի հոգեւորությունը» ենթաբաժինները եւ կը փակուի «Արաբ վերածնունդը»-ով:

Վեցերորդ գլուխը,- «Արեւմուտքի պատասխանատուները քրիստոնեաներուն հանդէպ», - ունի «Քրիստոնեաներու հիւրընկալ ոգին», «Արեւելեան աղօթական կեանքի ճոխությունը» եւ «Զօրակցական արտայայտություններ» ենթաբաժինները: Վերջինը նաեւ կը ներառէ ակնարկ մը կարգ մը Քրիստոնէական բարեսիրական կազմակերպություններու ներկայիս կատարած աշխատանքներուն: Հոս հեղինակը կը յիշէ ծագումով Հայ սուրբ մը՝ Ս. Սերվաս (Saint Servaas), որ Պելճիքայի Լիմպուրկ (Limburg) նահանգի Թոնկերըն (Tongeren) քաղաքին մէջ մեծարուած է:

Վերջաբանը Եգիպտոսի, Իրաքի, Սուրիոյ եւ Լիբանանի ժամանակակից խմորումները կ'ամփոփէ, կը հարցադրէ «Նոր ապագայի յոյս կա՞յ» եւ կ'եզրափակէ «Նոր արշալոյս»-ով, ուր կը մէջբերէ Օգոստինոս Հայրապետի հետեւեալ յուսատու խօսքը. «Այսօր մեր Փրկիչը ծնաւ, եւ այս իսկ պատճառաւ ճշմարիտ արեգակը ծագեցաւ ամբողջ աշխարհին համար: Աստուած մարդացաւ, որպէսզի մարդը աստուածանայ»: Ահաւասի՛կ քրիստոնէական վկայութեան ոյժականությունը՝ մանաւանդ Ս. Ծնունդի եւ Աստուածայայտնութեան տօնը կանխող այս օրերուն:

Այժմէական է «Բացայայտում մը Միջին Արեւելքի քրիստոնեաներու հոգեւորութեան» հատորը, որ հակառակ շրջանին մէջ մեր հետզհետէ նօսրացող թուաքանակին, գոյատեւելու յոյս կը ներշնչէ մեզի, որովհետեւ կը հաւատանք, թէ «Աստուծոյ Հոգին է որ կեանք կու տայ. մարդս բան մը չի կրնար ընել» (Յճ 6.63):

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՒՄԷՋԵԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

**ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ*
THEOSOPHIA**

**ԱՍՏՈՒԱԾԱՐԴԱՐԱՅՈՒՄ
THEODICY**

5. Հարցի անլուծելիությունը

Զուլիցերիացի բողոքական աստուածաբան եւ բարեկարգիչ Կառլ Բարթ²⁵ (Karl Barth), աստուածարդարացման (Theodicy) հարցը կը նկատէ անլուծելի եւ իր տեսակէտով, մարդիկ իրաւունք չունին զԱստուած մեղադրելու: Նոյն-ինքն Բարթի բառերով՝ «Չարը անհնարին հնարաւորութիւնն է»²⁶:

Գերման փիլիսոփայ Ի. Կանտ (Immanuel Kant) աստուածարդարացումը կը հասկնայ, որպէս աշխարհի սկզբնապատճառը հանդիսացող գերագոյն իմաստութեան (Աստուծոյ) արդարացումը, ընդդէմ այն արդար մեղադրանքին, որ բանականութիւնը կը բարձրացնէ անոր (գերագոյն իմաստութեան, որ է ինքը՝ Աստուած) դէմ»:

Կանտ եւս կը թեքի դէպի այս հարցի անլուծելիութեան: Կանտի համա-

* «Աստուածիմաստութիւն – Theosophia».- Ընդհանուր վերնագիրն է յօդուածաշարքի մը, որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ ՀԱՍԿին մէջ: Այս թիւով՝ Աստուածարդարացման (Theodicy) մասին, որպէս յօդուածի շարունակութիւն եւ ամբողջացում ՀԱՍԿի նախորդ թիւին:

²⁵ **Կառլ Բարթ** (Karl Barth, 1886 – 1968 թ.)- Զուլիցերիացի ժամանակակից բողոքական յայտնի աստուածաբան, Էկումենեան շարժումի ջատագով, եկեղեցւոյ բարեկարգիչ, աստուածաբանութեան դասախօս՝ Գերմանիոյ Գէթինգէն (Göttingen), Մինստեր (Münster) եւ Բոնն (Bonn) քաղաքներու համալսարաններուն մէջ: Հիմնադիր՝ «Դիալեկտիքական Աստուածաբանութեան» (Dialectical Theology կամ Neo-orthodoxy) ուղղութեան եւ հեղինակը (անաւարտ մնացած) «Եկեղեցական Դաւանաբանութիւն» (գերմ. բնագիր՝ Kirchliche Dogmatik, անգլ.՝ Church Dogmatics) 13 հատորնոց երկին: Հեղինակ է բազմաթիւ այլ երկերու: (1933 թուականէն ետք, ընդդիմադիր Հիտլերի նացիստական - Nazism – բռնապետութեան: Եղած է «Բարմենի յայտարարութեան» - Barmen Declaration - խմբագիր, որմէ ետք իրեն կարգիլէն խօսքն ու քարոզը: Այնուհետեւ կը լքէ Գերմանիան ու կը հաստատուի Զուլիցերիա:)

²⁶ **Կառլ Բարթի** նշանաւոր տարօրինակ կամ յարակերպ (paradoxical) մէջբերումի գերմ. բնագիրն է՝ *Das Böse ist die "unmögliche Möglichkeit"*:

ձայն, բոլոր աստուածարդարացման փիլիսոփայական փորձերը ընդմիջտ ձախողութեան դատապարտուած են, որովհետեւ մարդկային բանականութիւնը շատ սահմանափակ է եւ երբեք չի կրնար թափանցել բնազանցական մտահայեցողութեան մէջ:

Աստուածարդարացման հարցի անլուծելիութեան հարցով, նոյնանման տեսակէտներ ունին նաեւ ժամանակակից բազմաթիւ աստուածաբաններ: Ազնիւ ու յոյժ նախանձախնդիր աստուածաբանութիւնը պէտք է ընդունի, որ ցաւի ու տառապանքի իմաստի հարցը կարելի չէ առնչել Աստուծոյ հետ եւ յստակ պատասխան մը չի կրնար ունենալ: Հակառակ այս իրողութեան, եթէ փորձուի աստուածարդարացման պատասխան մը գտնել, կրնան միայն «ցնորական ցոլացումներ» յառաջանալ²⁷:

Ուրեմն աստուածարդարացման հարցը կը մնայ անլուծելի, որմէ Աստուծոյ գոյութեան մասին կրնան որոշ կասկածներ յառաջանալ:

6. Հաւատ՞ փոխան բանական լուծումի

Զուիցերիացի կաթոլիկ աստուածաբան Հ. Կիւնգ²⁸ (Hans Küng) այս հարցի հանդէպ այն տեսակէտը կը պաշտպանէ, որ մարդ արարածը տառապանքով կը ծնի եւ կ'ապրի, թէ ինչո՞ւ այսպէս է եւ ինչո՞ւ առանց տառապանքի կեանք մը աւելի իմաստալի չէ, կարելի չէ բանականութեամբ բացատրել եւ լուծում մը գտնել... ասոր փոխարէն մարդ Աստուծոյ հանդէպ վստահութիւն եւ հաւատք պէտք է ունենայ: Հակառակ «չարի ու տառապանքի հարցերը բացայայտելու անկարողութեան», Աստուծոյ հանդէպ անվերապահ ու լիակատար հաւատքի ու վստահութեան մէջ, «տառապող ու յուսահատ մարդը» պիտի գտնէ իր վերջնական հանգստութիւնը: Այսպիսով, թէեւ տառապանքը չի բացատրուիր, սակայն կարելի է զայն տանելի դարձնել:²⁹

²⁷ Գաղափարը եւ մէջբերումը քաղուած է գերման ժամանակակից բողոքական աստուածաբան Ալֆրէտ Բուսէն (Alfred Buis, *1947 թ.), որ հեղինակ է բազմաթիւ գրութիւններու:

²⁸ Հանս Կիւնգ (Hans Küng, 1928 – 2021 թ.)- Զուիցերիացի ժամանակակից կաթոլիկ քահանայ եւ աստուածաբան: Աստուածաբանութեան դասախօս էր Գերմանիոյ Տիւբինգէն (Tübingen) քաղաքի համալսարանին մէջ: Եղած է նախաձեռնարկողը «Աշխարհի բարոյագիտութիւն» (գերմ.՝ Weltethos, անգլ.՝ Global Ethic) նախագծի եւ նախագահը նոյնանուն հիմնադրամին: Փորձած է բարեկարգել Կաթոլիկ եկեղեցին (օրինակ՝ պապի անսխալականութիւնը, կուսակրօնութիւնը, կիներու ձեռնադրութիւնը, եւ այլն...): Հեղինակ է բազմաթիւ երկերու, որոնք թարգմանուած են տարբեր լեզուներու: Կաթոլիկ եկեղեցւոյ հանդէպ ունեցած հակասական գաղափարները եւ իր «Աստուած գոյութիւն ունի՞» (գերմ. բնագիր՝ Existiert Gott?, անգլ.՝ Does God exist?) գիրքը լուրջ պատժաւորներ էին, որ ան զրկուի ուսուցման արտօնութենէն:

²⁹ Մէջբերումը եւ գաղափարը քաղուած են Հանս Կիւնգի «Քրիստոնէայ ըլլալ» (1974 թ., գերմ. բնագիր՝ Christ sein, անգլ.՝ On Being a Christian) երկէն, հոն՝ էջ 528 եւ 357:

Աստուծոյ հանդէպ հաւատքի ու վստահութեան այս տէսակէտը, սակայն, փոխանակ լուծելու աստուածարդարացման հարցը, այսինքն երկու պնդումներու միջեւ եղած տրամաբանական հակասութեան խնդիրը, ան կը ներկայացնէ Աստուծոյ եւ իր հաւատացեալին միջեւ եղող փոխ-յարաբերութեան հարցը, որ պէտք է հիմնուի հաւատքի ու վստահութեան վրայ:

Գերման աստուածաբան-փիլիսոփայ Ա. Կրայնէր³⁰ (Armin Kreiner) եւ ուրիշներ հակոտնեայ տեսակէտ մը կը պաշտպանեն: Անոնց համաձայն, անհեթեթ է այն գաղափարը, որ մարդոց համար «աւելի լաւ է հրաժարիլ՝ բանական վերահսկողութենէն եւ անոր փոխարէնը վստահիլ՝ աստուծային յայտնութեան»: Կրայնէր, իր գլխաւոր երկին մէջ տակաւին կ'եզրակացնէ, որ «պատասխանատուութեան բանական չափանիշերէն գիտակցաբար հրաժարումը, չի սրբացներ հաւատքի հնազանդութիւնը, այլ զայն կ'անարգէ, որպէս կոյր խաւարամտութիւն»³¹ (Obscurantism):³²

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Աստուածարդարացման (Theodicy) վերոյիշեալ լուծումները քննարկելէ ու քննադատելէ ետք (Կանտի «քննել եւ դատել» իմաստով), կարելի է անոնցմէ որոշ եզրակացութիւններ բացայայտել, մանաւանդ վերանայիլ աստուածային գլխաւոր յատկանիշներէն երեքը, Աստուծոյ ամենագէտ (ամենաիմաստուն), ամենակարող (ամենազօր, ամենակալ) ու ամենաբարի ըլլալը:

Աստուածարդարացման ճախողութեան ու հարցի անլուծելիութեան պարագային, կը յառաջանայ անաստուածութեան եզրակացութիւնը, հարցական դարձնելով Աստուծոյ գոյութիւնը: Այս գաղափարը աւելի տարածուեցաւ 18-րդ դարու երկրորդ կէսէն սկսեալ:

³⁰ Արմին Կրայնէր (Armin Kreiner, *1954 թ.)- Գերման աստուածաբան-փիլիսոփայ: Աստուածաբանութեան դասախօս՝ Գերմանիոյ Մայնց (Mainz) եւ Մինխէն (München) քաղաքներու համալսարաններուն մէջ: Իր գլխաւոր երկն է «Աստուած տառապանքի մէջ» (2000 թ., գերմ. բնագիր՝ Gott im Leid), ուր ան կը քննարկէ նաեւ աստուածարդարացման հարցը:

³¹ Խաւարամտութիւն (անգլ.՝ Obscurantism, գերմ.՝ Obskurantismus).- Կազմուած «խաւար» եւ «միտք» արմատներէն: Եւրոպական լեզուներու մէջ, ան ծագում առած է լատիներէն՝ obscuritas եզրոյթէն: Կը նշանակէ՝ լուսաւորութեան եւ յառաջդիմութեան դէմ եղող գաղափարներով ուղղութիւն մը: Իսկ այս ուղղութեան մէջ գտնուող անձը կը կոչուի՝ «խաւարամիտ» (Obscurant):

Փոխաբերաբար նաեւ՝ սոցիտութիւն, յետադիմութիւն:

³² Երկու մէջբերումները քաղուած են գերման աստուածաբան-փիլիսոփայ Ա. Կրայնէրի «Աստուած տառապանքի մէջ» (2000 թ., գերմ. բնագիր՝ Gott im Leid) երկէն, էջ 77:

1. Ամենագէտ Աստուած

Աստուծոյ ամենագիտութիւնը (լատ.՝ omniscientia, անգլ.՝ Omniscience, գերմ.՝ Allwissenheit), նշուած է Աստուածաշունչի Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ, բազմաթիւ օրինակներով, որոնցմէ կը յիշենք քանի մը հատ՝

– **Մարգարէութիւն Յոբի** (Hiob, 31/4).- «Միթէ Անիկա իմ ճամբաներս չի՞ տեսներ, ու ամէն քայլերս չի՞ համրեր»:

– **Մարգարէութիւն Եսայեայ** (Jesaia, 42/9).- «Ահա, ինչ որ ես նախապէս հոշակեցի՝ եղաւ, ու ես նորերը կը հոշակեմ, նախքան անոնց յայտնուիլը, ու ես ձեզի կ'իմացնեմ»:

– **Մարգարէութիւն Դանիէլի** (Daniel, 2/22).- «Նորունկ ու ծածկուած բաները ինք կը յայտնէ, մութի մէջ եղածը գիտէ, ու լոյսը անոր քով կը բնակի»:

– **Մատթէոսի եւ Դուկասի Աւետարաններ** (Matthew, 10 / 30, Luke, 12 / 7).- «Գալով ձեզի, ձեր գլխուն իւրաքանչիւր մազն իսկ համրուած է»:

– **Եբրայեցիներու նամակէն** (Hebrew, 4/13).- «... Եւ չկայ արարած մը, որ Աստուծոյ տեսողութենէն վրիպի: Անիկա պարզ ու յստակ կը տեսնէ ամէն ինչ, իրենց ամբողջ մերկութեամբ»:

Ճանաչականութեան (Gnosticism) համաձայն, մարդը նախատեսուած է, որպէս Աստուծոյ հետ կատարեալ փոխ-յարաբերութիւններու ատակ արարած մը: Սկզբնական մեղքը (Original Sinn), սակայն, Աստուծոյ ստեղծագործութեան յառաջընթացը անկատար դարձնելով, խաթարած է նաեւ Աստուծոյ եւ մարդու փոխ-յարաբերութիւնները: Այս բոլորովին նոր իրավիճակին մէջ, մարդը բնականաբար կը տառապի: Սկզբնական մեղքի հետեւանքով, մարդու եւ Աստուծոյ փոխ-յարաբերութիւնները կը խաթարուին (ինչպէս նշեցինք) եւ մարդը կը ստանայ մեղքին մէջ ապրելու ազատութիւնը:

Այս իմաստով, Աստուծոյ ամենագէտ ըլլալը եթէ մէկ կողմէն կը դառնայ բացարձակ արդարութեան մը աստուածային պատգամը (թէ՛ ասդէնականի եւ թէ՛ անդէնականի մէջ), միւս կողմէն, սակայն, ան բոլորովին յարաբերական կը դառնայ:

2. Ամենակարող Աստուած

Աստուծոյ ամենակարողութիւնը (լատ.՝ omnipotentia, անգլ.՝ Omnipotence, Almightyness, գերմ.՝ Allmacht) եւս նշուած է Աստուածաշունչի Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ, բազմաթիւ օրինակներով, որոնցմէ կը յիշենք քանի մը հատ՝

– **Ա. Մնացորդաց** (1. Chronicle, 29/12).- «...Հարստութիւնը ու փառքը ֆեզմէ է, ու ամենուն իշխողը դուն ես, եւ զօրութիւնը ու կարողութիւնը քու ձեռքիդ մէջ է...»:

– *Մարգարէութիւն Երեմիա* (Jeremia, 32/17).- «Ո՛հ Տէր, անա դուն քու մեծ գործունակութիւնդ երկինքը ու երկիրը ստեղծեցիր. բնաւ բան մը քեզի համար դժուար չէ»:

– *Մարգարէութիւն Դանիէլի* (Daniel, 2/20).- «... վասնզի իմաստութիւնն ու գործունակը անորն են: Եւ ատեններն ու ժամանակները փոխողը, թագաւորներ վերցնողն ու դնողը անիկա է...»:

– *Հռոմայեցիներու նամակէն* (Romans, 1/20).- «Արդարեւ, աշխարհի ստեղծումէն ի վեր, ստեղծագործութեան ընդմէջէն, կ'իմացուին ու կը տեսնուին Աստուծոյ աներեւոյթ յատկանիշները, այսինքն՝ մշտնջենական գործունակը եւ անոր աստուածութիւնը»:

Նաեւ Աստուծոյ ամենակարողութիւնը (ամենագորութիւնը) յարաբերական կը դարձնեն երկապաշտական (Dualism) աշխարհայեացք³³ ունեցող բոլոր ուղղութիւնները, ինչպէս նաեւ հետեւեալ այլ պատճառները.-

• **Մարդոց կամքի ազատութիւնը**

Եթէ Աստուած մարդոց կամքի ազատութիւն (Free Will) շնորհած է, որ անոնք ընտրութեան կարելիութիւն ունենան եւ իրենց պատասխանատուութեան տակ, ինչ որ ուզեն, ընեն... ասիկա, սակայն, Աստուծոյ ամենակարողութիւնը յարաբերական կը դարձնէ:

Անգլիացի մտնեմատիկոս ու փիլիսոփայ Բ. Ռասէլ³⁴ (Bertrand Russell), իր Աստուածիմաստութեան առնչուած «Ինչո՞ւ ես քրիստոնէայ մը չեմ» (անգլ. բնագիր՝ Why I am not a Christian?) երկին մէջ կ'ենթադրէ, որ եթէ նախապէս Աստուած իմանար թէ մարդիկ իրենց կամքի ազատութեամբ ի՞նչ մեղքեր պիտի գործեն, նմանօրինակ մարդու կերպարի ստեղծման համար ու անոր արարքներու բոլոր հետեւանքներուն համար, արդեօք Աստուած ինքզինք պատասխանատու պիտի նկատէ՞ր:³⁵

Աւստրալիացի բարոյագէտ փիլիսոփայ Զ. Լ. Մաքի³⁶ (John Leslie Mackie),

³³ **Երկապաշտական** (Dualism) աշխարհայեացք ունին օրինակ հին պարսկական *Զրադաշտականութիւնը* (Zoroastrianism) եւ անկէ յառաջացած *Մանիքէութիւնը* (Manicæism):

³⁴ **Բ. Ռասէլ** (Bertrand Russell, 1872 – 1970 թ.)- Անգլիացի փիլիսոփայի մասին տե՛ս էջատակի թիւ 12 ծանօթագրութիւնը:

³⁵ **Գաղափարը** քաղուած է Բ. Ռասէլի «*Ինչո՞ւ ես քրիստոնէայ մը չեմ*» (1927 թ., անգլ. բնագիր՝ "Why I am not a Christian?") երկէն, հոն՝ էջ 40:

³⁶ **Զ. Լ. Մաքի** (John Leslie Mackie, 1917 – 1981 թ.)- Աւստրալիացի նշանաւոր փորձապաշտ փիլիսոփայ. ներկայացուցիչ՝ բարոյական Պայմանագրային տեսութեան (անգլ.՝ Contractarianism, գերմ.՝ Vertragstheorie): Գրած է բազմաթիւ երկեր: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկն է՝ «*Բարոյագիտութիւն*» (1977 թ., անգլ. բնագիր՝ Ethics) իսկ Աստուածիմաստութեան առնչուած գլխաւոր երկն է՝ «Աստուածականութեան հրաշքը» (1982 թ., The Miracle of Theism):

իր Աստուածիմաստութեան առնչուած «Աստուածականութեան հրաշքը» (անգլ. բնագիր՝ The Miracle of Theism) երկին մէջ կ'եզրակացնէ, որ եթէ մարդիկ, առանց արտաքին հանգամանքներու միջամտութեան, ընտրելու ու որոշելու սեփական, ամբողջական ազատութիւնը ունենային, այն ատեն անկարելի պիտի ըլլար գիտնալ, թէ անոնք ո՞ր տարբերակը պիտի ընտրէին կամ ի՞նչ որոշէին: Այս իմաստով, ոչ ոք, նոյնիսկ ամենակարող ու ամենագէտ Աստուած պիտի չկարենար գիտնալ, թէ մարդիկ իրենց ազատութիւնը ինչպէ՞ս պիտի օգտագործէին: Եթէ այդպէս է, բայց Աստուած գոնէ պէտք է իմանար, թէ մարդիկ ատակ են ի՞նչ կամ ինչե՞ր ընելու...: Մաքիի համաձայն, Աստուած մարդը ստեղծելով ու անոր ազատութիւն շնորհելով, նաեւ ա՛յն վտանգը յանձն առաւ, որ մարդը կրնայ շար ըլլալ ու շարութիւնը ընտրել իր որոշումներուն համար:³⁷

• Աստուած բարի է, բայց ոչ ամենակարող

Երբ բարի ու լաւ մարդիկ չարութեան կը հանդիպին, ցաւ ու տառապանք կը զգան, կրնան եզրակացնել, որ թէեւ Աստուած կրնայ բարի ըլլալ, բայց ամենակարող չէ: Մարդ կրնայ գայրանալ եւ հարց տալ թէ «Ինչո՞ւ շարութիւնը ինձի հանդիպեցաւ» կամ «Ինչո՞ւ Աստուած թոյլ կու տայ, որ շարութիւնը գործէ»: Այլ օրինակ մըն է 1915 թուականի Հայկական Յեղասպանութիւնը եւ պատմութեան մէջ յիշուած այլեւայլ շար ու վատ բոլոր պատահարները, պատերազմները եւ աղէտները:

Վերոյիշեալ գաղափարը հետեւեալ հարցադրումը կը յառաջացնէ՝ «Եթէ այդ շարութիւնը կամ այդ աղէտը ինձի հանդիպած է, այժմ ո՞վ կրնայ ինձի օգնել»: Փիլիսոփայ Հանս Եոնասի³⁸ (Hans Jonas) պատասխանը յստակ է.-

Աստուծոյ ամենակարողութիւնը կասկածելի ըլլալով, հարկ է որ Աստուծոյ այդ յատկանիշէն հրաժարուի: Այլ խօսքով, Եոնաս կ'առաջարկէ, որ մենք Աստուծոյ գաղափարը ընդունինք այնպէս, որ ան հրաժարած է աշխարհի իրադարձութիւններուն միջամտելէն եւ հեռացած է մարդոցմէ:

• Աստուած հեռացած է մարդոցմէ

Հ. Եոնասի վերոյիշեալ գաղափարը («Աստուած հեռացած է մարդոցմէ»),

³⁷ Գաղափարը քաղուած է Ջ. Լ. Մաքիի «Աստուածականութեան հրաշքը» (1982 թ., անգլ. բնագիր՝ The Miracle of Theism) երկէն, էջ 279:

³⁸ Հանս Եոնաս (Hans Jonas, 1903 – 1993 թ.)- Գերման-ամերիկացի բարոյագէտ-փիլիսոփայ, ներկայացուցիչ՝ բնապահպանութեան բարոյագիտութեան: Իր հրեական ծագումին պատճառով, 1933 թուականին փախուստ կու տայ Գերմանիայէն: Իր վերջին կայքը պիտի ըլլար, Կանադայէն ետք՝ Ամերիկան: Հեղինակ է բազմաթիւ փիլիսոփայական երկերու:

գերման գրող եւ բողոքական քարոզիչ Վ. Բուշ³⁹ (Wilhelm Busch), տարբեր տեսանկիւնէն կը դիտէ: Վ. Բուշի համաձայն, մանաւանդ արեւմտեան երկիրներու մէջ տարածուած աշխարհիկացումը (Secularization) պատճառ դարձաւ, որ մարդիկ իրենք հեռանան Աստուծմէ, անոր պատուիրաններէն ու ընդհանրապէս կրօնական հաւատքէն: Աստուած կը յարգէ մարդոց այս որոշումը եւ մասամբ, բայց ոչ ամբողջութեամբ, ետ կը քաշուի մարդոցմէ: Աստուած գիտէ սակայն, որ մարդը ատակ է սորվելու եւ օր մը գիտակցելու է, որ ինք Աստուծոյ օգնութեան կարիքը ունի, որու հիման վրայ, ան, աւելի խորաթափանց հասկացողութեամբ՝ նոր որոշում մը կը կայացնէ:

3. Ամենաբարի Աստուած

Աստուծոյ «ամենաբարութիւնը» (լատ.՝ omnis bonitas, անգլ.՝ All-Goodness, All-bountifulness, գերմ.՝ Allgüte) եւս նշուած է Աստուածաշունչի Հին եւ Նոր Կտակարաններուն մէջ, բազմաթիւ օրինակներով, որոնցմէ կը յիշենք քանի մը հատ՝

– **Գիրք Ծննդոց** (Genesis, 1/4).- «... Եւ Աստուած տեսաւ լոյսը, որ բարի է, ու Աստուած լոյսը խաւարէն (շարէն) զատեց»:

– **Ա. Մնացորդաց** (1. Chronicle, 16/34).- «... Գոհացէ՛ք Տիրոջմէ, վասնզի ան բարի է ու անոր ողորմութիւնը՝ յաւիտեան»:

– **Գիրք Սաղմոսաց** (Psalms, 145/7).- «Բո՛ւ մեծ բարեարութեանդ յիշատակը պիտի հրատարակեն եւ բո՛ւ արդարութիւնովդ պիտի ցնծան»:

– **Հռոմայեցիներու նամակէն** (Romans, 2/4).- «Կամ կ'արհամարհե՞ս անոր ամենաբարութիւնը, ներողամտութիւնն ու համբերատարութիւնը, երբ գիտես որ Աստուծոյ բարութիւնն է որ քեզ ապաշխարութեան կը բերէ»:

Աստուծոյ ամենաբարութիւնը, սակայն, կը տարբերի բարութեան մասին մարդկային հասկացութիւններէն: Աստուածաշունչի Հին ու Նոր Կտակարաններուն մէջ եւս կը նշուի այս գաղափարը:

– **Մարգարէութիւն Եսայեայ** (Jesaia, 55/8).- «Իմ խորհուրդները (մտքերը) ձեր խորհուրդները չեն, եւ ձեր համապարհները իմ համապարհները չեն»:

– **Հռոմայեցիներու նամակէն** (Romans, 11/33).- «Որքա՛ն անբնեղի են անոր վեհիւնները (դատաստանները), եւ անզննելի են անոր համապարհները»:

Այս իմաստով, գերման ժամանակակից բարոյագէտ-փիլիսոփայ Նորբերտ

³⁹ Վիլհելմ Բուշ (Wilhelm Busch, 1897 – 1966 թ.).- Գերման գրող եւ բողոքական քարոզիչ: Հեղինակ է աստուածաբանական երկերու: (... զանազանէլ նոյնանուն Վիլհելմ Բուշ – Wilhelm Busch, 1832 – 1908 թ. – գերման երգիծաբան բանաստեղծէն, որ նաեւ նկարիչ ու գիրքերու նկարազարդող մըն էր):

Հէօրստէր (Norbert Hoerster, *1937 թ.) կը պնդէ, որ «Աստուծոյ ամենաբարութիւնը կարելի չէ մարդկային հասկացութիւններով ըմբռնել», որովհետեւ «ամենաբարութեան» մարդկային հասկացութիւնը կամ յղացքը, Աստուծոյ ամենաբարութիւնը կը բնութագրեն միայն անկատար ու անբաւարար կերպով եւ երբեմն սխալական յատկանիշներով: Այլ խօսքով, աստուածարդարացման հարցը պարզապէս հետեւանքն է՝ մարդկային թերի հասկացութիւններուն ու մեկնաբանութիւններուն:

Այս իմաստով եւս Աստուծոյ ամենաբարի ըլլալը յարաբերական կը դառնայ:



Ներկայացնելէ ետք աստուածարդարացման (Theodicy) բնութագրութիւնը, որոշ մանրամասնութեամբ հարցի լուծման կարեւոր տարբերակները եւ անոնց մասին եզրակացութիւնները, որպէս վերջաբան կարելի է յիշել գերման փիլիսոփայ **Կանտի** տարբերակը, որ հարցի անլուծելիութեան կը թեքի: Կանտի համաձայն, բոլոր աստուածարդարացման փիլիսոփայական փորձերը դատապարտուած են ընդմիշտ ձախողութեան, որովհետեւ մարդկային բանականութիւնը շատ սահմանափակ է եւ երբեք չի կրնար թափանցել բնականցական մտահայեցողութեան մէջ:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱԵԱՆ
Գերմանիա

(Շար. 3)



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ



**2024-Ի ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՕՐԱՅՈՅՑԸ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱԻ**


Օրհնութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կաթողիկոսարանի Տպարանէն լոյս տեսաւ 2024 տարուան եկեղեցական գրպանի օրացոյցը:

Օրացոյցը եկեղեցւոյ յարկին ներքեւ գործածուող փոքրագոյն գրքոյկն է եւ «եկեղեցական օրացոյց» անուանակոչուած է, որովհետեւ կը բովանդակէ մեր եկեղեցւոյ տօներն ու ամէնօրեայ հոգեպարար արարողութիւններու ընթացքին երգուելիք շարականները, Ս. Գիրքի ընթերցուածները, սաղմոսներն ու աղօթքները եւ ծիսական այլ մանրամասնութիւններ:

Եկեղեցական օրացոյցի վերջաւորութեան զետեղուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ Միաբանութեան եւ Դպրեվանքի ուսանողութեան անուանացանկերը, Թեմերը ու անոնց հասցէակապերը, Կաթողիկոսարանի վարչական կառոյցին մաս կազմող մարմիններու պատկերը, Դպրեվանքի ուսուցչական կազմին եւ Կաթողիկոսարանի ու Դպրեվանքի պաշտօնէութեան անուանացանկը:

Նշենք, որ եկեղեցական օրացոյցը պատրաստեց՝ Հոգշ. Տ. Պսակ Վրդ. Թէփիրճեան:

Քաջալերելի է, որ իւրաքանչիւր Հայ ընտանիք ունենայ այս օրացոյցը, իբրեւ ուղեցոյց իր հոգեւոր կեանքին:



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ՎԱՍՆ ՈՒՂԻՂ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՄԱՔՈՒՐ ՎԱՐՈՒՑ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ» ԳԻՐՔԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի եւ Երեւանի «Անկիւնաքար» հրատարակչատուններէն լոյս տեսած է Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեանի աշխատութիւնը՝ «Ս. Գրիգոր Նարեկացի Բան Խրատու Վասն Ուղիղ Հաւատոյ եւ Մաքուր Վարուց Առաքինութեան» - «Խրատ Ուղիղ Հաւատքի եւ Առաքինի Մաքուր Վարքի» - “St. Gregory of Narek Instruction on the Orthodox Faith and Virtuous and Pure Life” վերնագրով:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեամբ իրականացած այս հրատարակութիւնը ձօնուած է Ֆրանչիսկոս Պապին՝ յերախտագիտութիւն 2015 թուականին Ս. Գրիգոր Նարեկացին «Եկեղեցոյ Տիեզերական Վարդապետ» հռչակելուն:

Երկլեզու այս գիրքը՝ հայերէն եւ անգլերէն, կը ներկայացնէ սուրբ վարդապետ՝ Մենաւոր Գրիգորի եւ Երանաւէտ Ճգնաւորի «Խրատ»ը եւ «Խրատ»ին քննական մօտեցումն ու աշխատութեան եզրակացութիւնը:

Ներածականին մէջ հեղինակը կը գրէ, որ Նարեկացիին «Խրատ»ը իր յատուկ տեղը ունի Հայ եկեղեցոյ խրատաբանական գրականութեան մէջ, որովհետեւ կը պարզաբանէ ուղղափառ հաւատքը, կը մանրամասնէ Ընդհանրական եկեղեցոյ վարդապետութեան կենսական երեսները, կ'ընդգծէ ուղղափառ հաւատքի եւ առաքինի գործերու փոխառնչութիւնը՝ որպէս քրիստոնէական կեանքի պտղաբերումին ամբողջացուցիչ տարր, կը վերահաստատէ մարդ արարածին բարոյական էակ ըլլալն ու այսպիսով աստուածահաճոյ եւ քրիստոսատիպ կեանք ապրելու կարողութիւնը եւ կ'ուրուագծէ հինգ զգայարաններուն գործածութեան կերպը՝ որպէս նախապայման Քրիստոսի պարգեւած փառքի ժառանգութեան: Հեղինակը կը նշէ նաեւ, որ «Խրատ»ը կը պահէ իր այժմէականութիւնը եւ որպէս ուղեցոյց կրնայ ծառայել աստուածահաճոյ կենցաղավարութեան ձգտողներուն համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**ԱՐԱՄ Ա. ԿԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՌԱՖԱՅԷԼ ՊԵՏՐՈՍ ԻԱ.
ՀՈԳԵՒՈՐ ՏԻՐՈՋ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր 2023-ին, Հայ Կաթողիկե եկեղեցւոյ Պետ՝ Ռաֆայել Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը Մայրավանք այցելելով հանդիպում ունեցաւ Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Հանդիպման ընթացքին քննարկումի նիւթ դարձան Վատիկանի մէջ վերջերս տեղի ունեցած «Սինոտալիթ»-ի նուիրուած Կաթողիկե եկեղեցւոյ եպիսկոպոսաց համագումարը, նոյն օրերուն Հռոմի մէջ կայացած Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850 ամեակին նուիրուած գիտաժողովը, Հայաստան ապաստանած Արցախի գաղթականներու օժանդակութեան հարցը եւ Լիբանանի այժմու կացութեան առնչուած խնդիրներ:

Հոգեւոր Տիրոջ կ'ընկերանային Միաբան հայրեր, իսկ Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան, Կաթողիկոսարանի մատենադարանապետ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան եւ Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ Կաթողիկոսարանի միջ-կրօնական յարաբերութեանց պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:



ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՇՆՈՐՀԱԲՈՐԱԿԱՆ ԱՅՑԸ ՀՈԳԵԻՈՐ ՏԻՐՈՋ

Չորեքշաբթի, 13 Դեկտեմբեր 2023-ի յետմիջօրեին, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Տէր Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տիրոջ, Հայ Կաթողիկէ Պատրիարքարանին մէջ, ընկերակցութեամբ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմեզեանի, «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեանի, Տեղեկատուական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանի եւ Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանի:

Ամենապատիւ Հոգեւոր Տէրը եղբայրական ջերմ ընդունելութեամբ դիմաւորեց Վեհափառ Հայրապետը, ներկայութեամբ Պէյրութի Թեմի Ընդհ. Փոխանորդ՝ Գերպ. Գաբրիէլ Թ.Ծ.Վ. Սուրատեանի, Ամմանի եւ Երուսաղէմի էքզարք՝ Գերպ. Նարեկ Թ.Ծ.Վ. Նաամոյեանի, Լրատուական գրասենեակի պատասխանատու, Այնճարի եւ Պուրճ Համուտի Ժողովրդապետ՝ Դոկտ. Գերյ. Մեսրոպ Ծ.Վ. Թօփալեանի, Գերյ. Նարեկ Ծ.Վ. Մոյսեանի, Հայր Արամ Վ. Աբրահամեանի, Հայր Կարապետ Վ. Գլընճեանի, Տ. Կարապետ Քիւյ. Թաղէոսեանի եւ Հայ Կաթողիկէ լրատուական գրասենեակի գործակիցներուն:

Եղբայրական սիրալիր մթնոլորտի մը մէջ տեղի ունեցաւ հանդիպումը, որուն ընթացքին Վեհափառ Հայրապետը նախ իր շնորհաւորանքները փոխանցեց Հոգեւոր Տիրոջ քահանայական ձեռնադրութեան 50-ամեայ յոբելեանին առիթով՝ վերյիշելով իրենց անցեալի յուշերը եւ առաջին հանդիպումը (Լոս Անճելոս, 1995), ապա իր շնորհակալութիւնը յայտնեց ջերմ ընդունելութեան համար:

Իր կարգին, Ամենապատիւ Հոգեւոր Տէրը խօսք առաւ եւ ողջունեց



Նորին Սրբութիւնը՝ անոր շնորհակալութիւն յայտնելով շնորհաւորական խօսքերուն համար՝ շեշտելով երկու քոյր եկեղեցիներուն սերտ կապերու անհրաժեշտութիւնն ու զանոնք աւելի եւս ամրապնդելու միջոցները:

Հանդիպման ընթացքին արծարծուեցան նաեւ Հայ ժողովուրդն ու լիբանանահայ գաղութը յուզող հարցեր, ինչպէս նաեւ Սփիւռքի ու միջ-համայնքային գործակցութեան առնչուած հարցեր: Անոնք ընդգծեցին ազգային միասնականութիւնը ամրապնդելու հրամայականը, համախմբուելով մեր ազգը ու հայրենիքը միացնող արժէքներուն ու ձգտումներուն շուրջ:

Աւարտին, Ամենապատիւ Հոգեւոր Տէրը եւ Վեհափառ Հայրապետը սրտագին բարեմաղթութիւններ փոխանակեցին Ամանորի ու Ս. Ծննդեան տօներուն առիթով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՑԱԲԱԿՑԻ
ՔՈՒԷՅԹԻ ԵՄԻՐԻՆ ՄԱՅՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ**

Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս ցաւակցագիր յղեց Քուէյթի Էմիր՝ Շէյխ Մըշաալ Ալ-Ահմատ Ալ-Ճապեր Ալ-Սապահին՝ Էմիր Շէյխ Նաուաֆ Ալ-Ահմատ Ալ-Ճապեր Ալ-Սապահի մահուան տխուր առիթով:



Վեհափառ Հայրապետը անձնապէս եւ Քուէյթի Հայ համայնքին անունով յղած իր ցաւակցագիրին մէջ նշած է, թէ ողբացեալ Էմիրին բացակայութեամբ, Քուէյթը եւ արաբական աշխարհը կորսնցուցին իմաստուն իշխան մը, որ խաղաղութեան եւ ժողովուրդներու միջեւ համերաշխութեան ջատագով էր:

Նորին Սրբութիւնը նամակին մէջ յիշած է հանգուցեալ Էմիրին՝ քուէթահայութեան նկատմամբ ցուցաբերած յատուկ հոգատարութիւնը. «Այս առիթով կ'ուզենք Մեր անկեղծ գնահատանքը յայտնել Քուէյթի հայ գաղութին նկատմամբ ողբացեալ Էմիրին ցուցաբերած սիրալիիր հայրական հոգատարութեան եւ գաղութին՝ Քուէյթ երկրի բարիքները վայելելու նախանձախնդրութեան համար»:

Նամակի աւարտին, Նորին Ս. Օծութիւնը իր խորագգաց ցաւակցութիւնները յայտնելով Քուէյթի պետութեան եւ ժողովուրդին՝ մաղթեց, որ Ամենակալը պահպանէ Քուէյթը եւ ողբացեալ Էմիրին յիշատակը միշտ վառ մնայ:

ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

«Սփիւռքի Տարի Բ.- Ինքնաքննութենէ Վերակազմակերպում» այս տարուան Հայրապետական հոշակագրին լոյսին տակ, Արամ Ա. Կաթողիկոս տարուոյս ընթացքին հովուապետական այցելութեամբ եղաւ Յունաստանի, Կիպրոսի, Քուէյթի, Գանատայի ու Լիբանանի Հայոց թեմերէն ներս, նպատակ ունենալով մեր թեմերուն ընդմէջէն Սփիւռքի կեանքը վերակազմակերպել՝ հոգեւոր, մշակութային, կրթական, վարչական ու կազմակերպչական մարզերէն ներս:

ԺԱՄԱՆՈՒՄ

Երկուշաբթի, 6 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս հովուապետական պաշտօնական այցելութեամբ ժամանեց մայրաքաղաք Ուաշինկթըն (Ա.Մ.Ն.), ուր պաշտօնապէս դիմաւորուեցաւ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանի, Լիբանանի դեսպան՝ Ուալէ Հաշէմի, Առաջնորդական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Սահակ Ծ. Վրդ. Եմիշեանի եւ ազգայիններու կողմէ:

Այցելութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը յատկապէս այցելեց Ուաշինկթընի, Ֆիլատելֆիոյ, Նիւ Ճըրզիի, Նիւ Եորքի եւ Քընսթիքըթի գաղութները եւ հանդիպումներ ունեցաւ մեր ժողովուրդի զաւակներուն, երիտասարդներուն եւ թեմական, պետական ու եկեղեցական պատասխանատու մարմիններուն հետ: Նորին Ա. Օծութինը նաեւ դասախօսութիւններ տուաւ համալսարաններէ ներս, ունեցաւ միջ-եկեղեցական հանդիպումներ եւ նախագահեց Արեւելեան, Արեւմտեան ու Գանատայի Հայոց թեմերու Հոգեւոր հայրերու համագումարին:

Յիշեալ այցելութիւններու ընթացքին, Նորին Սրբութեան կ'ընկերանային Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան եւ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան, Ազգ. Կեդրոնական վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատե-

նապետներէն՝ Ստեփան Տէր Պետրոսեան, Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի վարիչ՝ Հոգժ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան եւ Միջեկեղեցական Բաժանմունքի Միջին Արեւելքի եւ քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան պատասխանատու՝ Հոգժ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Չորեքշաբթի, 8 Նոյեմբեր 2023-ին, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, Ուաշինկթընի մէջ գումարուեցաւ Միացեալ Նահանգներու Արեւելեան, Արեւմտեան եւ Գանատայի Հայոց Թեմերու հոգեւորականներու համագումարը՝ մասնակցութեամբ Թեմերու Առաջնորդ սրբազան հայրերուն եւ Հոգեւոր դասուն:

Համագումարին նպատակն էր հաւաքական քննարկումի ենթարկել ընկերաբարոյական կարգ մը հարցեր, որոնք անմիջականօրէն առնչուած էին մեր համայնքներու առօրեայ կեանքին եւ եկեղեցւոյ հոգեւոր առաքելութեան ու ազգային ծառայութեան:

Նորին Սրբութիւնը բացումը կատարելով համագումարին՝ շեշտեց, որ սա եզակի երեւոյթ մըն է, երբ ընդառաջելով իր թելադրութեան, Առաջնորդ սրբազան հայրերուն կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ նման նախաձեռնութիւն մը: Ան յիշեցուց, որ համագումարին նպատակը քննարկուելիք խնդիրներուն լուծում տալ չէ, այլ Աստուածաշունչին, մեր եկեղեցւոյ հայրերու ուսուցումներուն եւ ներկայ իրականութիւններուն լոյսին տակ, միշտ հով-



ուսական տեսանկիւնէ դիտուած, փորձել յստակեցումներ կատարել եւ ապա հաւաքական մօտեցումներ ճշդել:

Համագումարին առաջին բաժինը բաղկացած էր երկու դասախօսութիւններէ, որոնք տրուեցան բարոյագիտական հարցերու դասախօս ու հեղինակ՝ Դոկտ. Վիգէն Կիւրոյեանի եւ դատաւոր՝ Տէյվիտ Էրիքսընի կողմէ: Առաջինը ընկերաբարոյագիտական հայեցակէտով իր վերլուծումը պարզեց կարգ մը խնդիրներու գծով, յատկապէս նկատի ունենալով Միացեալ Նահանգներու պարզած ընկերային միջավայրը: Երկրորդ դասախօսը նոյն հարցերուն մօտեցաւ իրաւական տեսանկիւնէ, իր կարգին ընդգծելով ընկերաբարոյագիտական հարցերուն պարզած բարդ հանգամանքը:

Իւրաքանչիւր դասախօսութենէ ետք, հոգեւորականները իրենց հարցումները ուղղեցին դասախօսներուն: Ապա, Նորին Ս. Օծութիւնը իր եզրափակիչ խօսքը արտասանեց: Ակնարկելով եկեղեցիներու ներկայութեան Միացեալ Նահանգներու մէջ, ան ըսաւ, որ Քրիստոնէութիւնը կը դիմագրաւէ շարք մը լուրջ մարտահրաւէրներ, որոնց կարգին են քրիստոնէութեան աշխարհայնացումը, ամերիկայնացումը եւ համաշխարհայնացման մշակոյթին աճող տիրապետութիւնը: Այս երեւոյթներուն բացասական հետեւեանքները եկեղեցիներու կեանքին, մտածողութեան ու վկայութեան մէջ, հետզհետէ դարձած են տիրական: Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ, որ այս առանցքին վրայ պէտք է դիտուին ընկերաբարոյագիտական հարցերը:

Երեկոյեան չորս դասախօսութիւններ տրուեցան յաջորդաբար Գերայ. Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեանի, ՀոգՂ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեանի, Արժ. Տ. Վահան Քհնյ. Գույումճեանի եւ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Թրթոեանի կողմէ, որոնք լայնօրէն անդրադարձան հետեւեալ հարցերուն՝ վիժում, արհեստական յղացում, սեռային անբնական հակումներ, հոգեբանական խնդիրներ, դիակիզում ու հեշտամահ:

Համագումարը յաջորդաբար վարեցին Գերայ. Տ. Սահակ Մ. Վրդ Եմիշեանն ու Գերայ. Տ. Պօղոս Մ. Վրդ. Թինքճեանը:

Իր եզրափակիչ խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ երեք մարզերու.-

ա) Ընկերաբարոյական հարցերը բազմազան ու այլազան են, առաւել կամ նուազ չափով համամարդկային են եւ բնականաբար ունին տարբեր արտայայտութիւններ՝ տարբեր ընկերութիւններու կեանքէն ներս: Անհրաժեշտ է, որ մեր քննարկումները շարունակուին: Մեր եկեղեցւոյ մօտեցումը պէտք է ըլլայ ո՛չ դաւանական ու տոկմաթիք, այլ՝ հովուական, եւ անհրաժեշտ է հասկացողութիւն ցուցաբերել յատուկ պարագաներու, միշտ մեկնելով եկեղեցւոյ ուսուցումներէն: Այս ծիրէն ներս, հարկ է նկատի ունենալ ճարտարագիտական մարզին մէջ տեղի ունեցող զարգացումներն ու անոնց առնչութիւնը աստուածաբանական սկզբունքներուն ու հոգեւոր արժէքներուն:

բ) Նորին Սրբութիւնը թելադրեց երեք Առաջնորդ սրբազան հայրերուն, որ համագումարին քննարկուած նիւթերը ամփոփեն ու անոնցմէ յառաջացած առաջարկները ներկայացնեն իրեն, որպէսզի յառաջիկայ ամիսներուն Անթիլիասի Մայրավանքին մէջ կայանալիք Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովին ընթացքին յատուկ քննարկումներու ենթարկուին: Ան այս ուղղութեամբ նաեւ թելադրեց Հոգեւոր հայրերուն լուսաբանական յօդուածներ գրելու եւ անհրաժեշտ տեղեկութիւններն ու ուղղութիւնները փոխանցելու մեր ժողովուրդի զաւակներուն, իրենց կեանքին հետ սերտ աղերս ունեցող ընկերաբարոյական հարցերուն մասին:

գ) Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Հոգեւոր հայրերուն առաքելութեան առնչուած շարք մը գործնական հարցերու, շեշտելով ծխային համայնքներու վերաշխուժացման հրամայականը՝ Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներու ծիրէն ներս: Այս առիթով, ան իր ջերմ գնահատանքը յայտնեց Առաջնորդ սրբազան հայրերուն եւ բոլոր հոգեւորականներուն՝ իրենց կատարած նախապատրաստական աշխատանքներուն եւ համագումարին իրենց բերած գործօն մասնակցութեան համար:

Յայտնենք, որ համագումարը սկսաւ առաւօտեան ժամերգութեամբ եւ փակուեցաւ երեկոյեան ժամերգութեամբ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ՆԻՍՏԻ ԲԱՑՈՒՄ՝ ՅԱՏՈՒԿ ԱՂՕԹՔՈՎ

Հինգշաբթի, 9 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու Քոնկրէսի ստորին պալատի՝ Ներկայացուցիչներու Տան կեդրոնատեղին՝ Ուաշինկթընի մէջ, եւ հանդիպում ունեցաւ Ներկայացուցիչներու Տան Նախագահ՝ Մայք Ճոնսընի հետ, ապա՝ Քալիֆորնիան ներկայացնող Երեսփոխան՝ Էտըմ Շիֆի հետ:

Երկու հանդիպումներէն ետք, Վեհափառ Հայրապետը հրաւիրուեցաւ խորհրդարանի սրահ, ուր Խորհրդարանի նախագահին հրաւերով, Նորին Սրբութիւնը աղօթքով բացումը կատարեց Խորհրդարանի նիստին: Իր աղօթքին մէջ ան յիշեց, թէ աւելի քան 100,000 հայորդիներ պարտադրաբար հեռացած են իրենց դարաւոր հայրենիքէն՝ Արցախէն:

Յիշեալ աղօթքէն ետք, Խորհրդարանին կից գտնուող սրահին մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին ի պատիւ տրուած ընդունելութեան ընթացքին, Նորին Ս. Օծութիւնը յաջորդաբար հանդիպումներ ունեցաւ շարք մը խորհրդարանի անդամներուն հետ, որոնց կարգին՝ նախկին Խորհրդարանի նախագահ՝ Նենսի Փելոսիի հետ:



Հանդիպումներու ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Արցախի հարցին, Հայաստանի դիմագրաւած դժուարութիւններուն եւ պաղեստինեան տագնապին:

Աւելցնենք նաեւ, որ Նոյն օրը Նորին Ս. Օծութիւնը ստորեւ կցուած գնահատագիրը ստացաւ Քոնկրէսի Ներկայացուցիչներու Տան խօսնակէն:



Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետին կ'ընկերանային Հիւս. Ամերիկայի երեք Թեմերու Առաջնորդ սրբազան հայրերը, Ազգ. Կեդր. Վարչութեան համատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեանը, յիշեալ երեք Թեմերու Ազգ. Վարչութեանց ղիւանները եւ Ուաշինկթընի Հայ Դատի գրասենեակի տնօրէն՝ Արամ Համբարեանը:

ԱՐԵՒԵԼԵԱՆ, ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նոյն օրը երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս նախագահեց Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած Արեւելեան, Արեւմտեան եւ Գանատայի Հայոց Թեմերու Առաջնորդ սրբազան հայրերու եւ Ազգ. Վարչութեանց ղիւաններու հանդիպումին: Հանդիպման ներկայ էր նաեւ Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համատենապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեան:

Հանդիպումին Վեհափառ Հայրապետը շեշտեց մեր Թեմերը վերակենսաւորելու հրամայականը Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներու ծիրէն ներս: Ապա, այս ուղղութեամբ ան կատարեց շարք մը մատնանշումներ եւ թելադրեց անհրաժեշտ ծրագրումները կատարել:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան միջ-թեմական գործակցութեան, կանոնադրութեան, երիտասարդութեան, քրիստոնէական դաստիարակութեան եւ այլ մարզերու առնչուած հարցեր:




**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ «ՃՈՐՃ ՈՒԱՇԻՆԿԹՆ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՔՆ ՆԵՐՍ**

Ուրբաթ, 10 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս «Ճորճ Ուաշինկթըն» համալսարանին մէջ դասախօսեց «Կրօնքը Միջին Արեւելքի աշխարհաքաղաքական յարաբերութիւններու» ծիրէն ներս նիւթը:

Առաջին հերթին, Նորին Սրբութիւնը ընդհ. գիծերով ներկայացուց ներկայ աշխարհին մէջ հետզհետէ աճող կրօնքին ներկայութիւնը ընկերութեան կեանքէն ներս եւ անոր ունեցած ազդեցութիւնը աշխարհաքաղաքական յարաբերութիւններու մէջ: Ան ըսաւ, որ հին դարերէն սկսեալ կրօնքը ազդու ներկայութիւն դարձած է ազգերու կեանքի զանազան մարզերուն մէջ: Այսօր եւս, կարելի չէ բաժանման գիծեր հաստատել կրօնքին եւ ընդհանրապէս ընկերութեան կեանքին միջեւ: Վեհափառ Հայրապետը նաեւ յայտնեց, որ կրօնքին դերը երբեմն եղած է ոչ-դրական, հակառակ իր բարոյական արժէքներու ուսուցման, որովհետեւ ան շահագործուած է քաղաքական կառոյցներու ու գաղափարախօսական վարդապետութիւններու կողմէ:

Ընդհանուր ակնարկէ ետք, Նորին Ս. Օծութիւնը իր խօսքը կեդրոնացուց միաստուածեան երեք կրօններուն վրայ եւ յատկապէս անդրադարձաւ հետեւեալ կէտերուն.-



1) **ՀԱՒԱՏՔԻ ՈՒ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ:** Արամ Ա. Կաթողիկոս այս ծիրէն ներս նշեց, թէ ճիշդ չէ հաւատքը հեռացնել բանականութենէն, որովհետեւ ան կրնայ սխալ ուղղութեան առաջնորդել հաւատացեալը, միաժամանակ ճիշդ չէ հաւատքը ամբողջութեամբ բանականութեան սահմաններուն մէջ պահել: Հետեւաբար, բանականութիւնն ու հաւատքը գիրար ամբողջացնող յարաբերութիւն պէտք է ունենան, որովհետեւ զանոնք իրարմէ հեռացնելը կրնայ լուրջ անպատեհութիւններ յառաջացնել:

2) **ԿՐՕՆՔ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ:** Աստուծոյ տարբեր իրականութիւններ են, սակայն սերտօրէն իրարու առնչուած: Կրօնքը պէտք է քաղաքական օրակարգերու ու կառոյցներու հետ նոյնացնել, միաժամանակ, կրօնքը կարելի չէ ապափառականացնել, որովհետեւ քաղաքական օրակարգի մաս կազմող հարցերը՝ արդարութիւնը, իսպաղութիւնը, կենսոյոյրտը եւայլն, նաեւ կրօնական տարածքներ ունին, եւ հետեւաբար, անհրաժեշտ է որ անոնք բնաբարկութիւն կրօնքին կողմէ:

3) ԿՐՕՆՔԸ ՄԻԱՑՈՒՑԻՉ ՈՒ ԲԱԺԱՆԱՐԱՐ ԴԵՐ ՈՒՆԻ: Այս երևույթը առնչուած չէ կրօնֆին ինֆնութեան ու առաքելութեան, այլ՝ ոչ-կրօնական կառոյցներու կողմէ անոր շահագործումին: Հետեւաբար, յանախ ինֆզինֆ հակասութեան մէջ տեսնող կրօնֆը անհրաժեշտ է գգոյշ ըլլայ՝ կառչած մնալով իր ուսուցումներուն եւ արժէֆներու համակարգին:

Ապա, Նորին Սրբութիւնը անցնելով իր դասախօսութեան երկրորդ բաժինին, անդրադարձաւ հետեւեալ կէտերուն, մասնաւորաբար Միջին Արեւելքի շրջագծէն ներս.-

ա) ՓՈՒՍԱԴԱՐՁ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ: Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ Միջին Արեւելքի դիմագրաւած տագնապները մեծ չափով արդիւնֆ են փոխադարձ վստահութեան պակասին: «Երբ ինֆզինֆս կը նկատեմ հողին տէրը, որուն վրայ կ'ապրիմ եւ իմ դրացիս՝ իբրեւ գրաւողը այդ նոյն հողին, սա կը նշանակէ, որ դրացիս ներկայութիւնը սպառնալիֆ է ինձի համար եւ՝ փոխադարձաբար»: Դժբախտաբար, այս կացութեան խորացման մէջ կրօնֆին դերը եղած է բացասական: Ինչպէ՞ս կարելի է, որ միաստուածեան կրօնները, միասնական նիգով եւ իրենց ունեցած հաւաքական արժէֆներու լոյսին տակ, կարենան վստահութիւն ստեղծել նոյն հողին վրայ ապրող ժողովուրդներուն միջեւ:

բ) ԱՇԽԱՏԻԼ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ: Խաղաղութիւնն ու արդարութիւնը Աստուածատուր իրաւունֆներ են, եւ հետեւաբար, անոնֆ կրօնֆի առաքելութեան մաս կը կազմեն: Կարելի չէ խաղաղութիւնը պարտադրել. կարելի է գայն հաստատել արդարութեան հիման վրայ: Կրօնֆին դերը այս ուղղութեամբ էական է, շեշտեց Նորին Ս. Օծութիւնը:

գ) ԱՇԽԱՏԻԼ Ի ԽՆԴԻՐ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ: Միջին Արեւելքի ընկերութիւններէն ներս ժողովրդավարական սկըգրունֆները այնֆան ալ ընդունելի չեն եղած: Ոմանֆ կը կարծեն այդ սկըգրունֆներու հաստատումով կրնան ծայրայեղականները իշխանութիւնը ձեռֆ ձգել. ուրիշները կը կարծեն, թէ ժողովրդավարական կարգերը կրնան զսպել ծայրայեղական գաղափարախօսութիւններու տարածումը. տակաւին, ոմանֆ կը կարծեն, թէ ժողովրդավարական սկըգրունֆները Արեւմուտֆի մաս կը կազմեն: Անհրաժեշտ է, որ ժողովրդավարական արժէֆները համապատասխանեն Միջին Արեւելքի իւրայատուկ իրականութիւններուն ու ըմբռնումներուն, այլապէս կրնան հակառակ արդիւնֆը ունենալ:

4) ՊԱՅՔԱՐ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ: Միաստուածեան կրօններու ուսուցումները կը դասապարտեն արմատական շարժումները, որոնֆ կը չարափոխեն կրօնֆին ուսուցումները՝ զանոնֆ նոյնացնելով իրենց

բաղաձայնական օրակարգերուն հետ: Հետևաբար, երեք կրօնները միացեալ նիգերով անհրաժեշտ է, որ ամրապնդեն իրենց հետևորդներու կեանքին մէջ փոխադարձ յարգանքն ու վստահութիւնը, շեշտեց ան:

5) **ՏԱԳՆԱՊՆԵՐԸ ԴԻՄԱԳՐԱԻԵԼ ՄԻԱՍՆԱԲԱՐ:** Այս ուղղութեամբ հրամայական է երեք կրօններուն հասարակաց արժէքները դարձնել չափանիշ մտածելակերպի, գործելակերպի ու կենցաղակերպի, մերժելով այնպիսի մօտեցումներ, որոնք կրնան տագնապներ յառաջացնել ընկերութեան կեանքին ներս: Վերոյիշեալ կէտերուն շուրջ Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ, յանախ օրինակներ տալով եւ միշտ շեշտելով նոյն արմատները ունեցող միաստուածեան երեք կրօններուն միջեւ գործակցութեան հրամայականը:

Իր դասախօսութեան վերջաբանին մէջ, ան ըսաւ, որ եբրայական, քրիստոնէական ու իսլամական կրօններու ներկայացուցիչները իրարու կը հանդիպին միջ-կրօնական հաւաքներու ընթացքին Միջին Արեւելքէն դուրս, ինչո՞ւ անոնք պիտի չհանդիպին Երուսաղէմի մէջ, ուր ունին իրենց սրբազան կեդրոնները. ինչո՞ւ խորհրդանշական նշանակութիւն ունեցող Երուսաղէմի մէջ հանդիպելով եւ հաւաքական յայտարարութիւն կատարելով պիտի չվերանորոգեն հաւաքական արժէքներու ու սկզբունքներու հանդէպ իրենց հաւատարմութիւնը: Ահա՛ մարտահրաւէրը անոնց դիմաց: Արդեօք քաջութիւնը, իմաստութիւնը եւ յանձնառութիւնը ունի՞ն միաստուածեան երեք կրօնները նոր էջ մը բանալու Միջին Արեւելքի պատմութեան մէջ, ամբողջական խաղաղութեան ուղղութեան առաջին գործնական քայլը առնելով:

Յայտնենք, որ դասախօսութեան բացումը եւ փակումը կատարեց համալսարանի Միջազգային Օրէնքի Բաժանմունքի պատասխանատու՝ Դոկտ. Արամ Կաւուրը: Ան ներկայացուց Վեհափառ Հայրապետին ունեցած դերը միջ-եկեղեցական ու միջ-կրօնական ծիրէն ներս ու անոր ակադեմական խորքն ու գործունէութիւնը:

Դասախօսութեան ներկայ էին համալսարանի դասախօսներ, պետական կառոյցներու առնչուած անձեր եւ դեսպանատուներու ներկայացուցիչներ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԵՐ

Պարզ է, որ հովուապետական այցելութեան ընթացքին, Նորին Սրբութիւնը տեսակցութիւններ ունենայ պետական անձնաւորութիւններու հետ, որոնց շարքին՝ Լիբանանի եւ Հայաստանի դեսպանները:

Լիբանանեան դեսպանատան մէջ, Արամ Ա. Կաթողիկոս դիմաւորուեցաւ դեսպան Ուաէլ Հաշեմին կողմէ, ներկայութեամբ դեսպանատան անձնակազ-



մին: Ներկայ էին նաև Ուաշինգթոնի մէջ հաստատուած հայ թէ լիբանանցի անձնաւորութիւններ: Հանդիպումը առիթ մը եղաւ անդրադարձ կատարելու ընդհանրապէս Լիբանանը յուզող հարցերուն, ինչպէս նաև՝ հարաւային Լիբանանի մէջ Իսրայէլի կողմէ շարունակուող յարձակումներուն:

Հայաստանի դեսպանատան մէջ նոյնպէս Վեհափառ Հայրապետը ընդունուեցաւ դեսպանուհի՝ Լիլիթ Մակունցի կողմէ, շրջապատուած դեսպանատան անձնակազմի անդամներով:

Հոս, նախ առանձին հանդիպում մը կայացաւ Նորին Ս. Օծութեան եւ դեսպանին միջեւ, որուն յաջորդեց ընդլայնուած հանդիպում մը՝ մասնակցու-



Թեամբ Վեհափառ Հայրապետի պատուիրակութեան եւ դեսպանատան անձնակազմին: Բնականաբար, քննարկումները ընդգծեցին Արցախի գրաւումէն ետք պարզուած ընդհ. իրավիճակը, Հայաստանի դիմագրաւած մարտահրաւէրներն ու Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Շաբաթ, 11 Նոյեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետ, ընկերակցութեամբ իր շքախումբին, այցելեց Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցի, ուր Հայրապետական պատգամ ուղղեց ներկաներուն եւ ապա հանդիպեցաւ երիտասարդութեան հետ:

Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ հաւատացեալներու կողմէ ջերմ ընդունելութեան յաջորդեց Կանոնական աղօթքի կատարում, որմէ ետք Անուշաւան սրբազան հայրը բարի գալուստի խօսք արտասանեց: Ան ողջունեց Նորին Ս. Օծութեան ներկայութիւնը՝ գայն նկատելով օրհնաբեր եւ հոգեւոր վերանորոգման առիթ ու հրաւիրեց Վեհափառ Հայրապետը հաւատացեալներուն փոխանցելու իր Պատգամը:



Հայրապետական Պատգամին մէջ, Նորին Սրբութիւնը շեշտեց եկեղեցին Աստուծոյ տունը ըլլալու իրողութիւնը եւ թելադրեց հաւատացեալներուն, որ այս ըմբռնումով մօտենան եկեղեցւոյ: Ան ըսաւ, որ եկեղեցին վայր մը չէ, ուր կ'երթանք պարզապէս ներկայ գտնուելու ծիսական արարողութեան մը, այլ Աստուծոյ տունն է, որուն անդամներն ենք մենք: Հետեւաբար, մենք ո՛չ միայն գործնապէս մասնակից պէտք է դառնանք եկեղեցւոյ կեանքին, այլ նաեւ մեր գիտակից ու հետեւողական մասնակցութեամբ պէտք է եկեղեցի՝ դառնանք:

Եկեղեցական արարողութենէն ետք տեղի ունեցաւ աջահամբոյժ, որուն հետեւեցաւ երիտասարդներու հետ հանդիպում, եկեղեցւոյ սրահին մէջ:

Քաջալերական էր տեսնել մեծ թիւով երիտասարդներու ու անոնց ծնողներուն ներկայութիւնը այս հաւաքին:

Երիտասարդներուն հետ զրոյցը վարեց Ուաշինկթընի Հայ Դատի գրասենեակի Տնօրէն՝ Արամ Համբարեան: Ան Վեհափառ Հայրապետը ներկայացուց անոր ունեցած բազմակողմ փորձառութեանց առընթեր, նաեւ իբրեւ հոգեւոր պետ մը, որ միշտ քաջալերած է ու կը քաջալերէ երիտասարդներու մասնակցութիւնը հայ կեանքին մէջ:

Ապա, ան իր խօսքին մէջ յատկապէս ընդգծեց, որ անհրաժեշտ է երիտասարդութեան հետ խօսիլ եւ ոչ թէ՛ միայն թելադրել կամ հրահանգել, ու զրոյցը շարունակեց պատասխանելով երիտասարդներու հարցումներուն, որոնք առաւելաբար առնչուած էին Սփիւռքի վերակազմակերպման, Հայ եկեղեցւոյ վերանորոգման ու առաքելութեան եւ մեր ինքնութեան պահպանման՝ սփիւռքեան դժուարին պայմաններուն մէջ:

Հանդիպման աւարտին, Վեհափառ Հայրապետը իր գնահատական ու քաջալերական խօսքին մէջ հայրական կոչ ուղղեց երիտասարդներուն՝ դառնալու աշխոյժ ու գործօն ներկայութիւն Հայ կեանքէն ներս՝ թէ՛ եկեղեցւոյ եւ թէ՛ մեր միութիւններուն ճամբով:

**ՆՈՐ ԿԱՌՈՒՑՈՒԵԼԻՔ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀՈՂԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ**

Կիրակի, 12 Նոյեմբեր 2023-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոս Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց Ուաշինկթընի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առընթերակայութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Զարեանի եւ Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանին: Թէ՛ եկեղեցւոյ ու թէ՛ համայնքին սրահը լեցուն էին հաւատացեալներով, որոնք Ս. Պատարագին հետեւեցան զետեղուած պաստառներուն միջոցաւ:

Վեհափառ Հայրապետը ողջունելէ ետք Առաջնորդ սրբազան հօր եւ եկեղեցւոյ պատասխանատու մարմիններուն, իր պատգամը կեդրոնացուց Քրիստոսի այն խօսքին վրայ, որ կ'ըսէ «Ես եմ կեանքը»: Յիշեալ խօսքին վերլուծումը կատարելով ան ըսաւ, թէ Քրիստոս-կեանքը պէտք է դարձնել կեդրոնը մեր կեանքին. առանց Քրիստոսի ներկայութեան մեր կեանքը իր իմաստը կը կորսնցնէ. երկրորդ՝ Քրիստոսը ընդունիլ իբրեւ մեր կեանքը կը նշանակէ անոր բերած արժէքներով շաղախել ու իմաստաւորել մեր կեանքը, եւ երրորդ՝ Քրիստոսը ընդունիլ մեր կեանքին կեդրոնը կը նշանակէ մեր կեանքին յստակ ուղղութիւն ու նպատակ տալ:



Նորին Սրբութիւնը շեշտեց, թէ Քրիստոս եղաւ երկրորդ Ադամը, երբ առաջին Ադամը մեղանշած եւ եղծած էր Աստուածային պատկերը, երկրորդ Ադամը՝ Քրիստոսը, վերականգնեց աստուածային պատկերը ու դարձաւ վաւերական մարդու ու ճշմարիտ կեանքի աղբիւր:

Ս. Պատարագէն ետք, Նորին Ս. Օծութիւնը, անոր ընկերացող շքախումբն ու ժողովուրդը ուղղունցան այն հողամասը, ուր պիտի կառուցուի Ուաշինկ-



թընի նոր եկեղեցին՝ իր յարակից կառույցներով: Հոն տեղի ունեցաւ հողի օրհնութիւն:

Նոյն օրը երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս նախագահեց ի պատիւ իրեն տրուած ճաշկերոյթին: Այս ընթացքին խօսքեր արտասանեցին Ս. Խաչ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետը, Հոգեւոր հովիւը եւ Առաջնորդ սրբազան հայրը: Նորին Սրբութիւնը իր փակման խօսքին մէջ, անդրադառնալով իր այցելութեան բնաբանին՝ «Հաւատք, Համայնք եւ Ազգ»-ին, անոնց շարքին աւելցուց նաեւ «Հայրենիք» եզրը: Ան խօսեցաւ իւրաքանչիւրին իմաստին ու կարեւորութեան մասին եւ շեշտեց ազգաշինութեան ու հայրենաշինութեան հրամայականը՝ յատկապէս մեր պատմութեան ներկայ ճակատագրական խաչմերուկին: Ան նաեւ յիշեցուց, որ իշխանութիւնները ժամանակաւոր են, մնայունը Հայրենիքն է. անձերը վաղանցուկ են, յաւերժականը արժէքներն են: Հարկ է կառչիլ մնայունին, յաւերժականին, գերագոյնին եւ ընդհանրականին: Արցախը կորսնցուցինք, դժբախտաբար. Հայաստանը վտանգի սեմին է: Հարկ է միացնել մեր ոյժերը՝ ի խնդիր Հայաստանի գերիշխանութեան, անկախութեան ու ամբողջականութեան առաւել ամրացման, եզրափակեց իր խօսքը:

**ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ՈՒԱՇԻՆԿԹՆԻ
ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

Երկուշաբթի, 13 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս, ընկերակցութեամբ Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համա-ատենապետին, այցելեց Ուաշինկթընի մէջ երկար տարիներէ ի վեր հաստատուած Հայ Դատի գրասենեակը:

Նորին Սրբութեան պատուիրակութեան մաս կը կազմէին նաեւ Հայր Յովակիմն ու Հայր Սարգիսը եւ Արեւելեան Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Արամ Սարաֆեանը:

Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ գրասենեակի Տնօրէն՝ Արամ Համբարեանի եւ իր գործակիցներուն հետ, Հայ Դատի աշխատանքներու առնչութեամբ:

Պրն. Համբարեան, ողջունելով Հայրապետը ըսաւ, որ Արամ Ա. ո՛չ միայն զօրակից է Հայ Դատի աշխատանքներուն, այլեւ պայքարի առաջին գիծին վրայ հսկայ ներդրում կատարած է՝ թէ՛ անձնապէս եւ թէ՛ իր գլխաւորած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեամբ: Ան ընդհանուր գիծերով պարզեց գրասենեակին կատարած աշխատանքները՝ Հայ Դատի զանազան երեսներուն առնչուած, որոնք վերջին տարիներուն յատկապէս, բազմացան ու բարդացան: Ան յայտնեց, որ դժբախտաբար, ներդաշնակութեան պակասը կայ

Հայաստանի դեպի անատան ու կեդրոնի աշխատանքներուն միջև, հետեւաբար, անհրաժեշտ է աշխատանքները դառնան աւելի համագործակցութեամբ ու ծրագրութեամբ:

Այս առիթով, Նորին Ս. Օծուծիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց գրասենեակին կատարած գործունէութեան, որ հետզհետէ աւելի կ'ընդլայնի: Ան ըսաւ, որ Թուրքիոյ կողմէ Ցեղասպանութեան ճանաչման հարցին եկան աւելնալու Հայաստան-Ազրպէյճան յարաբերութեան, Արցախի իրաւունքներու պաշտպանութեան, Ամերիկա-Թուրքիա-Ազրպէյճան յարաբերութեան եւ այս բոլորին հետ ազդերս ունեցող բազմաթիւ հարցեր: Հետեւաբար, անհրաժեշտ



է, որ յատկապէս Ամերիկայի հայութիւնը աւելիով զօրավիզ կանգնի կեդրոնի գործունէութեան: Շարունակելով իր խօսքը, Նորին Սրբութիւնը շեշտեց նոր ռազմավարութեան մշակման անհրաժեշտութիւնը՝ աշխարհաքաղաքական ներկայ պայմաններուն եւ Արցախի ողբերգութենէն ետք ստեղծուած նոր իրավիճակի լոյսին տակ: Խօսելով Արցախի մասին, Նորին Ս. Օծուծիւնը ըսաւ, որ անհրաժեշտ է միջազգային օրէնքի շրջագիծէն ներս կարեւորութեամբ քննել Արցախին առնչուած երեք հարցեր.՝ ա) Արցախի հոգեւոր ու մշակութային կոթողներու անվթար պահպանումը բ) Արցախցիներու վերադարձի իրաւունքի հաստատումը եւ գ) Վտարանդի կառավարութեան նշանակումը: Ապա, ան բարձրօրէն գնահատելով կեդրոնին կատարած աշխատանքները՝ վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամբողջական զօրակցութիւնը Հայ Դատի հետապնդման ու պաշտպանութեան լծուած այս կեդրոնին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒ ԳԻՒՄՆԵՐԻ ՄԷՋ

Ուաշինկթոնէն ետք Երկուշաբթի, 13 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս ժամանեց Ֆիլատելֆիա: Նորին Սրբութիւնը համայնքի զաւակներուն կողմէ դիմաւորուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մուտքին, ուր ներկայ էին եկեղեցւոյ քահանայ հայրեր, հոգաբարձութեան, տիկնանց միութեան անդամներ եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Ողջոյնի խօսք արտասանեց Առաջնորդ սրբազան հայրը վերջիշեցնելով, որ Նորին Ս. Օծութիւնը Նիւ Եորք ուսանած տարիներուն՝ յաճախ այցելած է Ֆիլատելֆիա եւ մասնակից դարձած՝ եկեղեցական արարողութիւններուն: Սա Վեհափառ Հայրապետին հովուապետական երրորդ այցելութիւնն է եւ վստահ ենք, որ այս մէկը առիթ պիտի դառնայ մեր համայնքին հոգեւոր վերանորոգման, ըսաւ սրբազան հայրը եւ հրաւիրեց Նորին Սրբութիւնը, յղելու համար Հայրապետական Պատգամը:

Արամ Ա. Կաթողիկոս իր խօսքին մէջ անդրադարձաւ արժէքներու կարեւորութեան՝ թէ՛ անհատական եւ թէ՛ հաւաքական կեանքին մէջ: Առանց արժէքի մարդկային կեանքը կը կորսնցնէ իր ինքնութիւնը, իմաստը ու նպատակը, ըսաւ ան՝ ընդգծելով առաւելաբար հոգեւոր, բարոյական եւ ազգային արժէքները: Իւրաքանչիւրին մասին անդրադառնալով, ան շեշտեց, որ անոնք սերտօրէն իրարու ընդելուզուած են եւ բոլորն ալ էական են մեր հոգեւոր ու ազգային ինքնութեան պահպանման համար:



Եկեղեցական արարողութեան աւարտին, եկեղեցւոյ սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն՝ ներկայութեամբ մեծ թիւով հայորդիներու: Հոն տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն ընթացքին յաջորդաբար խօսք առին Հոգաբարձութեան եւ պետական ներկայացուցիչները, Հոգեւոր հովիւն ու Առաջնորդ սրբազան հայրը:

Հայոց Հայրապետին խօսքով եզրափակուեցաւ ընդունելութիւնը: Մեկնելով Ամերիկայի մէջ յաճախ կրկնուած՝ «ժողովուրդէն, ժողովուրդով ու ժողովուրդին համար» խօսքէն, ան լայնօրէն բացատրեց այս արտայայտութեան խորունկ իմաստն ու պատգամը ու շեշտեց, որ մեր եկեղեցւոյ ու համայնքի կեանքին մէջ բաժանման գիծեր, տարբեր դասակարգեր պէտք չէ գոյութիւն ունենան, որովհետեւ մենք մէկ ամբողջութիւն ենք՝ հարուստ զանազանութեամբ: Ան շարունակեց ընդգծելով, որ «մենք» եւ «դուք» չկայ մեր եկեղեցւոյ կեանքին մէջ, այլ կայ միայն «մենք»ը՝ զանազան դերակատարութիւններով: Ինչպէս Քրիստոս նոյնացաւ ժողովուրդին հետ՝ ծառայելով անոր կարիքներուն, այսօր նոյնը կը կատարէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը՝ իր հոգեւորականներու ու աշխարհական կառույցներու ճամբով: Ժողովուրդին հետ ըլլալ, ժողովուրդին համար ըլլալ եւ ժողովուրդին ծառայել: Այս է Անթիլիասը եւ այս է մեր կոչումը, շեշտեց Նորին Սրբութիւնը:

Յաջորդ առաւօտ, Երեքշաբթի, 14 Նոյեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը նախաճաշի սեղանի մը շուրջ հանդիպում ունեցաւ գաղութին մէջ գործող միութիւններու ներկայացուցիչներուն հետ: Այս առիթով ան իրեն ուղղուած հարցումներուն պատասխանեց՝ շեշտը դնելով համագործակցութեան ու եկեղեցւոյ շուրջ համախմբուելու հրամայականին վրայ: Ընդհանուր



գիծերով ներկայացնել է տք «Սփիւռքի Տարի»-ին առիթով իր կատարած շեշտաւորումները, Նորին Սրբութիւնը կարեւորութեամբ նշեց կառույցներուն միջեւ համագործակցութիւնը ամրապնդելու խիստ հրամայականը:

Աւելի ուշ, Վեհափառ Հայրապետը այցելեց Հայ Քոյրերու վարժարանը, ուր ջերմ ընդունելութիւն ստացաւ: Դպրոցի տնօրէն՝ Քոյր Էմման ողջունեց Նորին Ս. Օծութեան օրհնաբեր ներկայութիւնը վարժարանէն ներս: Այս եզակի ու իւրայատուկ առիթով, աշակերտները գողտրիկ յայտագիր մը պատրաստած էին՝ ի պատիւ Նորին Սրբութեան: Աւարտին, խօսք առաւ Վեհափառ Հայրապետը եւ յիշեցուց հայակերտումի առաքելութիւնը վերաշեշտելու յոյժ կարեւորութիւնը՝ յատկապէս սփիւռքեան պայմաններուն մէջ:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ՆԻՒ ՃԸՐՁԻՒ ՄԷՋ

Երեքշաբթի, 14 Նոյեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեցաւ Նիւ Ճըրզի եւ Սրբոց Վարդանանց եկեղեցույ առջեւ ջերմօրէն դիմաւորուեցաւ Առաջնորդական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Սահակ Ծ. Վրդ. Եմիշեանին, քահանայից եւ դպրաց դասերուն, եկեղեցույ հոգաբարձութեան եւ մեծ թիւով հաւատացեալներուն կողմէ:

Եկեղեցույ մէջ տեղի ունեցաւ «Հրաշափառ»ի կանոնական աղօթքը, որմէ ետք բարի գալուստի խօսք արտասանեց Առաջնորդ սրբազան հայրը: Ան ըսաւ, որ Նորին Սրբութիւնը մօտէն կը ճանչնայ այս եկեղեցին ու համայնքը, որովհետեւ անոր համալսարանական ուսանողութեան տարիներուն, զանազան առիթներով այցելած է համայնքին եւ պատարագած այս եկեղեցույ մէջ:





Նորին Ս. Օծուծիւնը իր պատգամին մէջ կարեւորեց հաւատքին գոյութիւնը մարդու կեանքին մէջ, ընդգծելով, հաւատքի միջոցաւ է որ մարդ արարածը հաղորդակցութեան մէջ կը դնէ Աստուծոյ հետ: Ան վերջիշեցուց, որ հաւատքով զօրացած մարդը կը դիմագրաւէ կեանքի բոլոր փորձութիւններն ու դժուարութիւնները, ուստի կոչ ուղղեց մեր հաւատքը վերանորոգելու՝ գործօն մասնակցութիւն բերելով եկեղեցւոյ համայնական կեանքին:

Արարողութեան յաջորդեց ընդունելութիւն՝ եկեղեցւոյ սրահին մէջ, եւ հաւատացեալները աշահամբոյրով ստացան Հայոց Հայրապետին օրհնութիւնը:

Յաջորդ առաւօտ, Չորեքշաբթի, 15 Նոյեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը հանդիպեցաւ Նիւ Ճըրզիի հայկական կազմակերպութիւններու ու միութիւններու պատասխանատուներուն հետ: Հոն եւս կարեւորեց միութիւններուն համագործակցութիւնը՝ շեշտելով, որ համայնքը կը դառնայ հզօր ու կազմակերպ, երբ անոր կեանքին մէջ գործող կառույցները ներդաշնակ կերպով կը կատարեն իրենց վստահուած առաքելութիւնը, ըսաւ ան: Այս առիթով, ան իր ջերմ գնահատանքը յայտնեց միութիւններուն տարած աշխատանքին եւ յաջողութիւն մաղթեց անոնց ծրագիրներուն իրականացման:

Յիշեալ հանդիպումէն ետք, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Յովնանեան վարժարան, ուր դիմաւորուեցաւ տնօրէնութեան, ուսուցչական կազմին, աշակերտութեան եւ ծնողներուն կողմէ: Այս առիթով, աշակերտները կոկիկ յայտագիր մը պատրաստած էին՝ ի պատիւ Վեհափառ Հայրապետին:

Դպրոցի տնօրէն՝ Սթէֆընի Թորոսեանի բարի գալուտի խօսքէն ետք, Նորին Սրբութիւնը իր օրհնութեան խօսքը փոխանցեց: Ան յիշեց տասնամեակներ առաջ դպրոցի շինութեան ու կազմաւորման աշխատանքները եւ ընդգծեց այս հաստատութեան դերակատարութիւնը շրջանի հայութեան կեանքին մէջ: Իր խօսքին մէջ Նորին Սրբութիւնը նաեւ վեր առաւ Հայ դպրոցին վիճակուած եզակի ու իւրայատուկ դերը՝ հայապահպանման աշխատանքներու ծիրէն ներս:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆՁԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Աւելի ուշ, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան կեդրոնատեղին: Վեհափառ Հայրապետին կ'ընկերանային Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան, Առաջնորդական Փոխանորդը, Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի վարիչն ու Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական ու միջ-կրօնական Բաժանմունքի պատասխանատուն:

Մուտքին, Նորին Ս. Օծութիւնը դիմաւորուեցաւ կեդրոնի գործադիր Տնօրէն՝ Զաւէն Խանճեանի, հոգաբարձութեան անդամներուն, վերապատուելիներու ու պաշտօնէութեան կողմէ:

Ընդհանուր ծանօթացման հանդիպումէ մը ետք, ի պատիւ Արամ Ա. Կաթողիկոսին, կեդրոնին կողմէ հիւրասիրութիւն կատարուեցաւ: Այս ընթացքին խօսք առին Քարվին Սաղըրեանն ու Զաւէն Խանճեանը: Վերջինս Նորին Սրբութիւնը ներկայացուց անոր բազմակողմանի աշխոյժ գործունէութեամբ եւ շեշտեց, որ ան իր ծառայութեամբ նոր հմայք տուաւ յատկապէս Մեծի



Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ ընդհանրապէս Սփիւռքի հայութեան: Իր խօսքի աւարտին, գործադիր տնօրէն Խանճեանը յուշանուէր մը յանձնեց Վեհափառ Հայրապետին, ինչպէս նաեւ կեդրոնին կողմէ 100,000 ամերիկեան տոլարի գումար մը դրաւ անոր տրամադրութեան տակ՝ Դպրեվանքի առաքելութեան բարեգարգման ու բարգաւաճման ի խնդիր:

Ապա, խօսք առաւ Նորին Ս. Օծուիւնը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ աւետարանական եկեղեցիներուն հետ իր ունեցած կապերուն, նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն գործակցութեան ու միացեալ ծրագիրներուն: Վեհափառ Հայրապետը անդրադարձ կատարեց եկեղեցւոյ առաքելութեան կարեւորութեան, զայն նկատելով ո՛չ թէ եկեղեցւոյ գործունէութեան մարզերէն մէկը, այլ եկեղեցւոյ էութի՛ւնն իսկ: Ան ըսաւ, որ Քրիստոս եկեղեցի չհիմնեց, այլ առաքելութիւն մը կատարելու համար իր աշակերտները աշխարհ ուղարկեց: Այս առիթով ան նաեւ շեշտեց, թէ ընկերակցութեան կողմէ կատարուող աշխատանքը միայն աւետարանական եկեղեցին չի ներառեր, այլ անկէ անդին, ան օգտակար կը հանդիսանայ բոլոր այն ծրագիրներուն ու աշխատանքներուն, որոնց նպատակը եկեղեցւոյ առաքելութեան առաւել կենսագործումն է՝ աստուածաբանական ուսման, քրիստոնէական դաստիարակութեան, վկայութեան եւ այլ ծրագիրներու ճամբով:

Հանդիպումը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» օրհներգի միաբերան երգեցողութեամբ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԹՐՈՅԻ ՄԷՋ

Չորեքշաբթի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս իր շքախումբին ընկերակցութեամբ, այցելութիւն տուաւ Նիւ Նորքի մէջ գտնուող Թրոյ քաղաքը: Հայ համայնքի Ս. Խաչ եկեղեցւոյ մուտքին համախմբուած գաղութի զաւակները դիմաւորեցին իրենց Հովուապետը, ուր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ կանոնական աղօթք:

Առաջնորդ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան, որուն կողքին ներկայ էր Գանատայէն ժամանած Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանը, ինչպէս նաեւ՝ Հայր Յովակիմն ու Հայր Սարգիսը, ողջունեց Նորին Սրբութեան ներկայութիւնը եւ հրաւիրեց զինք՝ փոխանցելու հայրական օրհնութեան խօսքը:

Արամ Ա. Կաթողիկոս իր խօսքին մէջ շեշտը դրաւ սիրոյ հրամայականին վրայ՝ նշելով, որ եկեղեցին սիրոյ համայնք է. Քրիստոս ո՛չ միայն սիրեց մարդը, այլ նաեւ պատգամեց զիրար սիրել, յայտնեց ան: Արդարեւ, սիրելը զգացական վիճակ մը չէ. սէրը կ'ենթադրէ՝ նուիրում, ծառայութիւն եւ օգնութիւն: Հետեւաբար, մեր սէրը գործնապէս պէտք է արտայայտենք՝ մեր փոքր ընտանիքը ու մեծ ընտանիքը՝ ազգը, սիրելով եւ օժանդակելով մեր եկեղեցւոյ ու համայնքի ծրագիրներուն, ըսաւ Նորին Ս. Օծուիւնը:



Աւարտին, տեղի ունեցաւ աշահամբոյր:

Նոյն օրը, Վեհափառ Հայրապետին իջեւանած պանդոկին մէջ կազմակերպուեցաւ ճաշկերոյթ՝ ի պատիւ Նորին Սրբութեան: Յաջորդաբար խօսք առին Ս. Խաչ եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ՝ Անդրանիկ Գարակէօզեանը եւ Առաջնորդ սրբազան հայրը: Իր խօսքին մէջ Անուշաւան Արք. ուրախութեամբ յայտնեց, որ 25 տարիներ ետք երկրորդ անգամ ըլլալով Հայոց Հայրապետը այցելութիւն կը շնորհէ եւ օրհնութիւն կը բերէ Թրոյի հայ գաղութին: Ապա, ան հրաւիրեց Սրբազնագոյն Հայրապետը՝ փոխանցելու Հայրապետական Պատգամը:

Նորին Սրբութիւնը շեշտեց մեր աւանդութիւններուն ու արժէքներուն ամբօրէն կառչած մնալու անհրաժեշտութիւնը՝ միշտ համախմբուելով եկեղեցւոյ շուրջ: Եկեղեցին մեր տունն է՝ Աստուծոյ տունը ըլլալով հանդերձ: Պէտք է մեր եկեղեցին պահենք պայծառ՝ մեր մասնակցութեամբ, որպէսզի մեր ընտանիքները եկեղեցւոյ ճամբով պայծառանան եւ լեցուին Աստուծոյ օրհնութեամբ:

Յաջորդ առաւօտ, Հինգշաբթի, 16 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Թրոյ համայնքի քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչները: Ինչպէս բոլոր գաղութներու պարագային, այստեղ եւս Նորին Սրբութիւնը թելադրեց միութիւններուն իրենց գործունէութիւնը ծաւալել ու վերակազմակերպել:

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԻՒ ՊՐԻԹՐՆԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 16 նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Նիւ Պրիթըն (Քընէթիքթ) եւ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մուտքին դիմաւորուեցաւ մօտակայ շրջաններէն ժամանած քահանայ հայրերու, հոգաբարձութեանց անդամներուն ու ազգային երեսփոխաններուն կողմէ:

Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Հրաշափառ»ի կանոնական արարողութիւնը, որուն աւարտին Անուշաւան Արք. ողջունեց Վեհափառ Հայրապետին ժամանումը Նիւ Պրիթըն եւ մաղթեց, որ անոր օրհնաբեր այցելութիւնը նոր կենսունակութիւն բերէ եկեղեցւոյ ու համայնքի կեանքին մէջ:



Նորին Սրբութիւնը հաւատացեալներուն ուղղած իր պատգամին որպէս բնաբան ընտրած էր՝ «Ո՛վ Տէր, աւելցուր մեր հաւատքը, յոյսը եւ սէրը» երեկոյեան ժամերգութեան ընթացքին արտասանուող աղօթաբոյր խօսքերը: Ան ըսաւ, որ ամէն օր եկեղեցւոյ մէջ այս մաղթանքը կը վերառաքենք Ամենակալին, որպէսզի մեր հաւատքը, յոյսը եւ սէրը աւելցնէ եւ մեր կեանքը Աստուածահաճոյ արժէքներով լեցնէ: Ընդհանուր գիծերով անդրադառնալէ ետք իւրաքանչիւր բառի իմաստին ու մեր կեանքին մէջ անհրաժեշտութեան, Նորին Ս. Օծութիւնը թելադրեց ժողովուրդին իրենց քրիստոնէական ու ազգային կեանքը շաղախելու հաւատքով, յոյսով ու սիրով: Իր պատգամի երկրորդ բաժինին մէջ, ան շեշտեց եկեղեցւոյ դերը համայնքի կեանքին մէջ, իբրեւ մեր զաւակները համախմբող եւ անոնց կարիքներուն ծառայելու կոչուած հոգեւոր առաքելութիւն:

Եկեղեցական արարողութեան աւարտին տեղի ունեցաւ աջահամբոյր. ապա, եկեղեցւոյ ներքնասրահին մէջ՝ ընթրիք, մասնակցութեամբ ծխայիւններու ու զանազան շրջաններէն ժամանած հիւրերու:

Ընթրիքին, Առաջնորդ սրբազան հօր բարի գալստեան խօսքէն ետք, Արամ Ա. Կաթողիկոս իր օրհնութեան խօսքին մէջ ընդգծեց եկեղեցւոյ՝ հոգեւոր ընտանիք ըլլալու իրողութիւնը: Որպէս Աստուծոյ ընտանիքը, եկեղեցին մեզ քով-քովի կը բերէ եւ իրարու կը կամրջէ նոյն հաւատքով, սիրով ու յոյսով, ըսաւ ան: Շարունակելով իր պատգամը, ան յայտնեց, որ եթէ այս եկեղեցին՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, շրջանի ամենահին եկեղեցիներէն մէկը եղած է, պէտք չէ մոռնալ երբեք, որ Հայ եկեղեցին աշխարհի ամենահին եկեղեցին է: Առաջին դարու վերջաւորութեան, քրիստոնէութիւնը մուտք գործած է Հայաստան եւ 301 թուականին հռչակուած է իբրեւ պետական կրօնք: Մենք հպարտ պէտք է ըլլանք, որ առաջին քրիստոնեայ ազգն ենք, սակայն պատմական այս նշանակալից դէպքը մեզ պէտք է մղէ առաւել հաւատքով մասնակից դառնալու մեր եկեղեցւոյ կեանքին, շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Ճաշկերոյթէն ետք, ան առիթ ունեցաւ մտերմիկ հանդիպումներ ու զրոյցներ ունենալու այլ շրջաններէ ժամանած հոգաբարձուներու եւ ազգային երեսփոխաններու հետ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Ուրբաթ, 17 Նոյեմբեր 2023-ի առաւօտուն, Արամ Ա. Կաթողիկոս մեկնեցաւ Նիւ Եորք: Առաջին հերթին, ան այցելեց Ս. Սարգիս եկեղեցի եւ դիմաւորուեցաւ եկեղեցւոյ Հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Թրթռեանին, հոգաբարձութեան, ազգային երեսփոխաններուն եւ մեծ թիւով հաւատացեալներու կողմէ:

Անուշաւան սրբազան հայրը ջերմօրէն ողջունեց Վեհափառ Հայրապետին կատարած երրորդ այցելութիւնը յիշեալ եկեղեցին: Ան ըսաւ, որ այս եկեղեցին թեմի աշխոյժ ու կազմակերպ համայնքներէն մէկն է, ուր բոլոր կառույցները ներդաշնակօրէն կը ծառայեն մեր ժողովուրդի զաւակներուն:

Իր Հայրապետական պատգամին մէջ, Նորին Սրբութիւնը նախ իր գնահատանքը յայտնեց Առաջնորդ սրբազան հօր, եկեղեցւոյ Հոգեւոր հովիւին, Հոգաբարձութեան ու շրջանի կառույցներուն եւ ապա անդրադարձաւ եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան՝ իբրեւ Աստուծոյ տունը: Բոլորս այս տան զաւակներն ենք. այս տունը մեզ կը պաշտպանէ կեանքի բոլոր շարիքներէն. այս տունը մեր հաւատքը կը զօրացնէ. այս տունը մեզ կը մղէ սիրել զիրար եւ երբեք չի յուսահատիր կեանքի դժուարութիւններուն դիմաց: Հետեւաբար, հարկ է մասնակից դառնալ եկեղեցւոյ կեանքին, առաքելութեան ու ծառայութեան, շեշտեց Նորին Սրբութիւնը:



Ապա, եկեղեցւոյ ներքնասարահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին Նարեկ Քահանան խօսք առնելով՝ հրաւիրեց ժողովուրդը իրենց մտահոգութիւններն ու հարցումները ուղղելու Հայոց Հայրապետին: Հանդիպման ընթացքին, Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ բացատրութիւններն ու լուսաբանութիւնները տուաւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին:

Յայտնենք, որ Նորին Սրբութիւնը իր բոլոր պատգամները յղեց հայերէնով ու անգլերէնով եւ միշտ առիթ տուաւ մեր ժողովուրդի զաւակներուն իրենց հարցումները ուղղելու եւ սպասումներն ու մտահոգութիւնները յայտնելու:



Յաջորդ օր՝ Շաբաթ, 18 Նոյեմբեր 2023-ին, տեղի ունեցավ երիտասարդութեան ու Վեհափառ Հայրապետին միջեւ հանդիպում-զրոյց՝ մասնակցութեամբ Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ, Ս. Սարգիս եկեղեցւոյ եւ Նիւ Ճըրզիի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ երիտասարդութեան: Շուրջ 100 երիտասարդներու հետ հանդիպումը փաստօրէն երկխօսութիւն մըն էր: Հարցումները առաւելաբար առնչուած էին Սփիւռքի վերակազմակերպման, եկեղեցւոյ վերանորոգման եւ յատկապէս երիտասարդութեան դերակատարութեան հայ կեանքէն ներս:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՈՒՈՅ ՀԻՒՐԸ
ՅՈՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԻՆ**

Ուրբաթ, 17 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս պատուոյ հիւրը եղաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Յոյն Ուղղափառ համայնքի Հոգեւոր Պետ՝ Էլփիտոֆորոս Արքեպիսկոպոսին:

Նիւ Եորքի մէջ հաստատուած Յոյն Ուղղափառ հոգեւոր կեդրոնին մէջ ընդունելով Վեհափառ Հայրապետը եւ իր շքախումբը, Արքեպիսկոպոսը ողջունեց Նորին Սրբութեան այցելութիւնը Միացեալ Նահանգներ, ինչպէս նաեւ Յոյն համայնքի հոգեւոր կեդրոնատեղիէն ներս: Իր ողջոյնի խօսքին մէջ ան ըսաւ, որ Արամ Ա. Կաթողիկոսը ծանօթացնելու կարիքը չկայ, որովհետեւ ան յատկապէս միջ-եկեղեցական աշխարհէն ներս միջազգային դէմք է, որուն



ղեկավարութեան եւ հոգեմտաւոր արժանիքներուն անձնապէս ծանօթ եղած է տարիներ շարունակ: Այս առիթով էլփիտոֆորոս Արքեպիսկոպոսը Տիեզերական Պատրիարք՝ Պարթուլումէոսին եղբայրական ողջոյնները փոխանցեց Վեհափառ Հայրապետին եւ անոր մաղթեց յաջողութիւն իր օրհնաբեր առաքելութեան մէջ: Իր խօսքի աւարտին, ան յատուկ պանակէ մը նուիրեց Նորին Սրբութեան:

Իր կարգին, խօսք առնելով Արամ Ա. Կաթողիկոս, իր ուրախութիւնը յայտնեց, որ երկրորդ անգամ ըլլալով, շուրջ 25 տարիներ ետք, կ'այցելէ Տիեզերական Պատրիարքութեան պատկանող այս հոգեւոր կեդրոնը: Անդրադառնալով հայ եւ յոյն եկեղեցիներու պատմական յարաբերութեան, Նորին Ս. Օծութիւնը լուսարձակի տակ բերաւ երկու մարզեր, որոնք անցեալէն ժառանգուած յարաբերութիւնն ու գործակցութիւնը կը շարունակեն: Առաջին մարզը միջ-եկեղեցական յարաբերութիւններն են, ուր եկեղեցին յուզող ընդհանրական հարցերու շուրջ երկու եկեղեցիները նոյն դիրքը որդեգրած են: Երկրորդ մարզը աստուածաբանական երկխօսութիւնն է Ուղղափառ եկեղեցիներուն միջեւ, որ կրցած է կարեւոր քայլեր առնել քրիստոսաբանական հարցերու գծով հասարակաց մօտեցում գոյացնելու: Նորին Սրբութիւնը ապա յայտնեց, որ այս երկու բնագաւառներէն ներս ինք եւ Տիեզերական Պատրիարքը միշտ միասին գործակցած են, իրենց վարդապետութեան օրերէն սկսեալ: Վեհափառ Հայրապետը, իր խօսքի աւարտին, Կաթողիկոսարանի պաշտօնական քաթալոկը նուիրեց Յոյն Ուղղափառ Առաջնորդին:



Ճաշի ընթացքին, էլփիտոֆորոս Արքեպիսկոպոս դարձեալ խօսք առնելով՝ յիշեց Վեհափառ Հայրապետին կարեւոր դերակատարութիւնը եկեղեցիներու միջեւ գործակցութիւն յառաջացնելու միտող մը: Այս առիթով ան պատրաստակամութիւն յայտնեց իրենց Դպրեվանքին մէջ ընդունելու մեր կողմէ ուղարկուած ուսանողները:

Նշենք, որ յիշեալ ընդունելութեան Վեհափառ Հայրապետին կողքին եղան Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան, Առաջնորդական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Սահակ Ծ. Վրդ. Եմիշեան, Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական ու միջ-կրօնական Բաժանմունքի պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանն ու Նիւ Եորքի Ս. Սարգիս եկեղեցւոյ Հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Նարեկ Քհնյ. Թրթռեանը: Իսկ Յոյն Ուղղափառ Առաջնորդին կողքին ներկայ էին իր օգնական եպիսկոպոսներն ու վարդապետները:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ ՆԻՒ ԵՈՐՔԻ Ս. ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, 19 նոյեմբեր 2023-ին, Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ եպիսկոպոսական Ս. Եւ Անմահ Պատարագ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին: Պատարագիչն էր Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան:

Եկեղեցին լեցուն էր թէ՛ Նիւ Եորքէն եւ թէ՛ այլ շրջաններէ հաւատացեալներով, որոնք եկած էին հաղորդուելու Ս. Պատարագի խորհուրդով եւ լսելու Արամ Ա. Կաթողիկոսին Հայրապետական Պատգամը:

Սրտի խօսք առնելէ ետք Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան եւ Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ սրբազան հայրը, Նորին Սրբութիւնը իր Պատգամը ուղղեց հաւատացեալ ժողովուրդին:

Ան իր գնահատանքը յայտնելէ ետք Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ սրբազան հօր, Հոգեւոր դասուն ու Ազգ. Վարչութեան, խօսեցաւ ընտանիքի կարեւորութեան մասին: Նախ ան անդրադարձաւ ընտանիքի ծագումին՝ սկըսելով նախամարդուն ստեղծումէն: Վեհափառ Հայրապետը ընտանիքը բնորոշեց իբրեւ Աստուծոյ կողմէ ստեղծուած կառոյց եւ յիշեց Աւետարանին ու առաքեալներու թուղթերուն մէջ ընտանիքի մասին տեղ գտած կարեւոր հաստատումները: Իսկ խօսելով յատկապէս Հայ ընտանիքին մասին՝ Հայոց Հայրապետը զայն նկատեց փոքր եկեղեցի, փոքր հայրենիք ու փոքր դպրոց: Ան լայնօրէն անդրադարձաւ իւրաքանչիւրին, միշտ շեշտելով ընտանիքի



սրբութիւնը, ինքնութիւնը ու ազգային նկարագիրը պահելու հրամայականը, յատկապէս ներկայ ժամանակներուն, երբ տեսակ-տեսակ ըմբռնումներ ու կենցաղակերպեր սկսած են աղարտել հայ-քրիստոնեայ ընտանիքին նկարագիրը:

Իր պատգամի աւարտին, Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց Հայ ընտանիքին սրբազան կառոյց ըլլալու հանգամանքը: Ան ըսաւ, որ Հայ ընտանիքը մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներուն աղբիւրն է: Ան ճակատագրական դեր ունեցած է եւ ունի մեր ժողովուրդի գոյութեան ու ինքնութեան պահպանման մէջ, յատկապէս այս օրերուն, երբ օտարամուտ բարքեր ու աւանդութիւններ կը փորձեն խաթարել Հայ ընտանիքը, մեր արժէքներն ու աւանդութիւնները: Հետեւաբար, Հայ ընտանիքը կոչուած է հաւատարիմ մնալու մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներուն, եզրափակեց ան:

ՄԻՋ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմին կատարած այցելութեան առիթով եւ նկատի ունենալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին մասնակցութիւնը միջ-եկեղեցական շարժումին եւ ունեցած լայն կապերը, Ազգային Առաջնորդարանը միջ-եկեղեցական աղօթքի արարողութիւն մը կազմակերպեց Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ:

Վեհափառ Հայրապետին կողքին արարողութեան մասնակցեցան Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դա-

նիէլեան եւ Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան: Միջ-եկեղեցական աղօթքին մաս կազմեցին նաեւ Նիւ Եորքի բոլոր օտար եկեղեցիներու ներկայացուցիչները:

Հաւատացեալներու ներկայութեան տեղի ունեցած եկեղեցական այս արարողութիւնը խոր տպաւորութիւն թողուց ներկաներուն եւ առցանց հետեւողներուն վրայ: Եզակի երեւոյթ էր յատկապէս Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին «Հաւատով Խոստովանիմ» աղօթքի 24 տուներուն ընթերցումը 24 լեզուներով՝ ներկաներուն կողմէ:



Միջ-եկեղեցական աղօթքի աւարտին, Առաջնորդ սրբազան հայրը խօսք առնելով՝ հրաւիրեց Վեհափառ Հայրապետը իր Պատգամը փոխանցելու: Նորին Սրբութիւնը անդրադարձաւ միութեան ըմբռնումին ու հրամայականին, ինչպէս նաեւ միութեան գործնական արտայայտութիւն տալու միջոցներուն: Ան յատկապէս շեշտեց, որ ներկայ աշխարհին մէջ, երբ քրիստոնեայ հաւատքը վտանգուած է, անհրաժեշտ է մէկ կողմ թողուլ անցեալէն ժառանգուած դաւանական հարցերը եւ միջ-եկեղեցական գործակցութեան ճամբով հասարակաց կեցուածքներ որդեգրել քրիստոնէական հաւատքը վտանգող շարժումներուն նկատմամբ:

Արարողութենէն ետք, եկեղեցուց սրահին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երկուշաբթի, 20 Նոյեմբեր 2023-ին, միացեալ նախաձեռնութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներու միջ-եկեղեցական Խորհուրդին եւ Ս. Վլատիմիր աստուածաբանական Դպրեվանքին, կայացաւ միջ-եկեղեցական հարցերու քննարկման նուիրուած հանդիպում մը յիշեալ Դպրեվանքի յարկին տակ: Ներկայ էին թէ՛ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի եւ թէ՛ Խորհուրդի գործունէութեան իրենց հետեւողական մասնակցութիւնը բերած ամերիկաբնակ հոգեւորականներ ու համալսարանական դասախօսներ:



Նկատի ունենալով Վեհափառ Հայրապետին երկար տարիներու փորձառութիւնը միջ-եկեղեցական աշխարհին մէջ, ան հրաւիրուած էր իր տեսակէտները եւ պատկերացումները յայտնելու:

Նորին Սրբութիւնը հինգ կէտերու մէջ պարզեց միջ-եկեղեցական շարժումին դիմագրաւած մարտահրաւէրները՝ անհատակեղրոն շարժումէն դէպի եկեղեցակեղրոն շարժում, Ուղղափառ եկեղեցիներու մտահոգութիւնները դէպի աշխարհայնացում ուղղուող միջ-եկեղեցական շարժումին նկատմամբ, բազմակողմանի գործակցութեան նահանջը երկկողմանի գործակցութեան դիմաց, աստուածաբանական երկխօսութեան տիրապետող ներկայութիւնը միջ-եկեղեցական շարժումին մէջ, եկեղեցւոյ միութեան լուսանցքայնացումը ընկերաբարոյական խնդիրներու հետզհետէ ծաւալող ներկայութեան դիմաց:

Յիշեալ հարցերուն գծով Նորին Սրբութիւնը տուաւ անհրաժեշտ բացատ-

րութիւններ ու միաժամանակ կատարեց վերլուծումներ: Ապա, ան պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

Ներկաները ճաշի հիւրը եղան Ամերիկայի Միջ-եկեղեցական Խորհուրդին եւ Ս. Վլատիմիր աստուածաբանական Դպրեվանքին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Երկուշաբթի, 20 Նոյեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս, Ազգ. Առաջնորդարանին մէջ, յաջորդական հանդիպումներ ունեցաւ հետեւեալ կառույցներու ներկայացուցիչներուն հետ.-

ա) «Գարակէօզեան» Հաստատութեան Յանձնաժողով: Քննարկուեցան յատկապէս Լիբանանի ու Սուրիոյ մէջ հաստատութեան մասնաճիւղերուն գործունէութեան առնչուած նիւթեր: Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց ի տես մեր համայնքներու կեանքին մէջ Գարակէօզեանի տարած աշխատանքին եւ թելադրեց վերանորոգ թափով շարունակել հաստատութեան նիւթական օժանդակութիւնները:



բ) Ազունիէի Ազգ. Բուժարանի Խնամակալութիւն: Լայնօրէն անդրադարձ կատարուեցաւ բուժարանին կողմէ վերջին շրջանին իրականացուած ու յառաջիկայի ծրագիրներուն մասին: Նորին Ս. Օծութիւնը գնահատելով նոր խնամակալութեան գործունէութիւնը, թելադրեց որ ամսական նպաստին առընթեր, ան նաեւ ֆինանսաւորէ բուժարանին կարելոր ծրագիրները:



գ) Ամերիկայի Միջին Արեւելքի Մարդասիրական Օժանդակութեան Հիմնարկ: Յայտնենք, որ համաշխարհային առաջին պատերազմէն ետք հաստատուած այս հիմնարկին կը պատկանէր Անթիլիասի որբանոցը. ապա, 1930 թուականին, խորհրդանշական գումարով մը, փոխանցուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Նորին Սրբութիւնը բարձր գնահատեց հիմնարկին աշակցութիւնը մեր Ս. Աթոռին եւ շարունակուող գործակցութիւնը:



դ) Արեւելեան Ամերիկայի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդր. Կոմիտէութիւն: Վեհափառ Հայրապետը ամփոփ գիծերով պարզեց Արցախի գծով Կաթողիկոսութեան կատարած աշխատանքները: Հանդիպման ընթացքին շեշտուեցաւ գաղութը վերակազմակերպելու հրամայականը:



ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՌՆՉՈՒԱԾ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՎԱՏԻԿԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ

Երեքշաբթի, 21 Նոյեմբեր 2023-ին, նախապէս ճշդուած ժամադրութեամբ, Նիւ Եորքի մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին հետ հանդիպում ունեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան մօտ Վատիկանի ներկայացուցիչ՝ Կապրիէլ Գաչիա Արքեպիսկոպոսը:

Նորին Սրբութեան մօտէն ծանօթ ըլլալով, Վատիկանի ներկայացուցիչին հանդիպումը տեղի ունեցաւ մտերմիկ մթնոլորտի մէջ: Քննարկումներուն մէջ կարեւոր տեղ գրաւեցին Արցախի հարցը, ինչպէս նաեւ Լիբանանի նախագահական ընտրութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Վատիկանի սերտ յարաբերութիւնները:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ պարզելու Նորին Ս. Օծութեան տեսակէտները եւ Կաթողիկոսարանին կողմէ կատարուած աշխատանքները, միաժամանակ իմանալու Վատիկանի մօտեցումները վերոյիշեալ հարցերուն շուրջ:



ԵԶՐԱՓԱԿԻՉ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՊԱՏԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

«Մեր եկեղեցւոյ ու համայնքին վերանորոգումը ու վերակենսատումը առանցքը պէտք է դառնայ Արեւելեան Ամերիկայի մեր ժողովուրդի կեանքին»: Այս շեշտաւորումը կատարեց Արամ Ա. Կաթողիկոս ի պատիւ իրեն տրուած պաշտօնական ճաշկերոյթին, որ կազմակերպուած էր Հիւս. Ամերիկայի Արեւել-



եան Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանին կողմէ, Կիրակի, 19 Նոյեմբեր 2023-ին, Նիւ Եորքի մէջ:

Շրջապատուած Ամերիկայի Արեւելեան ու Արեւմտեան Հայոց Թեմերու Առաջնորդ սրբազան հայրերով, ինչպէս նաեւ Արեւելեան Հայոց Թեմէն ներս ծառայող Միաբան հայրերով, պաշտօնական ճաշկերոյթի աւարտին Վեհափառ Հայրապետը եզրակացնելով աւելի քան երկու շաբաթներու վրայ տարածուած իր Հովուապետական այցելութիւնը, շորս կէտերու մէջ ամփոփեց իր եզրափակիչ պատգամը:

ա) Կապրինք համաշխարհայնացած դարու մէջ: Համաշխարհայնացումը էապէս մշակոյթ է՝ ճարտարագիտութեամբ տիրապետուած, որ թափանցած է բոլոր ընկերութիւններու կեանքէն ներս: Արժէքներ քանդող, սահմաններ շրջանցող այս մշակոյթը նաեւ տիրական ներկայութիւն է մեր ժողովուրդի կեանքին մէջ: Չենք կրնար պայքարիլ անոր դէմ, սակայն, միաժամանակ, համակերպումը վնասաբեր է: Անհրաժեշտ է քննական երկխօսութիւն ունենալ՝ մէկ կողմէն օգտագործելով համաշխարհայնացումի դրական երեսները եւ միւս կողմէ ամրացնելով մեր ինքնութիւնը երաշխաւորող արժէքները: Այս գծով էական է երիտասարդութեան դերը:

բ) Մեր եկեղեցւոյ վերանորոգումը հրամայական է: Վերանորոգումը սոսկ փոփոխութիւն չէ, այլ վերարժեւորում եւ ներկայ պայմաններու լոյսին տակ եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան վերանորոգում, բնականաբար պահպանելով մեր եկեղեցւոյ իւրայատկութիւնը: Այս իմաստով բարոյագիտական արժէքներու գծով մեր եկեղեցւոյ տեսակէտին յստակացումը այլեւս դարձած է անհրաժեշտութիւն:



գ) Ամերիկյան ցեղային, մշակութային ու կրօնական համայնքներու ամբողջութիւն է՝ ընկերային-քաղաքական հասարակաց արժէքներու վրայ հաստատուած: Մենք եւս մաս կը կազմենք այս ընկերութեան: Սակայն, ինչպէս այլ համայնքներ յատուկ ճիգ կը թափեն պահպանելու իրենց մշակութային ու կրօնական ինքնութիւնը, նոյնը պէտք է կատարէ նաեւ մեր համայնքը: Սա մնայուն մարտահրաւէր է մեր դիմաց:

դ) Մեր ազգն ու հայրենիքը կ'ապրին ճակատագրական դարաշրջանի մէջ: Այս մասին յաճախ անդրադարձած ենք մեր պատգամներուն մէջ: Աւելի քան երբեք կարիքը ունինք, աշխարհաքաղաքական ներկայ պայմաններու լոյսին տակ, մշակելու նոր ռազմավարութիւն մը, որպէսզի կարելի ըլլայ պահել Հայաստանի գերիշխանութիւնը, ամբողջականութիւնն ու անվտանգութիւնը: Մենք կարիքը ունինք այնպիսի ղեկավարներու, որոնք կարենան ներկայ ժամանակներու համապատասխան կերպով կեցուածքներ ճշդել եւ մեր ազգն ու հայրենիքը առաջնորդել ճիշդ ուղղութեամբ:



Ճաշկերոյթի աւարտին, ընդառաջելով Թեմի խնդրանքին, Նորին Ս. Օծութիւնը պարգեւատրեց երեք արժանաւորներ.- Դոկտ. Վարդան Մատթէոսեան՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, Գառնիկ Ալաճաճեան՝ «Կիլիկեան Ասպետ» շքանշանով եւ Ռիչըրտ Գարօլան՝ «Կիլիկեան Իշխան» շքանշանով: Իսկ Ազգ. Առաջնորդարանի «Զապէլ Թագուհի» մետալով պարգեւատրուեցաւ նաեւ Ռիչըրտի մայրը՝ Թինա Գարօլանը:

Յայտնենք, որ ճաշկերոյթի ընթացքին գեղարուեստական յայտագիր մը հրամցուեցաւ ներկաներուն, որուն բացումը կատարեց Թամար Գանարեան: Խօսք առին նաեւ Հրանդ Պետրոսեան, Արամ Համբարեան, Արամ Սարաֆեան եւ Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող երիտասարդներ:

Պաշտօնական ճաշկերոյթը իր աւարտին հասաւ Նորին Սրբութեան «Պահպանիչ...» աղօթքով եւ «Կիլիկիա» Օրհներգի միաբերան երգեցողութեամբ:

ՏՕՆԱԿԱՆ

**Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱԽԱՏՕՆԱԿ
ԵՒ ՏՕՆԱԾԱՌԻ ԼՈՒՍԱԲՈՐՈՒՄ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Ուրբաթ, 15 Դեկտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախատօնակը Հայ եկեղեցւոյ ժողովրդային սուրբերէն՝ Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին, ինչպէս նաեւ Մարուգէ ճգնաւորին եւ Մելիտոս եպիսկոպոսին:

Երեկոյեան ժամերգութեան ընթացքին բարձրացան սուրբերուն յիշատակը օրհներգող շարականներ ու աղօթասացութիւններ: Կաթողիկոսարանի «Կիլիկիա» թանգարանին մէջ ի պահ դրուած Ս. Յակոբ Մծբնացի Հայրապետին մասունքով, Վեհափառ Հայրապետին ձեռամբ, օրհնուեցան ներկայ հաւատացեալներն ու մանուկները:



Սրբազան մասունքը, որ կը զարդարէր եկեղեցւոյ դասը՝ շրջապատուած Կիլիկեան Ուխտին միաբանութեամբ եւ Դպրեվանքի սաներով, մաս կը կազմէ Կաթողիկոսութեանս բազմադարեան մասունքներու գանձին:

Յաւարտ եկեղեցական արարողութեան, հաւատացեալ ժողովուրդը, Հայրապետական թափօրին ուղեկցելով, իր քայլերը առաջնորդեց դէպի Մայրավանքի շրջափակ, ուր տեղի ունեցաւ Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին կազմակերպած տօնածառի լուսաւորման տօնակատարութիւնը: Մայրավանքի եւ Լիբանանի Հայոց Թեմի կիրակնօրեայ վարժարաններու եւ Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբի փոքրիկներուն ձեռամբ, լուսաւորուեցան տօնածառն ու Քրիստոսի մսուրը: Վեհափառ Հայրապետին օրհնութեան խօսքը արտասանեց Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեան: Ան ըսաւ, որ Նորին Սրբութեան սրտագին մաղթանքն է, որ այս տօնածառին լուսաւորումով լուսաւորուին մեր բոլորին սրտերը, ընտանիքներուն օճախները եւ մեր ողջ ազգին կեանքը:

Ապա, «Նարեկացի» երգչախումբը, ճոխացնելով մթնոլորտը, հրամցուց փունջ մը կաղանդի եւ Ս. Ծննդեան երգեր: Մանուկներուն եւ փոքրիկներուն համար տօնական մթնոլորտը իր գագաթնակէտին հասաւ կաղանդ պապուկին ժամանումով եւ նուէրներու բաշխումով, որ կարելի դարձած էր շնորհիւ եկեղեցասէր նուիրատուներու:

Մեր աղօթքն է, որ Ս. Յակոբ Մծբնացի Հայրապետին օրհնութիւնն ու բարեխօսութիւնը մշտական ներկայութիւն ըլլան մեր ազգին կեանքին մէջ:

Այս առիթով նաեւ կը շնորհաւորենք սուրբին անունը կրող մեր ժողովուրդի բոլոր զաւակները: Թող սուրբը բարեխօս ըլլայ մեզի եւ իր կեանքի օրինակը՝ վարակիչ բոլոր քրիստոնէաներուս:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՒՆՆԵՐԸ

ԱԶՈՒՆԻՔԻ ԱԶԳ. ԲՈՒԺԱՐԱՆ

Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր 2023-ի առաւօտեան, Վեհափառ Հայրապետը, ընկերակցութեամբ խումբ մը Միաբան հայրերու, Նոր Տարուան եւ մեր Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան տօներու նախօրեակին, իր Հայրապետական այցելութիւնը շնորհեց Ազունիէի Ազգ. Բուժարանին:

Վեհափառ Հայրապետը բուժարանի մուտքին դիմաւորուեցաւ հաստատութեան տնօրէն՝ Տաճատ Սրապեանի, խնամակալութեան ատենապետ՝ Յակոբ Լատոյեանի եւ խնամակալութեան յանձնախումբի անդամներուն կողմէ: Այցելութեան նպատակն էր մօտէն իրազեկ դառնալ այնտեղ տարուող աշխատանքներուն եւ իր հայրական օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները փոխանցել ապաստանեալ մամիկներուն ու պապիկներուն:

Իր օրհնութեան ողջոյնի խօսքին մէջ, Նորին Սրբութիւնը իր հոգեկան գոհունակութիւնը յայտնեց, որ անցնող տարիներու տառապալից պայմաններէն ետք, ահաւասիկ դարձեալ առիթը կ'ունենայ ըլլալու բուժարանին մէջ



ապաստանող մեր ժողովուրդի զաւակներուն հետ: Ան յիշեցուց, որ այս հաստատութիւնը եզակի դերակատարութիւն ունի Սփիւռքի կեանքին մէջ, միաժամանակ վստահեցնելով, որ այս հաստատութեան մէջ պատասպարեալները յատուկ հոգատարութեան ու խնամքի տակ կը գտնուին՝ ինչ ալ ըլլան մեզ շրջապատող պայմաններն ու իրողութիւնները: Այս առիթով, Նորին Ս. Օծութիւնը տօնական իր բարեմաղթութիւնները փոխանցեց բուժարանի բնակիչներուն, տնօրէնութեան, խնամակալութեան, պաշտօնէութեան ու բժշկական կազմին, որոնք ամէն ջանք ի գործ կը դնեն լաւագոյն պայմաններու մէջ պահելու մեր մամիկներն ու պապիկները:

Յիշեալ հանդիպումէն ետք, ան տեսակցութիւն մը ունեցաւ տնօրէնութեան ու խնամակալութեան հետ եւ այցելեց բուժարանի մատուռը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը անգամ մը եւս վստահեցուց ժողովականները, որ Ազունիէի Ազգ. Բուժարանը ամբողջական զօրակցութիւնն ու նեցուկը կը վայելէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Յայտնենք, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւելեան Հայոց Թեմին տուած իր հովուապետական այցելութեան ընթացքին, Արամ Ա. Կաթողիկոս նաեւ հանդիպում ունեցաւ բուժարանի խնամակալութեան հետ, ուր Նորին Սրբութեան յայտնած էր, թէ Ազգ. Բուժարանը ունի զանազան ծրագիրներ, որոնց նպատակն է վերակազմակերպել ու աւելի ծաւալել բուժարանի գործունէութիւնը:

ԱԶԳԱՅԻՆ ԾԵՐԱՆՈՑ

Նոր տարուան եւ Ս. Ծննդեան տօներու նախօրեակին հայրական այցելութեանց ծիրէն ներս, Երեքշաբթի, 19 Դեկտեմբեր 2023-ի առաւօտուն, ընկերակցութեամբ Միաբան հայրերու, Արամ Ա. Կաթողիկոս այցելութիւն շնորհեց Ազգ. Ծերանոցին, ուր ջերմօրէն դիմաւորուեցաւ հաստատութեան տնօրէն՝ Պատուելի Սեպուհ Թէրզեանի, խնամակալութեան, տիկնաց յանձնախումբին եւ մեծ հայրերու ու մայրերու կողմէ:

Իր ողջոյնի խօսքին մէջ, Պատուելի Թէրզեան ողջունեց Վեհափառ Հայրապետին ներկայութիւնը Հայ տարեցներու տան մէջ եւ երախտագիտական զգացումներով յայտնեց, թէ ինչպէ՛ս անցնող տարիներու դժուարին ու տագնապալի պայմաններուն մէջ, Նորին Սրբութիւնը նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ ու զօրավիճ կանգնեցաւ ազգի այս տան: Պատուելին վստահեցուց, թէ Հայ տարեցներու տան բնակիչները եղած են մեր ազգի զաւակներուն ուշադրութեան առարկան եւ միշտ վայելած են անոնց հոգատարութիւնն ու խնամքը:

Ապա, Միաբան հայրերը տօնական ու ազգային երգերով ճոխացուցին

միջնորդությամբ եւ մամիկներուն ու պապիկներուն վերապրեցուցին ու ներշնչեցին Նոր Տարուան եւ Քրիստոսի Ս. Ծննդեան ոգիով ու պատգամով:

Հուսկ, Վեհափառ Հայրապետը իր օրհնութիւնն ու ողջոյնի խօսքը փոխանցեց ներկաներուն: Ան ըսաւ, որ պատմութեան ընթացքին, մեր եկեղեցին, հետեւելով Քրիստոսի օրինակին, միշտ եղած է ծառայական ներկայութիւն մեր ազգի զաւակներու կեանքին մէջ եւ այս տունը այդ ծառայութեան գործնական արտայայտութիւններէն մէկն է: Այստեղ մեր տարեցները ո՛չ միայն առողջական ու բժշկական խնամք կը ստանան, այլեւ՝ սէր, հոգատարութիւն եւ որդիական գուրգուրանք: Նորին Ս. Օծութիւնը վստահեցուց տարեցները, թէ ինչպէս ինք՝ անձնապէս մնայուն կապի մէջ է տնօրէնին հետ եւ կը հետաքրքրուի անոնց կարիքներով, նոյնպէս ալ մեր ժողովուրդի զաւակները, իրենց օժանդակութեամբ եւ նուիրատուութեամբ, միշտ սատար կը կանգնին Սփիւռքի կեանքին մէջ յոյժ կարեւորութիւն ներկայացնող այս եզակի հաստատութեան:



Իր խօսքի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս բարձր գնահատեց Պատուելիին նուիրեալ ու բժախնդիր աշխատանքը, խնամակալութեան ու տիկնացյանձնախումբին պատրաստակամութիւնն ու նուիրուածութիւնը, բժիշկներուն ու բուժքոյրերուն անշահախնդիր աշխատանքն ու ազգային ծերանոցի առաքելութեան հաւատացող ու նեցուկ կանգնող բոլոր բարերարները, նուիրատուներն եւ բարեկամները:

Աւարտին, Նորին Ս. Օծութիւնը աղօթք բարձրացուց առ Աստուած եւ իր բարեմաղթութիւններով ծառայական նոր շունչ ու ոգի մաղթեց տնօրէնութեան, պաշտօնէլութեան եւ ամբողջ աշխատակազմին:

«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»

Արամ Ա. Կաթողիկոս, տօնական օրերու հայրական այցելութիւններու շարքին, կ'այցելէ նաեւ «Թոլնոց Բոյն»ի փոքրիկներուն եւ տօնակից կը դառնայ անոնց մանկական խնդութեանց: Առ այդ, Երեքշաբթի, 21 Դեկտեմբեր 2023-ին, ընկերակցութեամբ խումբ մը Միաբան հայրերու, Նորին Սրբութիւնը «Թոլնոց Բոյն»ի թոշնիկներուն կողմէն սիրալիր ընդունելութիւն ստացաւ եւ հաճելի ժամանակ անցուց՝ շրջապատուած տօնական մթնոլորտով:

Մտերմիկ հանդիպման պահուն, փոքրիկները Վեհափառ Հայրապետին հրամցուցին Ամանորեայ եւ Ս. Ծննդեան երգեր ու արտասանութիւններ: Թոշնիկներուն ցնծութիւնը գագաթնակէտին հասաւ, երբ Նորին Ս. Օծութենէն ստացան Նոր Տարուան իրենց նուէրները:



Աւարտին, Նորին Սրբութիւնը իր հայրական օրհնութիւնը փոխանցեց մանուկներուն եւ զնահատեց հոն տարուող աշխատանքները: Ան նաեւ զնահատեց պատասխանատու Հայր Սուրբերը՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեանն ու Հոգշ. Տ. Արտաւազդ Վրդ. Շառոյեանը, տիկնաց յանձնախումբը, պաշտօնէութիւնը եւ «Թոլնոց Բոյն»ի բարերարները, նուիրատուներն ու բարեկամները:

**ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ ՆՇՈՒԵՑԱԲ
Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱԲԱԲԱԳԻՆ ՏՕՆԸ**

Ս. Ստեփանոս նախասարկաւագին եւ առաջին մարտիրոսին յիշատակը նշուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարին մէջ, Կիրակի, 24 Դեկտեմբեր 2023-ին, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին: Ս. եւ Անմահ Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, մինչ Ս. Սեղանի սպասարկութիւնը կատարեց Դպրեվանքի Սարկաւագաց դասը: Ս. Պատարագի աւարտին, հաւատացեալները, Դպրեվանքի Սարկաւագաց դասուն թափօրին առաջնորդութեամբ, ուղղուեցան Վեհարան, ուր տեղի ունեցաւ Սարկաւագաց տօնը նշող կոկիկ յայտագիր մը:

Ս. Խորանին վրայ շարուած Սարկաւագներուն եւ հաւատացեալ ժողովուրդին տուած իր քարոզին մէջ, Սրբազան Հայրը կեդրոնացաւ Ս. Ստեփանոսի նուիրական կեանքին վրայ, որմէ ետք անդրադարձաւ Քրիստոսի աշխարհ գալով՝ ծառայութեան հասկացողութեան փոփոխութեան, ինչպէս նաեւ ներկայ դարու քրիստոնէական ծառայութեան կիրարկման եւ Արամ Ա. Կաթողիկոսին գլխաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տաժած ծառայութեան:





Այս իմաստով, քարոզիչ Սրբազան Հայրը իր խօսքը ուղղեց Դպրեվանքի սարկաւազներուն եւ յորդորեց անոնց սարկաւազաց աստիճանի փոքր ծառայութեան հաւատարիմ ըլլալով՝ կերտեն գալիք հոգեւորական աստիճաններու ծառայութեան պատրաստակամութիւնը, միշտ անկեղծ ու հաւատարիմ մնալով Դպրեվանքի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շունչին: Վերջապէս, Գեղամ Արքեպիսկոպոս անդրադարձաւ ծառայական կեանքին՝ Դպրեվանքի կեդրոնական դերին եւ յանուն Միաբանութեան ու հաւատացեալներուն, վեր առաւ Նորին Սրբութեան ծառայական առաքելութիւնը՝ երախտագիտութիւն յայտնելով անոր նուիրումին եւ աղօթք բարձրացնելով առ Աստուած, որ քաջառողջութիւն եւ պայծառամտութիւն պարգեւէ Վեհափառ Հայրապետին:

«Ուրախ լեւ...» շարականի երգեցողութեամբ Վեհարանի դահլիճ բարձրացած թափօրը վայելեց գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որ ընթացք առաւ «Նարեկ»ի ընթերցումով՝ Բրշ. Վահէ Սրկ. Ֆիլիքեանի կողմէ: Դպրեվանքի սարկաւազները հրամցուցին «Ստեփանոս քաղցրիկ տատրակ...» ու «Ուրնտրեցար...» Հայ եկեղեցւոյ գեղեցիկ շարականները, իսկ Բրշ. Սերժ Սրկ. Քիւշէրեան ասմունքեց «Ստեփանոս» կտորը: Յանուն Դպրեվանքի սարկաւազաց դասուն ուղերձ ընթերցեց աւարտական դասարանի աշակերտներէն Բրշ. Սուրէն Սրկ. Եղիայեան, որ ընդգծեց Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցող Ս. Ստեփանոսի տօնի նշման գեղեցիկ աւանդութեան կարեւորութիւնը, որ առիթ է սարկաւազութեան կոչումին ու եկեղեցական աստիճանի վերարժեւորման: Ան յայտնեց, որ սարկաւազ բառը իր մէջ կ'ամփոփէ քրիստոնէութեան ամբողջ հասկացողութիւնը, իսկ Անթիլիասի առաքելութիւնը կ'ամփոփուի մէկ բառով՝ ծառայութեամբ: Ան ըսաւ, որ Դպրեվանքի սարկաւազներուն առջեւ կը բացուի Քրիստոսի ծառայութեան նոյն եւ միակ ուղին, որպէսզի անոնք շարունակեն ապրիլ Քրիստոսի պատկերին համաձայն: Տիրացուն վստահեցուց, որ իրենց՝ եկեղեցւոյ խոնարհ կարգի սպասա-

ւորներուն համար ծառայութիւնը դարձած է կեանքի նշանաբան, ուստի, յանուն իր սարկաւազ եղբայրներուն, ուխտեց հաւատքով ու գործով եւ գիտակցաբար ստանձնել իրենց վստահուած կոչումը եւ սրբազան պարտաւորութիւնը:

Աւարտին, Նորին Սրբութիւնը փոխանցեց իր Հայրապետական պատգամը, վեր առնելով Ս. Ստեփանոսի անձն ու գործը բնորոշող յատկութիւններէն համեստութիւնը, որ կրօններու, բնականաբար նաեւ քրիստոնէութեան, բարոյական արժէքներու կարգին յատուկ տեղ ունենալով հանդերձ, դժբախտաբար այսօր սկսած է կամաց-կամաց նուազիլ մարդկային կեանքէն: Ան դիտել տուաւ, որ Ս. Ստեփանոսի տօնը կու գայ մեզի յիշեցնելու, թէ որքա՛ն հրամայական է համեստութիւնը մարդկային կեանքին մէջ: «Համեստութեան աղբիւրը եղաւ ու կը մնայ Աստուած ինձ», որ երկինքէն երկիր իջաւ, իր Միածին Որդւոյն ճամբով եւ ապրեցաւ ամէնէն համեստ պայմաններուն մէջ: Ինչպէս որ Քրիստոսի երկրաւոր առաքելութեան մէջ կը տեսնենք, նոյնպէս ալ եկեղեցւոյ սուրբերու ու հայրապետներու կեանքին մէջ յատակօրէն կ'արտացոլան համեստութեան տիրական ներկայութիւնը:

Նորին Ս. Օծութիւնը աւելի մանրամասնելով միտք բանին՝ յայտնեց, որ համեստութիւնը մեծութեան եւ հեղինակութեան նշան է, որ դժբախտաբար յաճախ մարդիկ կը շփոթեն տկարութեան ու խեղճութեան հետ, մինչ, խորքին մէջ, իսկական մեծութիւնը ինքզինք համեստութեամբ կ'արտայայտէ: Այս երեւոյթին պատճառներէն են համաշխարհայնացած աշխարհին մշակոյթը, որուն պարտադրած արժէքները «մեծութիւնը» տգիտութեամբ եւ ամբարտաւանութեամբ կ'արտայայտէ: Առ այդ, ան յորդորեց միշտ հետեւելու Ս. Ստեփանոսի օրինակին. «Այսօրուան պատգամը մեզի կու գայ Ս. Ստեփանոսէն եւ Ս. Ստեփանոսը իր կեանքի օրինակով մեզի կը յուշէ, թէ մենք պէտք է մեր կեանքը ապրինք համեստութեամբ: Մեր արժէքները, արժանիքները, առաւելութիւնները համեստութեան ճամբով արտայայտենք: Մեր մեծութիւնը, մեր իրագործումները համեստութեան ճամբով փոխանցենք մեր ժողովուրդի զաւակներուն, մեր եկեղեցւոյ, մեր ազգին ու մեր հայրենիքին» ընդգծեց Նորին Սրբութիւնը:

Վերջապէս, իր խօսքը ուղղելով սարկաւազներուն, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Սիրելի՛ սարկաւազներ, Ս. Ստեփանոսը պէտք է դառնայ տիպար ձեզի համար, տիպար՝ համեստութեան, եւ դուք այդ ոգիով Դպրեվանքին մէջ պիտի մեծնաք ու կազմաւորուիք, որպէսզի երբ երթաք մեր ժողովուրդին, տեսնեն ձեր մեծութիւնը, ձեր ծառայութիւնը, ձեր փառքը, ձեր պատիւը ձեր համեստութեան մէջ: Ս. Ստեփանոսի ճամբով դուք պիտի փախնէք իբրեւ հարազատ նշմարիտ սարկաւազութեան տիպար»: Ան իր պատգամը եզրափակեց բարձր գնահատելով Դպրեվանքի Տեսչութեան կազմն ու Ուսուցչական կազմը եւ սպասում յայտնեց, որ Ս. Ստեփանոսի ոգիով շարունակեն կազմաւորել Դպրեվանքի տղաքը:

ՅԱՏՈՒԿ ԽՆԱՄՔԻ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐՈՒ «ԶՈՒԱՐԹՆՈՅ» ԿԵԴՐՈՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Երեքշաբթի, 26 Դեկտեմբեր 2023-ի առաւօտուն, Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնակատարութիւններու ծիրին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց յատուկ խնամքի կարօտ «Զուարթնոց» կեդրոնի աշակերտները, գլխաւորութեամբ կեդրոնի Տնօրէնուհի՝ Վարդինէ Օհանեանի:

Մայրավանք ժամանելով՝ աշակերտները Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ հակիրճ աղօթքի պահ ունեցան եւ ստացան Ս. Հաղորդութիւն: Ապա, Կաթողիկոսարանի պարտէզին մէջ անոնք մտերմիկ հանդիպում ունեցան Նորին Արքեպիսկոպոսի հետ, որմէ ետք անոր ներկայացուցին իրենց սորված երգերն ու արտասանութիւնները: Հաստատութեան տնօրէնին երախտիքի խօսքէն ետք, Նորին Արքեպիսկոպոսն ու փոքրիկները միասնաբար հատեցին Նոր Տարուան կարկանդակը եւ այս առիթով, յանուն «Զուարթնոց»-ի մեծ ընտանիքին, տնօրէնուհին Նորին Ս. Օծութեան նուիրեց յուշանուէր մը:

Աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս իր բարձր գնահատանքը յայտնեց ի տես կեդրոնին տարած յոյժ կարեւոր աշխատանքին ու փոքրիկներուն նկատմամբ տաժած խնամքին ու հոգատարութեան եւ աղօթք բարձրացուց առ Աստուած, որ երկնային օրհնութիւններով լեցնէ կեդրոնը, պահպանէ անոր բնակիչները, տնօրէնութիւնը, բժշկական կազմն ու պաշտօնէութիւնը եւ Նոր Տարուան ու Ս. Ծննդեան բարեմաղթութիւններով յաջողութիւն, ոյժ եւ կորով մաղթեց «Զուարթնոց» հաստատութեան յառաջիկայ տարուան աշխատանքներուն:



ՀԱՅ ԴԱՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՍՓԻՒՌԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՄԱՐԴՈՒԺԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ
ԱՐՑԱԽԻ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԱՌՑԱՆՑ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՆՆԵՐԸ**

Ուրբաթ, 7 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոսի նախաձեռնած մասնագիտական քննարկումներու հինգերորդ առցանց նիստը կայացաւ:

Վեհափառ Հայրապետին հրաւիրած եւ նախագահած նիստին մասնակցեցան՝ Փրոֆ. Աշոտ Մելքոնեան, Փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան, Դոկտ. Արմէն Մարուքեան, Փրոֆ. Վահրամ Բալայեան, Դոկտ. Վիգէն Զըթըրեան, Դոկտ. Խաչիկ Տէր Ղուկասեան, Շահան Գանտահարեան եւ քարտուղար՝ Ահարոն Շիրտըմեան:

Օրակարգի առաջին կէտով Նորին Ս. Օծութինը զեկուցեց Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ Քոնկրէսի Ներկայացուցիչներու Տան Նախագահին եւ քոնկրէսականներու հետ իր ունեցած հանդիպումներուն մասին: Ան շեշտեց, որ հանդիպումներու ընթացքին անոնց փոխանցած է Արցախի ժողովուրդի հաւաքական վերադարձի, այդ վերադարձը իրականացնելու համար անվտանգութեան միջազգային երաշխիքներու ապահովման եւ ընդհանրապէս Արցախի ժողովուրդին իրաւունքներու պաշտպանութեան սկզբունքներու հարցերը:

Այնուհետեւ, նիստի երկրորդ մասը յատկացուեցաւ Հայաստանի մէջ գտնուող Արցախի պետական հաստատութիւններուն մէջ գործող անձնակազմներու կողմէն տարած խորհրդակցութիւններուն:

Օրակարգի երկու կէտերուն յաջորդեցին աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային նորագոյն իրադարձութիւններու լոյսին տակ քննարկումներ, որոնք ներառած էին Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան Եւրոպայի եւ Եւրասիայի բաժնի վարիչին յայտարարութիւնները, Պաքու կատարած այցելութիւնը, Ազրպէյճանի Նախագահին վերջին յայտարարութիւններն ու Ազրպէյճանի մէջ յանկարծակի որոշուած արտակարգ նախագահական ընտրութիւնները:

Արցախի մէջ քրիստոնէական քաղաքակրթութիւնը հարստացուցած հոգեւոր ժառանգութեան պահպանման, գերիներու փոխանակման եւ Պաքուի մէջ պատանդ նախկին նախագահներու եւ պետական գործիչներու ազատ

արձակման իրաւական եւ քաղաքական միջոցներու մասին կատարուած խորհրդակցութիւնները համալրեցին օրակարգը:

Վեհափառ Հայրապետը իր գոհունակութիւնը յայտնելէ ետք մասնագիտական մարդուժի ներկայացուցիչներու մասնակցութեամբ նման բարձրորակ եւ օգտաշատ քննարկումներու կայացման նկատմամբ՝ շեշտեց, որ անհրաժեշտութիւն է համահայկական օրակարգի կէտերու մշակումը եւ այս պարագային Արցախի նոր իրավիճակի լոյսին տակ հոգեւոր, քաղաքական, դիւանագիտական, իրաւական եւ տեղեկատուական մարզերու մէջ համակարգուած աշխատանք տանիլը:

Առցանց նիստի մասնակիցները շեշտեցին, որ այս հարթակին վրայ նման քննարկումներ շարունակելը կենսական նշանակութիւն ունին եւ կրնան մեծապէս օգտակար հանդիսանալ համահայկական տարողութեամբ աշխատանքներու ուղենիշներ ճշդելու առումով:



ԼԻԲԱՆԱՆԻ ՇԻԻԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԸ Կ'ԱՅՅԵԼԷ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

«ՄԵՆՔ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ ԵՆՔ,
ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԵՆՔ»

ՇէՅԽ ԱԼԻ ԱԼ-ԽԱԹԻՊ

Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր 2023-ին, հանդիպում մը տեղի ունեցաւ Վեհափառ Հայրապետին եւ Լիբանանի շիիթ համայնքի Հոգեւոր Պետ՝ Շէյխ Ալի Ալ-Խաթիպի միջեւ:

Հանդիպման Վեհափառ Հայրապետի կողքին ներկայ էին Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանապետ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան եւ Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան: Շէյխ Ալ-Խաթիպի կողքին ներկայ էին Մուֆթի Շէյխ Ապտ Ամիր Շամսըտտին, Շէյխ Մուհամմէտ Հիճազի, շիիթ կեդրոնի տեղեկատուական բաժանմունքի պատասխանատու՝ Ուասէֆ Աուատ եւ շիիթ համայնքի գործադիր վարչութեան անդամ՝ Ապտէլսալամ Շըքըր:

Ողջունելով շիրիթ համայնքի Հոգեւոր Պետին այցելութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանք, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ ինչպէս Լիբանանը բաղկացնող բոլոր համայնքներուն, նոյնպէս շիրիթ համայնքին հետ Լիբանանի Հայ համայնքը սիրալիր յարաբերութիւն ունի, գործակցելով այն բոլոր աշխատանքներու ծիրէն ներս, որոնց նպատակը Լիբանանի ներքին միասնականութեան ամրապնդումն է եւ երկրին բարգաւաճումը:

Անդրադառնալով նախագահական ընտրութեան, Նորին Սրբութիւնը շեշտեց կարելի փութով Լիբանանի Հանրապետութեան Նախագահ մը ունենալու հրամայականը, որպէսզի նոր կառավարութեան նշանակումով երկիրը իր բնական ընթացքը գտնէ:

Նորին Ս. Օծութիւնը խօսելով Իսրայէլի նախաձեռնած պատերազմին Կազայի դէմ, յիշեցուց որ Հայ ժողովուրդը միշտ եղած է պաղեստինեան արդար դատին կողքին, որովհետեւ արդարութեան ու մարդկային իրաւանց խնդիրը, ինչպէս նաեւ անկախ հայրենիք ունենալը Հայ ժողովուրդին պայքարը եղած է միշտ ու կը մնայ: Այս ծիրէն ներս Արամ Ա. Կաթողիկոս յիշեց, որ Հայ ժողովուրդը աւելիով պատճառ ունի կեցուածք ճշդելու Իսրայէլի նկատմամբ, որովհետեւ նոյն Իսրայէլն է, որ Թուրքիոյ կողքին զինամթերք ու ռազմաքաղաքական աջակցութիւն տուաւ ու կը շարունակէ տալ Ազրպէյճանին: Պէտք չէ մոռնալ, որ Իսրայէլեան ու թրքական զէնքերով մեծ թիւով Հայ զինուորներ ու քաղաքացիներ նահատակուեցան ու վիրաւորուեցան, ըսաւ Վեհափառ Հայրապետը: Ան իր խօսքին մէջ նաեւ յայտնեց, թէ իրեն եւ Լիբանանի հայութեան համար զարմանալի երեւոյթ էր, որ երբ Արցախը գրաւուեցաւ, անոր իրաւունքները ոտնակոխուեցան եւ աւելի քան հարիւր հազար հայեր գաղթական դարձան, Լիբանանի կարգ մը համայնքներ, ներառեալ շիրիթ համայնքը, մնացին լուռ, երբ անդին Հայաստանի դրացի ու բարեկամ երկիրը՝ Իրանը, միշտ մնաց Հայաստանի ամբողջականութեան պահպանման եւ Արցախի ժողովուրդի իրաւունքներու կողքին:

Շէյխ Ալ-Խաթիպ ուշադրութեամբ հետեւելով Վեհափառ Հայրապետին պարզած տեսակէտներուն ու մտահոգութիւններուն՝ ըսաւ, որ «Հայ համայնքը, իր բոլոր իւրայատկութիւններով, մեզի համար միշտ կը մնայ սիրելի ու յարգելի: Մենք տեղեակ ենք, թէ Յեղասպանութենէն ետք հայերը ինչ դժուարութիւններէ անցան եւ եկան Լիբանան՝ իբրեւ գաղթական, եւ այսօր կազմակերպուած ու կենսունակ համայնք են»: Ակնարկելով Արցախի հարցին՝ ան ըսաւ, թէ «հակառակ այն իրողութեան, որ Ազրպէյճան շիրիթ դաւանանքին կը պատկանի, մենք արդարութեան հետ ենք, ուստի՝ Արցախի ժողովուրդի իրաւունքներուն հետ»: Ապա, Շէյխ Ալ-Խաթիպ անդրադարձաւ Իսրայէլի կատարած անարգ արարքներուն Պաղեստինի եւ յատկապէս Կազայի ժողովուրդին դէմ: Ան ընդգծեց, որ այսօր քանդումն ու մահը Կազայի մէջ դարձած են

ամենօրեայ ներկայություն: Իր կարգին, Շէյխ Ալ-Խաթիպ շեշտեց Հանրապետության նախագահի շուտափոյթ ընտրություն կատարելու եւ երկիրը ընկերային-տնտեսական տագնապէն դուրս բերելու անհրաժեշտությունը:



Պաշտօնական փոխադարձ խօսքերէն ետք, երկու Հոգեւոր Պետերը նաեւ խօսեցան ընդհանրապէս շրջանը յուզող հարցերու մասին եւ այդ ծիրին մէջ Վեհափառ Հայրապետը պարզեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերը Սփիւռքէն ներս եւ անդրադարձաւ Իրանի Հայ համայնքին: Շէյխ Ալ-Խաթիպ, իր կարգին յիշեց, թէ ուսանած է Իրանի Դոմ քաղաքին մէջ եւ ծանօթ է Իրանի Հայ համայնքին, միաժամանակ յիշելով, որ միջ-կրօնական երկխօսութեան ընթացքին ան հանդիպած է Նորին Սրբութեան եւ ծանօթ է անոր ունեցած դերին:

Հանդիպման աւարտին, Շէյխ Ալ-Խաթիպ առաջարկեց, որ Ս. Ծննդեան տօնէն ետք, Հոգեւոր Պետերու հանդիպում մը տեղի ունենայ շիիթ համայնքի կեդրոնէն ներս: Նորին Սրբութիւնը ողջունեց այս նախաձեռնությունը:

Երկու Հոգեւոր Պետերու հանդիպումէն ետք, Շէյխ Ալի Ալ-Խաթիպ ներկայ թղթակիցներուն ընդհանուր գիծերով պարզեց հանդիպման ընթացքին քննարկուած նիւթերը: Նոյնը կատարեց Նորին Ս. Օծութեան անունով Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան:


ԵՐՈՒՍԱԴԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԸ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ Կ’ԵՆԹԱՐԿՈՒԻ ԽՈՒՄԲ ՄԸ ԱՆԾԱՆՕԹՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Ժընևեի եւ Երուսաղէմէն ներս գտնուող Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.) պատասխանատուներուն ճամբով, մօտէն կը հետեւի Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին շուրջ ստեղծուած մտահոգիչ կացութեան:

Ինչպէս Պատրիարքարանին կողմէ հրապարակուած եւ ստորեւ կցուած հաղորդագրութիւնը կը նշէ, շուրջ 30 անձերէ բաղկացած խումբ մը անծանօթ մարդիկ յարձակում գործած են Պատրիարքարանի Միաբանութեան ու պաշտօնէութեան վրայ, իբրեւ բողոքի արտայայտութիւն «Կովերու Պարտէզ»ին գծով Պատրիարքարանին առած իրաւական քայլերուն: Կան վիրաւորներ ու նիւթական վնասներ:

Ինչպէս միշտ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ու Հայ համայնքին եւ կոչ կ’ուղղէ մեր ժողովուրդի զաւակներուն զօրավիգ կանգնելու Պատրիարքութեան իրաւունքներուն եւ ապահովութեան:

ԴԻՒԱՆԱՏՈՒՆ
ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԵՐՈՒՍԱԴԵՍԻ



CHANCELLERY
 ARMENIAN PATRIARCHATE OF
 JERUSALEM

Թուական:
 Date: 28 December, 2023

Shortly after the vicious attacks of today, defamatory pictures have appeared on social media with a picture of His Eminence Bishop Koryoun Baghdasaryan accompanied by false and slanderous statements.


It is clear that after submitting a lawsuit against Xana Gardens Ltd. in the District Court of Jerusalem, the sued party, instead of responding with legal procedures to the lawsuit, they have instead chosen to target individuals like His Eminence by launching a character assassination and attributing egregiously false statements to a Bishop of the Armenian Patriarchate of Jerusalem.

Roughly six weeks ago, Mr. Danny Rothman (Rubenstein) submitted a complaint to the Police accusing His Eminence of statements of a similar defamatory nature. His Eminence began legal proceedings to protect his character and likeness, and to prove that the accusation was false.

His Eminence, after today new defamatory episode, will submit an official complaint to the Police, and to engage again through lawful means to protect his character and likeness.

Once again, these falsely attributed statements and slanders are pure fabrications.

DIVAN OF THE ARMENIAN PATRIARCHATE



P.O.Box: 14235 Jerusalem Zip Code 9191141 / TEL: (972) 2-6282331, Ext: 200
 Email: armpattivan@yahoo.com

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

ՓԻԹԸՐ ԵՒ ԳԵԻԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԵՑԱՆ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ»Ի ՇՔԱՆՇԱՆՈՎ

Ուրբաթ, 3 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան Փիթըր եւ Գեւիկ Պաղտասարեան եղբայրներուն կուրծքերը զարդարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին շնորհած «Կիլիկեան Ասպետ»ի շքանշանով:

Այս պարգևատրումը տեղի ունեցաւ Առաջնորդ սրբազան հօր նախագահութեամբ կազմակերպուած Ազգ. Վահան եւ Անոյշ Շամլեան վարժարանի ընդունելութեան ձեռնարկին՝ ի նպաստ վարժարանի ընդարձակման եւ Յակոբ եւ Հիլտա Պաղտասարեան մանկամսուրի հիմնադրման:

Պարգևատրման առիթով Նորին Սրբութեան յղած Կոնդակը ընթերցեց՝ Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեան:

Հուսկ, խօսք առնելով Թորգոմ սրբազան հայրը բարձր գնահատեց վարժարանի հիմնադիր բարերարներն ու նոր բարերարութիւններով վարժարանին տարածքն ու մասնաբաժինները ընդարձակելու կամք ցուցաբերող նուիրատուները, ինչպէս նաեւ բոլոր անոնք, որոնք զանազան ձեւերով նեցուկ կը կանգնին ազգային վարժարաններուն:

Նշենք, որ սոյն վարժարանի մարգասրահի բարերար՝ Յակոբ եւ Հիլտա Պաղտասարեան ամուլի երկու զաւակներուն՝ Փիթըր եւ Գեւիկ Պաղտասարեաններուն նուիրատուութեամբ կ'իրագործուի մանկամսուրին շինութիւնը:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒ
ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Եկեղեցական Ընտանիքներու Քարտուղարներու տարեկան համագումարը տեղի ունեցաւ 30 Հոկտեմբերէն 3 Նոյեմբեր 2023-ին, Պոսէի եւ Ժընեւի էքիմէնիք կեդրոններէն ներս: Այս ժողովին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուց Միջ-եկեղեցական Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Հրանդ Մ. Վրդ. Թահանեան:



Իր ներկայացուցած զեկոյցին մէջ, Հայր Հրանդ առաւելաբար կեդրոնացաւ Արցախի հարցին՝ դիտել տալով, որ Արցախի էթնիկ զտման վտանգին առնչուած միջազգային մամուլի արձագանգները եւ արտայայտուած պոռթկումները անբաւարար էին: Ան ընդգծեց, որ հակառակ բանաւոր դատապարտումներուն, միջազգային պատկան մարմինները որեւէ մէկ քայլ չառին դադրեցնելու համար մարդկային իրաւունքներու խախտումները:

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհ. Քարտուղարը, որ ներկայ էր համաժողովին, Ե.Հ.Խ.-ի ամբողջական նեցուկը արտայայտեց Արցախահայութեան եւ անոր արդար դատին:

Հայր Հրանդ նաեւ խօսեցաւ Հայաստանի մէջ ապաստան գտած 120 հազար Արցախահայութեան իրավիճակին մասին եւ ընդգծեց անոնց նուազագոյն իրաւունքները: Ան մերժեց Ազրպէյճանի հաստատումները, որ իբրեւ թէ

վերջինս կ'ողջունէ հայերուն Ազրայէյճանի քաղաքացիներ դառնալը. կեղծիք մը, որուն ո՛չ մէկ մարդկային իրաւանց պաշտպան կազմակերպութիւն լրջօրէն կ'անդրադառնայ, մինչ, զուգահեռաբար, Ալիեւի վարչակարգը կը սպառնայ պատերազմի նոր ճակատներ բանալ Հայաստանի դէմ:

Ժողովը առաջնահերթութիւն տուաւ նաեւ բռնի տեղահանուածներու օգնութիւն մատակարարել. ժողովականները վստահեցուցին իրենց յանձնառութիւնը այս գծով:



ՄԵՍՐՈՂ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ ՄԻԶ-ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, 6-7 Նոյեմբեր 2023-ին, մասնակցեցաւ Ապու Տապիի (Ա.Մ.Է.) մէջ տեղի ունեցած միջ-կրօնական համագումարին:

Այս համագումարը կազմակերպուած էր Վատիկանի, Ա.Մ.Է.ի եւ իսլամ բանասէրներու միութեան միացեալ նախաձեռնութեամբ: Համագումարին նպատակն էր քննարկում կատարել Ապու Տապիի մէջ կայանալիք կենսոլոր-



տի նուիրուած միջ-պետական հանդիպումի մասին՝ միջ-կրօնական տեսանկիւնէն դիտուած:

Համագումարին ներկայ գտնուած կրօնապետերը հակիրճ ելոյթներ ունեցան, իսկ աւարտին, համագումարը հանդէս եկաւ ընդհանուր յայտարարութեամբ: Յայտնենք, որ Մեսրոպ սրբազան հայրը այս առիթով հանդիպումներ ունեցաւ շարք մը կրօնապետերու հետ:



ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԷՋ

Չորեքշաբթի, 6 Դեկտեմբեր եւ Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքսէմէզեան Վատիկանի մէջ հետեւեալ պաշտօնական հանդիպումները ունեցաւ.-

ա) Չորեքշաբթի, 6 Դեկտեմբերի առաւօտեան ժամը 11:00-ին, սրբազան հայրը այցելեց Վատիկանի Միջ-եկեղեցական բաժանմունքը եւ հանդիպեցաւ բաժանմունքի նախագահ՝ Քուրթ Քոխ Կարտինալի անմիջական օգնականներուն՝ Պրայըն Ֆարէլ Եպիսկոպոսին եւ Հայր Հիասինթ Տեսթիվէլին հետ: Կարտինալը անհանգստութեան պատճառաւ բացակայեցաւ հանդիպումէն: Հանդիպումի ընթացքին, շօշափուեցան Կաթողիկ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներուն առնչուած միջ-եկեղեցական հարցեր, նաեւ անդրադարձ կատարուեցաւ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետի վախճանման 850 ամեակին առնչուած ապագայ ծրագիրներուն: Ապա, քննարկուեցան միջ-եկեղեցական շարժումը ընդգրկող հարցեր:

բ) Նոյն օրը երեկոյեան ժամը 5:00-ին, Նարեկ Արքեպիսկոպոս այցելեց Վատիկանի Եպիսկոպոսներու Հետ Յարաբերութեանց բաժանմունքի նախկին նախագահ եւ Գանատայի Քէպէք նահանգի նախկին Առաջնորդ՝ Մարք Ուէլլէթ կարտինալին, որ այժմ հանգստեան կոչուած է եւ կը գլխաւորէ քահանաներու կազմաւորման հիմնարկ մը: Հանդիպման ընթացքին փափաք յայտնուեցաւ գործակցութիւն ստեղծել այս հիմնարկին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ:

գ) Հինգշաբթի, 7 Դեկտեմբերի առաւօտեան ժամը 10:00-ին, սրբազան հայրը ընդունուեցաւ Ն.Ս. Ֆրանսիս Պապին կողմէ եւ Վեհափառ Հայրապետին եղբայրական ողջոյնները փոխանցելէ ու պատշաճ խօսք մը արտասանելէ ետք, Սրբազան Քահանայապետին նուիրեց իր հեղինակած Ս. Գրիգոր Նարեկացիի «Խրատ Ուղիղ Հաւատքի Եւ Առաքինի Մաքուր Վարքի – Instruc-



tion on the Orthodox Faith and Virtuous and Pure Life» հատորը, որ Պապին ձօնուած էր՝ յերախտագիտութիւն 2015-ին Ս. Գրիգոր Նարեկացին «Եկեղեցւոյ Տիեզերական Վարդապետ» հոշակելուն: Իր խօսքին մէջ, Նարեկ սրբազան հայրը անդրադարձաւ Արցախի, Հայաստանի ու Լիբանանի իրավիճակներուն եւ մեր ժողովուրդի զաւակներուն դի-

մագրուած մարտահրաւէրներուն ու այս բոլորին յաղթահարման համար Արամ Ա. Կաթողիկոսի նախաձեռնութիւններուն:

դ) Հինգշաբթի, 7 Դեկտեմբերի կէսօրուան ժամը 12:30-ին, սրբազան հայրը այցելեց Վատիկանի Արեւելեան Կաթողիկէ Եկեղեցիներու բաժանմունքը եւ հանդիպեցաւ բաժանմունքի նախագահ՝ Գլաուտիօ Կուճերոթթի կարտինալին հետ ու քննարկեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Արեւելեան Կաթողիկէ Եկեղեցիներուն առնչուած գործակցութեան բնագաւառները: Կարտինալը նաեւ հետաքրքրուեցաւ Լիբանանի ընդհանուր վիճակով եւ լիբանանահայութեան դիմագրուած դժուարութիւններով:

Այս այցելութիւնները եզակի առիթ հանդիսացան, որ Վատիկանի բարձրաստիճան ներկայացուցիչները անգամ մը եւս ընդգծեն Վեհափառ Հայրապետին միջ-եկեղեցական, միջ-կրօնական ու միջազգային բանալի դերակատարութիւնը եւ յայտնեն մեր Ս. Աթոռին հետ իրենց երկարամեայ ու սերտ գործակցութեան վերանորոգ պատրաստակամութիւնը:



ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ՀՈՈՍԻ ՄԷՉ

30 նոյեմբերին 1 Դեկտեմբեր 2023-ին, օրհնութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեանն ու Հոգշ. Տ. Պսակ Վրդ. Թէփիրճեանը Հռոմի մէջ մասնակցեցան Վատիկանի Պապական Արեւելագիտութեան Հիմնարկին կողմէ կազմակերպած Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850 ամեակին առթիւ տեղի ունեցած երկօրեայ միջազգային գիտաժողովին:

Գիտաժողովը լուսարձակի տակ բերաւ Շնորհալի Հայրապետին աստուածաբանութիւնը, շարականները, հովուական խնամքը, երկասիրութիւններն ու միջ-եկեղեցական յարաբերութիւնները:

Նարեկ սրբազանը ընթերցեց Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանի (Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմին) «Ս. Ներսէս Շնորհալի աստուածաբանութիւնը եւ միջ-եկեղեցական գործը» խորագիրը կրող զեկուցումը եւ ապա իր կողմէ ներկայացուց Արամ Ա. Կաթողիկոսին գահակալութեան օրերուն Անթրիպասի միջ-եկեղեցական յարաբերութիւններուն լայն շրջագիծը:



ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ԴՊՐԵՎԱՆԵՑԻԻՆ ԱՂՕԹԱԿԱՆ ՍԿՉԲՆԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Տարիներու քաղցր աւանդութեան համաձայն, այս տարի եւս, Ուրբաթ, 3 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, Դպրեվանքի «Բրաբրոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, տնօրինութեամբ Դպրեվանքի տեսչական կազմին եւ կազմակերպութեամբ Ուսանողական խորհուրդին, տեղի ունեցաւ «Աղօթքի մրցում», որուն մասնակցեցան Դպրեվանքի նորեկ սաները:

Յայտագիրը ընթացաւ հետեւեալ ձեւով.- Բացման խօսքով հանդէս եկաւ Գ. Ընծայարանի սաներէն՝ Բրշ. Վահէ Սրկ. Ֆիլիքեան: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Մաքուր սրտով եւ հաստատուն հաւատքով աղօթելը աւելի անգին է, քան որեւէ մրցանակի արժանանալը»: Ապա, Ընծայարան բաժնի աշակերտները երգեցին «Քրիստոս ի Մէջ...» շարականը, որմէ ետք ընթերցուեցան Աստուածաշունչէն եւ «Նարեկ» Աղօթամատեանէն հատուածներ:

Նորեկ սաները հերթաբար հրաւիրուելով, արտասանեցին իրենց պարտադիր եւ ընտրովի աղօթքները: Մրցումէն ետք, բեմ բարձրացաւ Յովիկ Խա-



չի կեան, որպէսզի ասմունքէ «Աստուած» բանաստեղծութիւնը, որուն դաշնամուրի նուագով ընկերակցեցաւ Լեւոն Սեդրակեանը: Ասմունքի աւարտին, ընծայարականները բեմ բարձրանալով երգեցին Կոմիտասի մանուկներու «Հայր Մեր»ը:

Դատական կազմի խորհրդակցութենէն ետք, յայտարարուեցան արդիւնքները: Առաջին հանդիսացաւ Յակոբ Սիսանեան, երկրորդ՝ Սարգիս Պալապանեան եւ երրորդ՝ Անդրանիկ Թումայեան:


Իր փակման խօսքին մէջ, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, նախ գնահատեց Դպրեվանքի նորեկ սաները, իրենց պատրաստուած ու համարձակ ներկայացումներուն համար եւ ապա շեշտելով աղօթքի կարեւորութիւնը Դպրեվանքի կեանքէն ներս, ըսաւ. «Աղօթքը կեանք պարգեւող զօրութիւն է: Եթէ կ'ուզենք կենսունակ կեանք մը ապրիլ, աղօթքով նայինք կեանք պարգեւող մեր Փրկիչին եւ զգանք իր ներկայութիւնը, որովհետեւ հոն պիտի գտնենք այն զօրութիւնը, որ կը թափանցէ մեր հոգիներէն ներս»:

Այս հոգեպարար երեկոն իր լրումին հասաւ հաւաքական աղօթքով:

ԴՊՐԵՎԱՆՔԸ ՈԳԵԿՈՉԵՑ ԱՐՑԱԽԻ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՅԻՇԱՏԱԿԸ

Ուրբաթ, 10 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, Դպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, տնօրինութեամբ Դպրեվանքի տեսչական կազմին եւ կազմակերպութեամբ Ուսանողական խորհուրդին, ոգեկոչուեցաւ Արցախի 44-օրեայ պատերազմի յիշատակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի Ընծայարան բաժնի սանե-



րէն՝ Բրշ. Հրակ Սրկ. Թաշճեան: Տիրացուն իր խօսքին մէջ ըսաւ. «Որքան հեռու ըլլանք մեր Հայրենիքէն, անպայման ընելիք մը ունինք: Իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի սաներ, չենք մոռնար եւ պիտի չմոռնանք մեր հերոսներուն եւ սուրբ նահատակներուն արեան գինը եւ այսպիսով է, որ մենք մաս եւ բաժին պիտի դառնանք մեր ժողովուրդի արդար իրաւունքի դատին ու պայքարին»: Բացման խօսքէն ետք, Դպրեվանքիներուն սիրտէն ժայթքեց Արցախի օրհներգը: Ապա, «Այգը՝ Հայերու» ասմունքը արտասանեց Սարգիս Նահապետեան:

Օրուան դասախօսն էր տարածաշրջանային քաղաքականութեան վերլուծաբան, հետազոտող եւ սփիւռքագէտ, AUST համալսարանի Դասախօս՝ Եղիա Թաշճեան: Ան իր խօսքին մէջ կարեւորութեամբ շեշտեց պատերազմի ժամանակ զգացական մօտեցում չունենալու անհրաժեշտութիւնը եւ վեր առաւ այն գաղափարը, թէ Արցախի պատերազմը կրօնքներու հարց չէր, այլ՝ շրջակայ պետութեանց շահերու հարցը:

Այնուհետեւ, Գ. Ընծայարանի սաներէն՝ Բրշ. Վարդան Սրկ. Ասայեանը բեմ բարձրանալով, ընթերցեց «Վանեցոց “Հայր Մեր”ը»: Ապա, Յովհաննէս Յովհաննէսեան բեմ բարձրանալով երգեց «Ղարաբաղ» երգը, որուն դաշնամուրով ընկերացաւ Լեւոն Սեդրակեանը:

Աւարտին, տեսուչ Հայր սուրբը բեմ բարձրանալով արտասանեց իր սրտի խօսքը: Հոգշ. Հայր սուրբը իր խօսքին մէջ ըսաւ. «Մեր պատմութեան մէջ, պարտութեան միշտ ալ յաջորդած է յաղթանակը, որովհետեւ գիտենք շարչարանքներէ անցնելով, յարուստին առնել, որպէսզի մեր ազգին ու դատին սիրտն ու ոգին դառնանք»: Իր սրտի խօսքէն ետք, տեսուչ Հայր սուրբը փոքր յուշանուէրով մը պատուեց օրուան դասախօսը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ԱՌՆԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 17 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, Դպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, տնօրինութեամբ Դպրեվանքի տեսչական կազմին եւ կազմակերպութեամբ Ուսանողական խորհուրդին, տեղի ունեցաւ դասախօսութիւն՝ «Առողջապահական գիտելիքներ՝ մարմինի խնամքի եւ մաքրութեան» նիւթով:

Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի Ընծայարան բաժնի սաներէն՝ Յովհաննէս Կիս.Սրկ. Պայտունեան, որ իր խօսքին մէջ ըսաւ. «Բժշկութիւնը ասպարէզ եւ գիտութիւն ըլլալով հանդերձ, նաեւ վարդապետութիւն է. սակայն այնպիսի առաքելութիւն մըն է, որ կը պահանջէ զօհողութիւն եւ ծառայութիւն: Պէտք չէ մոռնալ, որ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, բժշկութիւն-



ներ կատարեց եւ մեզի պատուիրեց մարդու միտքն ու հոգին բժշկել՝ իր տուած շնորհքով ու զօրութեամբ»:

Օրուան դասախօսն էր Պրիկատիր Ժեներալ՝ Տոքթ. Կարապետ Ճէօքճեանը, որ ունի վաստակաւոր ծառայութիւն աշխարհի զանազան երկիրներու մէջ: Դասախօսը իր խօսքին մէջ ըսաւ. «Որքան որ մեր միջավայրը կարենանք մաքուր պահել, այնքան հեռու վանած կ'ըլլանք հիւանդանալու վտանգը, սակայն նոյնքան անհրաժեշտ է մեր անձերուն մաքրութիւնը»: Դասախօսը նաեւ կարեւորեց առողջապահական օրէնքները յարգելու անհրաժեշտութիւնը: Դասախօսութենէն ետք, Դպրեվանեցիներ զանազան հարցադրումներով յաւելեալ լուսաբանութիւններ ստացան դասախօսին կողմէ:

Աւարտին, տեսուչ Հայր սուրբը բեմ բարձրանալով փոխանցեց իր խօսքը: Ան բոլորին անունով երախտագիտութիւն յայտնեց դասախօսին, թէ՛ անոր տուած դասախօսութեան եւ թէ՛ անոր յանձն առած գոհողութիւններուն՝ դպրեվանեցիներուն առողջութեան ի խնդիր: Ապա ըսաւ. «Մենք մեր անձերը առողջ պահելու համար, անհրաժեշտ է որ մեր շրջապատը մաքուր պահենք: Եթէ յաջողինք ուշադիր ըլլալ մեր միջավայրի մաքրութեան նկատմամբ, ուրեմն կը յաջողինք անհանգստութիւնները հեռու պահել մեզմէ: Այս սկզբունքով Դպրեվանքեան կեանքը կը սորվեցնէ մեզի՝ հաւաքական կեանքը ապրիլ մաքուր եւ առողջ միջավայրի մէջ, ուր իւրաքանչիւրիս առողջութիւնը իրարու շողկապուած է»:

Տեսուչ Հայր Սուրբը յուշանուէրով մը պատուեց Տոքթ. Կարապետ Ճէօքճեանը:

**ԴՊՐԵՎԱՆՔԸ ՆՇԵՑ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԻՈՐԻՉՆԵՐՈՒ՝
Ս. ԹԱԴԵՆՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԹՈՒՂԻՄԵՆՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՏՕՆԸ**

Ուրբաթ, 1 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Պիքֆայայի «Ս. Աստուածածին» մատրան մէջ, տեղի ունեցաւ նախատօնակ եւ մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթուղիմէոս առաքեալներու տօնին առիթով:

Այս առիթով Ս. Պատարագը մատուցեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբաններէն՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Չուալերթանեան:



Դպրեվանեցիները իրենց աղօթքը բարձրացուցին առ բարձեալն Աստուած եւ առաքեալներուն բարեխօսութիւնը խնդրելով, իրենց մասնակցութիւնը բերին նախատօնակին եւ Ս. Պատարագին:

Նոյն օրը, Ս. եւ Անմահ Պատարագէն ետք, Դպրեվանքի «Բրաբիոն Տումանեան» հանդիսասրահին մէջ, տնօրինութեամբ Դպրեվանքի տեսչական կազմին եւ կազմակերպութեամբ Ուսանողական խորհուրդին, տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր մը՝ նուիրուած Ս. Թադէոս եւ Ս. Բարթուղիմէոս լուսաւորիչ առաքեալներուն:

Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի Գ. Ընծայարանի սաներէն՝ Բրշ. Դրօ Սրկ. Կիւլէսէրեան: Ան ըսաւ. «Այսօր իբրեւ Հայ Առաքելական Եկեղեցի, հպարտութեամբ կը կանգնինք աշխարհին առջեւ, որովհետեւ Ս. Թադէոս եւ Ս. Բարթուղիմէոս առաքեալները յանձն առին իբրեւ սերմնահատիկ իյնալ Հայաստանի հողին վրայ»:



Բացման խօսքին յաջորդեց թատերական ներկայացում մը, նուիրուած զոյգ առաքեալներու կեանքին ու գործին, որուն ընթացքին կատարուեցաւ Աւետարանի ընթերցում, զոր կատարեց Բրշ. Մինաս Կիս.Սրկ. Ճանսըզեան: Ապա, «Նարեկ» աղօթամատեանէն հատուած մը ընթերցեց Գաբրիէլ Թահանեան, որմէ ետք Ժան Օգչաօղլեան ընթերցեց 51-րդ Սաղմոսը: Զոյգ առաքեալներուն նուիրուած ասմունքով մը հանդէս եկաւ Բրշ. Սերժ Սրկ. Քիւշէրեան, որուն տուտուկի նուագով ընկերակցեցաւ Բրշ. Նշան Սրկ. Անտրեան: Թատերգութեան աւարտին, մասնակից դպրեվանեցիները երգեցին «Մարտիրոսներու Երգը»:

Այնուհետեւ, Դպրեվանքի տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան իր սրտի խօսքը ուղղելով դպրեվանեցիներուն, վեր առաւ զոյգ առաքեալներուն նահատակութեան եւ զոհողութեան ոգին: Ապա ըսաւ. «Առաքեալները կոչուած էին Քրիստոսի վարդապետութիւնը ամբողջ աշխարհին աւետելու, ի մասնաւորի Հայաստան աշխարհին: Ինչպէս նաեւ, անոնք իրենց ընտանիքները ձգեցին, որպէսզի նուիրուին այս առաքելութեան: Առաքեալները իրենց աչքին առջեւ ունէին նահատակութեան ուղին՝ Քրիստոսի անունին համար, սակայն վայրկեան մը իսկ շտատամսեցան իրենց առաքելութիւնը աւարտին հասցնելու: Ահա նոյն գիտակցութեամբ՝ նոյն առաքելութիւնը ունինք մենք իբրեւ դպրեվանեցիներ»:

Աւարտին, տեսուչ Հայր սուրբը տեսչական կազմին եւ դպրեվանեցիներուն անունով շնորհակալութիւն յայտնեց Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալերթեանին, որ բարձրացաւ Դպրեվանք՝ մատուցելու համար առաքեալներու յիշատակին նուիրուած Ս. Պատարագը, որմէ ետք իր բարձր գնահատանքը յայտնեց Ուսանողական խորհուրդին եւ յայտագիրին մասնակից բոլոր դպրեվանեցիներուն:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ ՃՈՆԱՑՈՒՑ ԴՊՐԵՎԱՆՔԻ ԵՐԵԿՈՆ

Չորեքշաբթի, 6 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Դպրեվանքի տեսչական կազմի տնօրինումով, Դպրեվանք բարձրացան Համազգայինի «Բ. Կանաչեան» Երաժշտական Գոլէճի աշակերտներէն խումբ մը, գլխաւորութեամբ՝ Պրն. Գէորգ Քէշիշեանին:



Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան, որ ներկայացուց երաժշտութեան արժէքը մեր կեանքին մէջ: Ան իր խօսքին մէջ ըսաւ. «Երաժշտութիւնը հոգիէն բխող մեղեդին է, որուն ոյժը խորապէս ազդեցիկ է»:

Ապա, սկիզբ առաւ տպաւորիչ յայտագիրը՝ Ամանորի եւ Ս. Ծննդեան երգերով ու նուագով, որոնք իսկապէս ներշնչեցին Դպրեվանքի սաները:

Աւարտին բեմ բարձրացաւ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, որ գնահատեց երիտասարդ երաժիշտները, որոնք այս աննըպաստ ու ցուրտ օդին բարձրացան Դպրեվանք եւ տօնական երգերով ջերմացուցին մթնոլորտը: Ան ըսաւ. «Դպրեվանքը եւ Համազգայինը լծակից հաստատութիւններ են. Դպրեվանքը իր հոգեւոր ու կրօնական բնոյթով, իսկ Համազգայինը՝ մշակութային ու արուեստի բնոյթով կը սատարեն ազգային արժէքներու պահպանման»:

Իր խօսքի աւարտին, Հոգշ. Հայր սուրբը յուշանուէրով մը գնահատեց Համազգայինի «Բ. Կանաչեան» դպրոցի ազգանուէր առաքելութիւնը:

**ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝
ԽԱԶՔԱՐԻ ԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՍԻՆ**

Օգտուելով գանատաբնակ հանրայայտ լուսանկարիչ՝ Հրայր Բազէի Անթիլիաս գտնուելու առիթէն, Ուրբաթ, 8 Դեկտեմբեր 2023-ի յետմիջօրէին, Դպրեվանքի տեսչութիւնը կազմակերպեց դասախօսութիւն մը խաչքարներու արուեստի մասին, որ Հրայր Բազէն իր լուսանկարչական ասպարէզին շնորհիւ արձանագրած է երկար տարիներու վրայ:



Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի Ա. Ընծայարանի սաներէն՝ Գաբրիէլ Թահանեան: Ան դիտել տուաւ, որ խաչքարագործութիւնը արուեստէն անդին, լուռ վկան է մեր պատմութեան, մշակոյթին եւ մեր ինքնութեան:

Ապա Հրայր Բազէ մանրամասնօրէն ներկայացուց խաչքարերու տեսակները եւ զանազան երկիրներէ հաւաքած պատկերները: Յարգելի դասախօսը իր խօսքին մէջ ըսաւ. «Դարերու ընթացքին խաչքարի արուեստը զարգացաւ եւ հարստացաւ զանազան խորհրդանիշերով: Եթէ փորձենք վերլուծել զանոնք, պիտի տեսնենք անկենդան քարի ետին թաքնուած կենսատու խորհուրդ մը»:

Աւարտին, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան շնորհակալական խօսքի կողքին, յայտնեց հետեւեալը. «Հայ ժողովուրդը, մանաւանդ դժուար օրերու ընթացքին, իր յոյսի աչքերը միշտ սեւեռած է խաչին ու Խաչեալէն եկած աստուածային զօրութեան»: Հուսկ, փոքր յուշանուէրով մը պատուեց օրուան դասախօսը:

ՆԱԽԱՏՕՆԱԿ՝ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱԻԱԳԻ ՏՕՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Քրիստոնէական եկեղեցւոյ առաջին Սարկաւագին եւ Մարտիրոսին՝ Սուրբ Ստեփանոս նախավկայի տօնին առիթով, Ուրբաթ, 22 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Պիքֆայայի «Ս. Աստուածածին» մատրան մէջ տեղի ունեցաւ հանդիսաւոր նախատօնակ:

Նախատօնակին ներկայ էին Դպրեվանքի ուսուցիչներն ու Տիկնաց խորհուրդը:



ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ԽՐԱԽՃԱՆՔԸ

Ուրբաթ, 22 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Դպրեվանքի մեծ ընտանիքը, իր տեսչական կազմով, Տիկնաց յանձնախումբով, ուսուցչակազմով եւ աշակերտութեամբ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ներկայութեամբ դիմաւորեց Կաղանդ պապուկը՝ սաներուն կողմէ պատրաստուած գեղարուեստական յայտագիրով մը, որ կը բովանդակէր սրտի խօսքեր, ասմունքներ եւ երգեր:

Հաւաքոյթին սրտի խօսք արտասանեց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, որ առաջին հերթին իր խորին երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին՝ անոր ցուցաբերած հայրական

գուրգուրանքին ու խնամքին համար: Ան դիտել տուաւ, որ սաները Դպրեվանքին հանդէպ սէր ու կապուածութիւն կը զգան՝ ներշնչուելով Նորին Սըրբութեան օրինակէն:



Ապա, Հոգշ. Հայր սուրբը հրաւիրեց Նորին Ս. Օծութիւնը, որպէսզի ներկաներուն փոխանցէ իր հայրական օրհնութիւնն ու սրտին խօսքը: Արամ Ա. Կաթողիկոս իր բարձր գնահատանքը յայտնեց Դպրեվանքի տեսչական կազմին, ուսուցչակազմին եւ Տիկնաց յանձնախումբին: Ան շեշտեց Դպրեվանքին կոչման գիտակցութեան կարեւորութիւնը եւ յուսադրեց ներկաները, որպէսզի այս դժուար օրերուն հաստատ եւ վճռակամ մնան իրենց առաքելութեան մէջ:

Աւարտին, Վեհափառ Հայրապետն ու Դպրեվանքի մեծ ընտանիքը յիշատակելի խմբանկար մը առին:

Դպրեվանքին մաղթանքն է, որ 2024 տարին բոլորին համար ըլլայ Աստուծոյ օրհնութիւններով եւ շնորհքներով բեղուն տարի մը:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՀՈԳԵԻՈՐ ԼՍԱՐԱՆ՝
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ**

Բարձր հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 20 տարիներէ ի վեր, ամէն Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00-11:00, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարէն ներս կը կատարէ Հոգեւոր Լսարան, ուր Միաբան հայրերու կողմէ սաղմոսասացութեամբ, շարականի ուսուցումներով, աղօթքներով ու մանաւանդ կրօնական խորհրդածութիւններով, մեր ժողովուրդի զաւակներուն կը ջամբուին հոգեւոր մատակարարում:

Առ այդ, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընթացքին, կատարուած են հետեւեալ հոգեւոր խորհրդածութիւնները.-

ա) 7 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան խօսեցաւ «Աստուածային սէրը եւ այսօրուան մարդկութիւնը» նիւթին մասին:

բ) 14 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան խօսեցաւ «Հին Կտակարանը հիմք՝ որպէս Նոր Կտակարանի» նիւթին մասին:

գ) 21 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան խօսեցաւ «Շնորհքները արժեւորելու արուեստը» նիւթին մասին:

դ) 28 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան խօսեցաւ «Մեր կեանքի դժուարութիւնները եւ Աստուծոյ ներկայութիւնը» նիւթին մասին:

ե) 5 Դեկտեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան խօսեցաւ «Վազենք՝ Տիրոջ հանդիպելու համար» նիւթին մասին:

զ) 12 Դեկտեմբեր 2023-ին, Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Սարգիսեան խօսեցաւ «Աստուծոյ վստահիլ» նիւթին մասին:

է) 19 Դեկտեմբեր 2023-ին, Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան ընդհանուր արժեւորում մը կատարեց երեք ամիսներու վրայ տարուած աշխատանքին, ինչպէս նաեւ Հոգեւոր Լսարանի տիկիւններուն կողմէ լսեց զանազան տեսակի առաջարկներ:

**ՀՈԳԵՍՏԱԻՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝
«ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԵԱՆՔ» ՅԱՅՏԱԳՐԻ ԸՆԴՄԵՉԵՆ**

Բարձր հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 3 տարիներէ ի վեր, համագործակցութեամբ կիրառանալի «Վանայ Ձայն» ռատիոկայանին, ժողովուրդին կը մատուցէ հոգեւոր, բարոյախօսական եւ դաստիարակչական յայտագիր մը՝ «Հաւատք եւ Կեանք» խորագրով, որ տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, ուղիղ սփռումով:

Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընթացքին, Միաբան հայրերու կողմէ կատարուեցան հետեւեալ խորհրդածութիւնները.-

ա) 2 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան խօսեցաւ «Եկեղեցին՝ երէկ եւ այսօր» նիւթին մասին:

բ) 9 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուպերթանեան խօսեցաւ «Զգուշացում սխալ վարդապետութիւն ուսուցանողներէ» նիւթին մասին:

գ) 16 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալվրճեան խօսեցաւ «Անդրէաս եւ Փիլիպպոս առաքեալներ» նիւթին մասին:

դ) 23 Նոյեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խօսեցաւ «Հայ եկեղեցւոյ օրացոյցին հոլովոյթը» նիւթին մասին:

ե) 30 Նոյեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան խօսեցաւ «Հայ եկեղեցւոյ կնքահայրութիւնը» նիւթին մասին:

զ) 7 Դեկտեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեան խօսեցաւ «Հայ եկեղեցականը իբրեւ Հովիւ» նիւթին մասին:

է) 14 Դեկտեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան խօսեցաւ Ս. Ծննդեան թուականը միացնելու հարցը եւ խորհուրդին պատգամը» նիւթին մասին:

ը) 21 Դեկտեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան խօսեցաւ «Կերտել քրիստոնէական նկարագիր» նիւթին մասին:

թ) 28 Դեկտեմբեր 2023-ին, Բրշ. Հրակ Սրկ. Գրտանեան խօսեցաւ «Բարոյական արժէքները՝ Քրիստոսի լոյսով» նիւթին մասին:

ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԷՉ

Լիբանանի Հայ գաղութի կեանքէն ներս գործող հոգեւոր, ընկերային, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ, զանազան ծրագիրներ եւ ձեռնարկներ իրագործեցին եւ համագործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Միաբան հայրեր հիւրընկալեցին:

Միաբան հայրերը յիշեալ ձեռնարկներու ընդմէջէն, եկեղեցւոյ առաքելութիւնը տարին ժողովուրդին մէջ, իրենց ներկայութեամբ եղան ժողովուրդին հետ եւ իբրեւ Հայ եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներ՝ իրենց ծառայութիւնը մատուցին ժողովուրդին:

Այս առիթով, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընթացքին, անոնք պատգամներով, քարոզախօսութեամբ ու դասախօսութիւններով իրենց մասնակցութիւնը բերին վերոյիշեալ ձեռնարկներուն.-

ա) Հինգշաբթի, 2 Նոյեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ «Գարակէօզեան» Հաստատութեան, «Շամլեան-Թաթիկեան» վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Բ. խումբի Հոգեւոր Լսարանը: Օրուան Հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուալթրթանեան, նիւթ ունենալով՝ «Ներկայ դժուար պայմաններուն տակ՝ չլուսահատիլ եւ Աստուծոյ ապաւինիլ» խորագիրը:

բ) Հինգշաբթի, 2 Նոյեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ Հայաշէնի «Ս. Յովհաննու Կարապետ» եկեղեցւոյ Ծխատէր Քահանայ Հօր եւ Թաղականութեան, տեղւոյն եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ 2023-24 տարեշրջանի Հոգեւոր Լսարանի բացումը: Օրուան Հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեան, նիւթ ունենալով՝ «Հսկել մեր անձերուն եւ հովուել Տիրոջ եկեղեցին» խորագիրը:

գ) Կիրակի, 5 Նոյեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան, նիւթ ունենալով՝ «Վերստին Ծնունդ» խորագիրը:

դ) Հինգշաբթի, 9 Նոյեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ «Գարակէօզեան» Հաստատութեան, «Շամլեան-Թաթիկեան» վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Գ. խումբի Հոգեւոր Լսարանը: Օրուան Հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալլըճեան, նիւթ ունենալով՝ «Ներկայ դժուար պայմաններուն տակ՝ չլուսահատիլ եւ Աստուծոյ ապաւինիլ» խորագիրը:

ե) Ուրբաթ, 10 Նոյեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ «Գարակէօզեան» Հաստատութեան, «Շամլեան-Թաթիկեան» վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Դ. Խումբի Հոգեւոր Լսարանը: Օրուան Հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, նիւթ ունենալով՝ «Ներկայ դժուար պայմաններուն տակ՝ շուսահատիլ եւ Աստուծոյ ապաւինիլ» խորագիրը:

զ) Շաբաթ, 25 Նոյեմբեր 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի երէցական փաղանգը, Էշրէֆիէի «Ազատամարտ» ակումբին մէջ ձեռնարկեց համագումար մը: Համագումարի ընթացքին դասախօսեց Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, նիւթ ունենալով՝ «Հայ եկեղեցւոյ պատմութեան հոլովոյթը, կաթողիկոսութիւններու հիմնադրումը եւ Ազգ. Սահմանադրութիւնը» խորագիրը:

է) Կիրակի, 3 Դեկտեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբդ. Ֆիլիքեան, նիւթ ունենալով՝ «Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալներ» խորագիրը:

ը) Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ «Գարակէօզեան» Հաստատութեան, «Շամլեան-Թաթիկեան» վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Կաղանդի տօնակատարութիւն: Օրուան պատգամը փոխանցեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, նիւթ ունենալով՝ «Մեծագոյն պարգեւը Քրիստոս ինքն է» խորագիրը:



**ՀՈԳԵԻՈՐ ԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ
ՄՏԵՐՄԻԿ ՄԹՆՈԼՈՐՏՈՎ ՆՇԵՑԻՆ
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԸ**

Կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Երեքշաբթի, 26 Դեկտեմբեր 2023-ի, Պուրճ Համուտի Նոր Սիս շրջանի «Ս. Սարգիս» եկեղեցւոյ «Աթայեան եղբարք» սրահին մէջ տեղի ունեցաւ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան խրախճանք՝ մասնակցութեամբ Անթիլիասի Մայրավանքին Հոգեւոր Լսարանի տիկիներուն, ինչպէս նաեւ այլ հիւրերուն:

Ձեռնարկը սկիզբ առաւ բաժանմունքի փոխ-վարիչ՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուլերթանեանի սիրոյ սեղանի օրհնութեամբ, որմէ ետք բացման խօսքով

հանդէս եկաւ Յանձնախումբի անդամ՝ Տիկ. Մարիա Զոլաքեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհակալական խօսք ուղղեց անոնց, որոնք ամէն ձեւով նեցուկ կը կանգնին Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի գործունէութեան:

Խանդավառութիւնը բազմապատկուեցաւ Կաղանդ Պապուկի այցելութեամբ եւ վիճակահանութեան բախտաւորներուն արժէքաւոր նուէրներու տրուելովէամբ: Խրախճանքին նշուեցան նաեւ տարուան վերջին եռամսեակին ծնած հոգեւոր լսարանականներուն ծննդեան տարեդարձները եւ բաժանմունքի վարիչ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեանին անուանակոչութիւնը՝ Ս. Ստեփանոսի տօնին առիթով:



Հաւաքոյթը աւարտեցաւ Գերպ. Հայր սուրբին փակման խօսքով, ուր առաջին հերթին ան փոխանցեց Վեհափառ Հօր հայրական օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան զոյգ տօներուն առիթով ու ապա բարձր գնահատեց ձեռնարկի յաջողութեան համար թափուած ճիգերը:



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ
ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ԽՈՒՄԲ ՄԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
ՀԱՄԱԽՄԲՈՒԵՑԱՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ**

Հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ կազմակերպութեամբ Կաթողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին ու Լիբանանի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Վարժարաններուն, Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2023 առաւօտեան ժամը 9:30-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ:

Աւանդութիւն դարձած է, որ մեր եկեղեցւոյ լուսաւորիչներուն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքեալներու տօնին առիթով, Լիբանանի Հայոց Թեմի Կիրակնօրեայ վարժարանները, իրենց ուսուցչական կազմով ու աշակերտութեամբ, միախմբուին Անթիլիասի Մայրավանք՝ նշելու նաեւ «Կիրակնօրեայի Օր»ը:



Արդարեւ, Ս. Պատարագը մատուցեց Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեան, իսկ Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբը, ղեկավարութեամբ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի: Ս. Սեղանին սպասարկեցին Ճիւղիի «Ս. Յարութիւն» եկեղեցւոյ սարկաւազներն ու դպիրները:

Ս. Պատարագի աւարտին, կիրակնօրեայ վարժարաններու մեծ ընտանիքը, գլխաւորութեամբ պատասխանատու Հայր Սուրբին եւ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Սարգիսեանին ու ժանին Դանիէլեան-Մարգարեանին, բարձրացաւ Վեհարան, ուր Մայրավանքի կիրակնօրեայի ուսուցիչ՝ Արին Մարգարեան բացման խօսքով հանդէս եկաւ: Ապա, իւրաքանչիւր շրջանի կիրակնօրեայ ներկայացուց կողիկ յայտագիր մը՝ սաղմոսասացութեամբ եւ շարականի երգեցողութեամբ:

Հուսկ, Նորին Սրբութիւնը յայտնեց իր բարձր գնահատանքն ու իր հայրական օրհնութիւնը բաշխեց մանուկներուն: Ան իր ուրախութիւնը յայտնեց Մայրավանքէն ներս խումբ մը փոքրիկներու ներկայութեան գեղեցիկ տեսարանին, ուր անոնք ամէն Կիրակի կը հաւաքուին եւ Աստուծոյ խօսքը ստանալով, առաւել եւս հոգեւոր սնունդով կը լիցքաւորուին:

Ի վերջոյ, Մայրավանքի պարտէզին մէջ, Լիբանանի Հայոց Թեմի կիրակնօրեայ վարժարաններու պատասխանատուները եւ խումբ մը փոքրիկներ տնկեցին մշտադալար ծառ մը, որպէս խորհրդանիշ իրենց հաւատքի արմատաւորման:



«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

**«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ
ՆՇԵՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ**

Շաբաթ, 23 Դեկտեմբեր 2023-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Շնորհալի» երգչախումբը իր աւանդական ամանորեայ խրախճանքը ունեցաւ «Թուշնոց Բոյն»-ի նորակառոյց սրահէն ներս:

Բացման խօսքով հանդէս եկաւ վարչութեան անդամներէն՝ Մարիա Եագուպեան-Քէշիշեանը: Ողջունելէ ետք Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշըգեանը, Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանն ու հին եւ նոր անդամները, ան յայտնեց, որ Հայ Առաքելական Ս. Եկեղեցին կը համախմբէ ժողովուրդի զաւակները՝ սատարելով ազգին գոյատեւումը: Այս իմաստով, ան անդրադարձաւ մշակոյթի պահպանման մէջ եկեղեցւոյ տարած առաքելութեան ու խօսքը աւարտեց յանուն վարչութեան, շնորհակալութիւն յայտնել Վեհափառ Հայրապետին:



Բացման խօսքէն ետք, երգչախումբի ղեկավար՝ Հայր Զաւէն աղօթքով օրհնեց սեղանը եւ սկիզբ առաւ ճոխ երգերու շարանը:

Յատկանշական էր վաստակաւոր երգիչ՝ Յարութ Փամպուրճեանի անակընկալ ժամանումը խրախճանքին:

Յայտագիրը իր աւարտին հասաւ Հոգշ. Հայր սուրբին սրտի խօսքով: Ան ըսաւ, որ ժամանակը եւ կեանքը կը պատկանին Աստուծոյ. արդ, մեր ապրած կեանքը պէտք է ըլլայ աստուածահաճոյ եւ աստուածավայել: Ան նշեց թէ շատ դիւրին է քննադատել ուրիշը, սակայն մեծ գիտակցութիւն կը ցուցաբերէ այն անձը, որ իր առօրեայէն ներս ունի ներողամտութիւն, նուիրում եւ սէր: Հոգշ. Հայր սուրբը նաեւ փոխանցեց Վեհափառ Հօր հայրական օրհնութիւններն ու բարեմաղթութիւնները:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբին կողմէ: Թող այս նոր տարին ըլլայ առողջ եւ բարեբեր եւ նոր յոյսերու տարի մը: Թող որ Հայ մշակոյթը միշտ շէն մնայ Հայ եկեղեցւոյ շուրհին ներքեւ:



«ՆԱՐԵԿԱՑԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

ՇՆՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Նարեկացի» երգչախումբը կը շարունակէ իր առաքելութիւնը նոր տարեշրջանով: Այս առիթով, Ուրբաթ, 10 Նոյեմբեր 2023-ի երեկոյեան, Անթիլիասի «Կիլիկիա» թանգարանէն ներս ծնողական հանդիպում մը տեղի ունեցաւ, մասնակցութեամբ երգչախումբի խմբավար՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի, վարչութեան եւ երգչախումբի երիտասարդական խորհուրդին:

Ժողովը ընթացք առաւ Տէրունական եւ «Իմաստութիւն Հօր Յիսուս...» աղօթքով՝ արտասանուած Հոգշ. Հայր սուրբին կողմէ, որմէ ետք ան շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ, նախկին եւ նորընտիր վարչութեան, երիտասարդական խորհուրդին եւ ծնողներուն՝ անոնց տարած անշահախնդիր ծառայութեան եւ համագործակցութեան համար:

Ապա, Հոգշ. Հայր սուրբը հակիրճ կերպով արժեւորեց նախորդ տարուան աշխատանքը եւ ներկայացուց նոր ծրագիրները: Առ այդ, երգչախումբը պիտի շարունակէ ծխային եկեղեցիներու մէջ Ս. Պատարագի երգեցողութիւնները՝ համագործակցաբար Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանին, շաբաթական դրութեամբ տեղի ունեցող փորձերու ընթացքին պիտի շարունակուին հայ եւ օտար մշակույթներու ծանօթացումը, ինչպէս նաեւ հերթական կերպով կազմակերպուած ընկերային եւ խաղի հաւաքները: Հոգշ. Հայր սուրբը նաեւ տեղեկացուց, որ կը նախատեսուի ամրան ընթացքին կազմակերպել «Նարեկացի» ճամբարը:



ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐԸ ԸՆԹԱՑԶ ԱՌԻՆ

Շաբաթ, 25 Նոյեմբեր 2023-ի առաւօտեան, «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբը, առաջնորդութեամբ Դեկավար՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանին, «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ հետեւեցաւ ձայնագրութեան փորձերու:

Սոյն դասընթացքը պիտի երկարի երկու տարուան վրայ՝ ղեկավարութեամբ Տիկ. Լիանա Միքայէլեանի, որ մանկավարժական արդի մեթոտներով ձայնագրութիւն պիտի սորվեցնէ մանուկներուն:



ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ուրբաթ, 6 Դեկտեմբեր 2023-ին, Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբի նոր վարչութիւնն ու երիտասարդական խորհուրդը իրենց առաջին հանդիպումը ունեցան Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ. Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ եւ ստացան անոր Հայրապետական ու հայրական օրհնութիւնն ու թելադրութիւնները: Վարչութիւնն ու խորհուրդը կը գլխաւորէր երգչախումբի Դեկավար՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

Հանդիպման ընթացքին խմբավար Հայր սուրբը Նորին Սրբութեան ուղղած իր շնորհակալական խօսքը արտասանելէ ետք, ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց նոր վարչութեան եւ երիտասարդական խորհուրդին ծրագիրները: Ապա, իւրաքանչիւր անդամ Նորին Ս. Օծութեան պարզեց «Նարեկացի» երգչախումբին տարեկան ծրագրի մանրամասնութիւնները:

Իր օրհնութեան խօսքը փոխանցելով Վեհափառ Հայրապետը՝ ողջունեց նորակազմ վարչութիւնն ու երիտասարդական խորհուրդը եւ օրհնութիւնը փոխանցեց անոնց յառաջիկայ աշխատանքային ծրագիրներուն: Այս առիթով, Արամ Ա. Կաթողիկոս շեշտեց նախանձախնդիր ոգիով ու նուիրումով երգչախումբին գործունէութիւնը յառաջ տանելու հրամայականը եւ ներկայ աշխարհի պայմաններու լոյսին տակ նորարարութիւններով ու հարկաւոր փոփոխութիւններով ծաղկեցնելու ու աճեցնելու Հայ երգարուեստին նկատմամբ մեր մանուկներուն ու պատանիներուն սէրն ու հետաքրքրութիւնը:



Յայտնենք, որ նորակազմ վարչութեան անդամներն են՝ Էլի Իշխանեան, Ալենոյշ Գազարեան, Թամար Նազարեան, Սիլվա Դարբինեան եւ Յոլեր Յովհաննէսեան. իսկ երիտասարդական խորհուրդինը՝ Արինա Թէփիրճեան, Աննա Լոշիքեան եւ Լիանա Չիրիշեան:



Հ.Ե.Հ.Ո.Մ.

**Հ.Ե.Հ.Ո.Մ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ**

Շաբաթ, 2 Դեկտեմբեր 2023-ի յետմիջօրէին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) վարչութիւնը, գլխաւորութեամբ միութեան Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի: Այցելութեան նպատակն էր, նոր տարեշրջանի սկզբնաւորութեան, Նորին Սրբութիւնը իրազեկ դարձնել միութեան աշխատանքներուն եւ ստանալ անոր Հայրապետական օրհնութիւնը:

Իր որդիական երախտագիտական զգացումները յայտնելէ ետք, Հոգշ. Հայր սուրբը Նորին Ս. Օծութեան զեկուցեց միութեան 60 ամեակի ծրագիրներուն մասին: Այս առիթով ան նաեւ յայտնեց, որ շարք մը ծրագիրներ կարելի չեղաւ իրականացնել երկրին ու հայրենիքին մէջ ստեղծուած կացութեանց պատճառով. սակայն, միութիւնը լիայոյս է, որ յառաջիկայ նոր տարուան ընթացքին զանոնք իրականութիւն պիտի դարձնէ:



Հոգշ. Հայր սուրբին խօսքէն ետք իւրաքանչիւր վարչական հակիրճ կերպով անդրադարձաւ 2023-24 տարեշրջանի Հ.Յ.Հ.Ո.Մ.ի ծրագիրներուն:

Ապա, Վեհափառ Հայրապետը իր օրհնութեան խօսքը փոխանցեց երիտասարդներուն: Ան իր բարձր գնահատանքը յայտնեց Հոգշ. Հայր սուրբին ու վարչութեան, որոնք հաւատարմութեամբ կ'իրագործեն միութեան առաքելութիւնը՝ միաժամանակ շեշտելով, որ Հ.Յ.Հ.Ո.Մ.ի գործունէութիւնը, յատկապէս վերջին տարիներուն, ցոյց կու տայ անոր աշխոյժ կեանքը: Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց, թէ այսօրուան երիտասարդութիւնը ո՛չ միայն մեր ազգի ապագան է, այլեւ անոր ներկան է: Հետեւաբար, պէտք է կեդրոնանալ մեր եկեղեցական ու ազգային արժէքները պահպանելու եւ նոր սերունդներուն փոխանցելու սրբազան գործին վրայ: Այս ոգիով, տեսլականով ու գիտակցութեամբ պարտի այսօրուան երիտասարդութիւնը նայիլ ապագային ու կերտել մեր ապագան:

Իր խօսքի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս յաջողութիւն մաղթեց Հոգշ. Հայր սուրբին ու վարչութեան անդամներուն՝ Հ.Յ.Հ.Ո.Մ.ի բոլոր ծրագիրներու բարւոք իրագործման:



**ՎԵՅԱՓԱՌ ՅԱՅՐԱՊԵՏԸ ԻՐ ՅԱՅՐԱԿԱՆ
ՉԼԱՅԱՏԱԼՔՆ ՈՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ՓՈՆԱԼՑԵՑ
ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ**

Շաբաթ, 16 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Հայ Եկեղեցոյ Համալսարանական Ուսանողներու Միութենէն (Հ.Յ.Հ.Ո.Մ.) խումբ մը, յատկապէս նոր անդամները եւ իր օրհնութիւնը փոխանցեց անոնց: Անոնք Նորին Սրբութեան այցելութեան եկած էին միութեան Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի գլխաւորութեամբ:

Յաւուր պատշաճի խօսք արտասանեց Հոգեւոր Խորհրդատու Հայր սուրբը: Իր խօսքին մէջ ան ըսաւ, որ, անսալով Նորին Ս. Օծութեան Հայրապետական կոչին, այսօր Հ.Յ.Հ.Ո.Մ.ը կ'ապրի իր վերակազմակերպումի օրերը՝ «Սփիւռքի Վերակազմակերպում Բ. – Ինքնաքննութենէ Վերակազմակերպում» խորագրին եւ Հայրապետական հռչակագրին լոյսին տակ: Այս առիթով Հոգշ. Հայր սուրբը յայտնեց, որ այնպէս ինչպէս կեանքը յարափոփոխ ընթացքի մէջ



է, նույնպէս ալ Հ.Ե.Հ.Ո.Մ.ի վարչակազմակերպչական, ընկերային ու դաստիարակչական կեանքը փոփոխութեան՝ այլ խօսքով, վերակազմակերպումի հունին մէջ կը գտնուի: Ապա, յանուն Հ.Ե.Հ.Ո.Մ.ի անդամներուն, ան իր որդիական երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց Վեհափառ Հօր՝ անոր ցուցաբերած նիւթական եւ բարոյական օժանդակութեան եւ հայրական խնամքին ու հոգատարութեան համար:

Խօսք առաւ նաեւ Հ.Ե.Հ.Ո.Մ.ի վարչութեան Ատենապետ՝ Սերուժ Խանճի-հանեանը, որ կարեւորեց ուսումնառութեան անհրաժեշտութիւնը եւ Հայ երիտասարդին համար զօրաւոր գէնք մը ըլլալու իրողութիւնը: Ան դիտել տուաւ, որ իբրեւ սփիւռքահայ երիտասարդներ, մեր նախնիներէն ժառանգած եկեղեցական ու ազգային արժէքները ու հայեցի դաստիարակութեան ոգին պէտք է փոխանցենք նոր սերունդին, որպէսզի կարենանք մեր ազգի ներկան ու ապագան ամուր հիմերու վրայ հաստատել:

Հանդիպման աւարտին իր Հայրապետական ողջոյնի խօսք փոխանցեց Վեհափառ Հայրապետը: Առաջին հերթին, ան ողջունելի նկատեց Հ.Ե.Հ.Ո.Մ.-ականներուն մնայուն ներկայութիւնը մեր ազգային եւ մանաւանդ եկեղեցական կեանքին մէջ: Ան շեշտեց երիտասարդութեան ներկայութեան անհրաժեշտութիւնը եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մէջ: Այս առիթով ան յիշեցուց, թէ Հ.Ե.Հ.Ո.Մ.ը եւ անոր անդամները միայն լիբանանեան նեղ պարունակին մէջ պէտք չէ դիտենք, որովհետեւ անոնք աշխարհով մէկ տարածուած են եւ կը գործեն մեր գաղութային կեանքէն ներս՝ զանազան բնագաւառներու ու մարզերու մէջ: Ուստի, Նորին Ս. Օծութիւնը անգամ մը եւս ընդգծեց այս միութեան եզակի առաքելութիւնը եւ քաջալերեց, որ համալսարանական երիտասարդներ մաս կազմեն Հ.Ե.Հ.Ո.Մ.ի մեծ ընտանիքին, որպէսզի առաւել հաստատակամ ծաւալի անոր վստահուած գործունէութիւնը:

Աւարտին, Հ.Ե.Հ.Ո.Մ.ի ատենապետը, որ անցեալ Օգոստոս ամսուան ըն-

Թագքին բարձրացած էր Արարատ լեռ, Վեհափառ Հայրապետին փոխանցեց Արարատի գագաթէն բերուած ջուր, ափ մը հող եւ քար, ինչպէս նաեւ՝ Արագածի ու Արարատի գագաթներուն վրայ ծածանած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դրօշը:



Հ.Ե.Յ.Ո.Մ.-Ը 2023 ՏԱՐԻՆ ԿԸ ՓԱԿԵ ԱԻԱՆԴԱԿԱՆ ԽՐԱԽՃԱՆՔՈՎ

Շաբաթ, 16 Դեկտեմբեր 2023-ի երեկոյեան, Վեհափառ Հայրապետին հետ հանդիպելէ ու անոր հայրական յորդորները լսելէ ետք, Հ.Ե.Յ.Ո.Մ.-ականները ուղղունցան ժտէյտէ շրջանի «Արցախ» ակումբը, ուր ունեցան իրենց տարեկան աւանդական Նոր Տարուան խրախճանքը:

Ճոխ մթնոլորտը իր աւարտին հասաւ Հ.Ե.Յ.Ո.Մ.-ի Հոգեւոր Խորհրդատու՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի սրտի խօսքով, ուր շեշտեց հաշուեյարդարի եւ ինքնավերանորոգման կարեւորութիւնը, որպէսզի երիտասարդը կարենայ բարելաւել ինքզինք:



ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏ Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր 2023-ին, Մոնթրէալի «Ս. Յակոբ» Մայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիցագոյն միաբաններէն, Բերիոյ Հայոց Թեմի վաստակաւոր նախկին Առաջնորդ՝ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի (1939-2023) եկեղեցւոյ կարգն ու վերջին օծումը: Ս. Պատարագը մատուցեց եւ վերջին օծման կարգին նախագահեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չարեան, աղօթակից ունենալով սրբազան արքեպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, ազգային եւ համայնքային ներկայացուցիչներ եւ հաւատացեալ բազմութիւն:

Այս առիթով ընթերցուեցաւ Վեհափառ Հայրապետին ցաւակցագիրը, ուր Նորին Սրբութիւնը յատկապէս կ'ըսէր. «Տիպար հոգեւորական մը եղաւ ու մնաց Սուրէն սրբազան իր հոգեւորական կեանքի բոլոր տարիներուն ու բո-



լոր պայմաններուն մէջ: Այս պարզ, բայց խորիմաստ վկայութեամբ կարելի է բնութագրել հանգուցեալ Սրբազան Հօր կեանքն ու ծառայութիւնը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ իր ունեցած անխախտ հաւատարմութիւնը մղիչ ոյժը հանդիսացաւ իր ծառայութեան՝ Անթիլիասէն մինչեւ Սուրիա ու Գանատա: Մեր եկեղեցւոյ ծէսին ու աւանդութիւններուն անվթար պահպանումը յատուկ տեղ գրաւեց սրբազանի կեանքին մէջ: Այս ուղղութեամբ ան խօսեցաւ ու գրեց եւ հակառակ իր առողջական փխրուն վիճակին, օրինակելի նուիրումով ծառայեց մեր ժողովուրդին՝ մինչեւ իր երկրաւոր կեանքին վերջին օրը»:

Հուսկ, Բաբգէն Սրբազան Հայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ Սուրէն սրբազանի կեանքի նուիրումին, տքնաջան ու անշահախնդիր աշխատանքին եւ անձնդիր ծառայութեան ոգիին: Աւարտին, ան ցաւակցութիւն յայտնեց նաեւ վախճանեալ սրբազան հօր հարազատներուն:



Յընթացս սրբազան արարողութեան, հոգեւոր հայրեր յարգանքով մօտեցան Տ. Սուրէն Արքեպիսկոպոսին եւ համբուրելով ողջոյն առին անոր միւռնուած աջէն: Յայտնենք, որ արարողութեանց ընթացքին Գերպ. Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեան ընթերցեց վախճանեալ սրբազան հօր կենսագրականը:

Նկատի ունենալով, որ ննչեցեալ Սուրէն սրբազան հօր փափաքն էր հանգչիլ Անթիլիասի Մայրավանքի միաբանական դամբարանին մէջ, իր վախճանեալ միաբանակից եղբայրներուն կողքին, ուստի, Թաղման Կարգը կատարուեցաւ Մայրավանքին մէջ, 27 Դեկտեմբեր 2023-ի առաւօտուն:

Արդարեւ, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, «Զարեհեան» միաբանական դամբարանին մէջ, Կիլիկեան Ուխտի Միաբան Հայրեր կատարեցին Գերեզմանի Կարգի շարականներու երգեցողութիւնը եւ աղօթասացութիւնը: Հանգուցեալ Սրբազան Հօր դագաղը պարուրուեցաւ քարոզասացութիւններով, աւետարանական ընթերցումներով եւ սաղմոսերգութիւններով: Արարողութեան ընթացքին, Վեհափառ Հայրապետը կատարեց հողի օրհնութիւնը՝ աղօթելով. «Օրհնեա՛, Տէր, ողորմութեամբ քով զհողս ծառայիս Քո այսորիկ, եւ յիշեա զսա զի հող էր եւ անդրէն ի հող դարձաւ ըստ հրամանի քում»:

Թաղման Կարգի աւարտին, Միաբան Հայրեր «Կիլիկիա» օրհներգը: Ապա, Նորին Սրբութիւնը Վեհարանի դահլիճին մէջ ցաւակցութիւններ ընդունեց:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

Ծնած է 21 Յունիս 1939-ին, Հալէպ (Սուրիա): Աւագանի անունով՝ Աբրահամ: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի «Ազգ. Ուսումնասիրաց» եւ «Հայկազեան» վարժարաններուն մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 8 Հոկտեմբեր 1954-ին: Աւարտելով Դպրեվանքի Ժառանգաւորաց բաժինը, սարկաւագ ձեռնադրուած է 22 Յունիս 1959-ին, ձեռամբ՝ ճէզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ՝ Տ. Տաճատ Արք. Ուրֆալեանի:

Կուսակրօն քահանայ ձեռնադրուած եւ օծուած է 24 Յունիս 1962-ին, ձեռամբ՝ Երջանկայիշատակ Տ.Տ. Զարեհ Ա. Փայասըլեան Կաթողիկոսին, եւ վերակոչուած՝ Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐԵՂԱՅ: Յառաջիկայ երեք տարիներու ընթացքին, վանական կեանքէն ներս ստանձնած է Կաթողիկոսարանի Մայր Տաճարի լուսարարապետութեան պաշտօնը, միանգամայն, որպէս ուսուցիչ, Դպրեվանքէն ներս դասաւանդելով եկեղեցական երաժշտութիւն, Ս. Գրոց եւ քրիստոնէական նիւթեր: Վերոյիշեալ ժամանակաշրջանին եղած է նաեւ ուսուցիչ Կաթողիկոսարանի շրջափակին մէջ գտնուած «Մարտիկեան» վարժարանին:

Վարդապետական գաւազան ստացած է 3 Նոյեմբեր 1963-ին, ձեռամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Տ. Տաճատ Արք. Ուրֆալեանի, աւարտա-



ճառ ներկայացնելով՝ «Հայաստանեայց Եկեղեցոյ Եօթը Խորհուրդներու Պատմական Ու Կանոնական Զարգացումը՝ Ըստ Հայաստանեայց Եկեղեցոյ Կանոնագրութեանց» նիւթը:

23 Դեկտեմբեր 1965-ին, իբրեւ հոգեւոր հովիւ, գործուղուած է Մոնթրէալ (Գանատա), ուր ծառայած է ութ տարիներ: Իր հովուութեան շրջանի կարեւորագոյն աշխատանքներէն մէկը եղած է Մոնթրէալի «Ս. Յակոբ» եկեղեցոյ եւ Հայ Կեդրոնի շինարարական ծրագրին իրագործումը:

Ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք ստացած է 25 Յուլիս 1969-ին, Երջնկյ. Տ.Տ. Խորէն Ա. Բարոյեան Կաթողիկոսին մոնթրէալահայ գաղութին շնորհած հովուապետական այցելութեան առիթով:

1973 Յունիսին, Խորէն Ա. Կաթողիկոսի տնօրինութեամբ, վերադարձած է Մայրավանք եւ ստանձնած՝ Դպրեվանքի փոխ տեսուչի, Մայր Տաճարի լուսարարապետի եւ Կաթողիկոսարանի դիւանապետի պաշտօնները, միաժամանակ դասաւանդելով Դպրեվանքէն եւ «Մարտիկեան» վարժարանէն ներս, իսկ 1974-1976 տարեշրջաններուն, որպէս կրօնագիտութեան ուսուցիչ՝ Ազգ. «Սոփիա Յակոբեան» երկրորդական վարժարանէն ներս:

5 Դեկտեմբեր 1976-ին Մայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է, ձեռամբ՝ Դպրեվանքի Տեսուչ Հոգելոյս Տ. Արտաւազդ Արք. Թըրթրոեանի: 15 Յուլիս 1977-ին Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան Խառն ժողովին կողմէ (Կրօնական եւ Քաղաքական) ընտրուած է Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդական Տեղապահ: Հալէպ ժամանած է 10 Սեպտեմբեր 1977-ին եւ 15 Հոկտեմբեր 1977-ին Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովին կողմէ ընտրուած է Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ:

30 Հոկտեմբեր 1977-ին եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ՝ Երջնկյ. Տ.Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսին: Գարեգին Բ. Կաթողիկոսը Բերիոյ Հայոց Թեմին տուած հովուապետական անդրանիկ այցելութեան առիթով (29 Ապրիլ-12 Մայիս 1983), 8 Մայիս 1983-ին, յընթացս Հալէպի «Ս. Քառասնից Մանկանց» Մայր եկեղեցոյ մէջ մատուցած Հայրապետական Ս. եւ Անմահ Պատարագին, Սրբատառ Կոնդակով Սուրէն Եպիսկոպոսին շնորհած է Արքութեան պատիւ եւ տիտղոս:

27 Յունիս 1993-ին, Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան նախաձեռնութեամբ եւ կազմակերպութեամբ, մեծ շուքով նշուած է Սուրէն Արքեպիսկոպոսի քահանայական ձեռնադրութեան երեսնամեակը եւ Բերիոյ Հայոց Թեմին մէջ առաջնորդութեան տասնըփնգամեակը, Հալէպի «Քարէն Եփփէ» Ազգ. Ճեմարանի շրջափակէն ներս: Այս առիթով հաստատուած է Ազգ. Առաջնորդարանի «Սուրէնեան» ֆոնտը, յերախտագիտութիւն անոր կողմէ լու-

թեամբ կատարուած բարերարութիւններուն եւ նուիրատուութիւններուն:

5 Հոկտեմբեր 2002-ին, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Արամ Ա. Կաթողիկոսի, մեծարանքի հանդիսութեամբ մը ոգեկոչուած է Սրբազան Հօր կուսակրօն քահանայութեան քառասնամեակը եւ Բերիոյ Հայոց Թեմին մէջ առաջնորդութեան քսանհինգամեակը: Այս առիթով պատրաստուած յուշամատեանը մէկ մանրանկարն է անոր ծառայական կեանքին:

2004-ին Սուրէն Արք. Գաթարոյեան առողջական պատճառներով իր հրաժարականը ներկայացուցած է Ազգ. Երեսփոխանական Ժողովին եւ 10 Ապրիլ 2004-ին՝ հրաժեշտ տուած Հալէպին:

2004-էն սկսեալ սրբազան հայրը Արամ Ա. Վեհափառ Հայրապետին բարձր տնօրինութեամբ, որպէս Հոգեւոր Տեսուչ, ծառայած է Մոնթրէալի (Գանատա) «Ս. Յակոբ» Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

**ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓՈԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Արամ Ա. Կաթողիկոս Շաբաթ, 4 Նոյեմբեր 2023-ին, ընդունեց այցելութիւնը Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան, գլխաւորութեամբ Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանի:

Առաջնորդ սրբազան հայրը խօսք առնելով, Թեմին կողմէ շնորհակալութիւն յայտնեց Նորին Սրբութեան, անցնող օրերու ընթացքին Թեմին շնորհած յաջորդական երեք այցելութիւններուն համար: Յիշեալ այցելութիւններն ու հանդիպումները, Ազգ. Իշխանութեան ու ծխային շրջաններու մարմիններուն եւ գաղութէն ներս գործող համայնքային, կրթական, մշակութային, բարեսիրական, մարզական ու հայրենակցական կառոյցներու ներկայացուցիչներուն հետ, դարձան սքանչելի առիթներ Թեմն ու գաղութը դէպի վերակազմակերպում ու վերաշխուժացում մղող:

Ազգ. Վարչութեան հետ հանդիպումը առիթ հանդիսացաւ աւելի խոր կերպով քննարկելու Թեմին առնչուած կարգ մը հարցերը:

Այս առիթով, յանուն Լիբանանի Հայոց Թեմին, յիշատակի նուերներ յանձնուեցան Վեհափառ Հայրապետին, որ իր կարգին, զանոնք փոխանցեց «Կիլիկիա» թանգարանին:

Յայտնենք, որ Թեմի ու գաղութի ներկայացուցիչներուն հետ ունեցած իր յաջորդական երեք հանդիպում-զրոյցներու ընթացքին, Նորին Ս. Օծութիւնը «Սփիւռքի Տարի»ին առիթով, վեց մարզերու մէջ անհրաժեշտ յիշեցումները

կատարելէ ետք, շեշտած էր ծրագրումներն ու աշխատանքները կատարելու հրամայականը, որպէսզի կարելի ըլլայ գաղութը առաջնորդել դէպի վերակազմակերպում: Ան նաեւ իր գնահատանքը յայտնած էր Լիբանանի Հայութեան, որ հակառակ յաջորդական տագնապներուն, գաղութը իր հաւաքական հաւատքով ու կամքով կրցած է վերականգնիլ եւ իր իւրայատուկ դերը շարունակել Սփիւռքի հայութեան կեանքէն ներս: Միաժամանակ, Վեհափառ Հայրապետը յիշեցուցած էր, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը շարունակէ իր ամբողջական զօրակցութիւնը լիբանանահայութեան նկատմամբ:

**ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՄԻ ԶԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ
ԽՈՐՀՈՐԴԸ ԱՅՑԵԼԵՑ
ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Ուրբաթ, 8 Դեկտեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Պուրճ Համուտի Քաղաքապետական խորհուրդին: Քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի գլխաւորութեամբ, քաղաքապետութեան խորհուրդը կը բաղկանայ 21 անձերէ՝ մեծամասնութիւնը Լիբանանի Հայ համայնքը ներկայացնող:

Մարտիկ Պօղոսեանը յանուն Քաղաքապետարանին, Նորին Սրբութեան յանձնեց Լիբանանի մայրին ներկայացնող յուշանուէր մը:

Քաղաքապետութեան կողմէ խօսք առաւ ճորճ Գրիգորեանը: Առաջին հերթին, ան իր ջերմ շնորհակալութիւնը

յայտնեց Նորին Ս. Օծութեան, որ քաղաքապետութեան նախաձեռնած ժողովրդային տուներու ծրագրին՝ Կաթողիկոսութեան կողմէ 4,5 միլիոն տոլարի մասնակցութիւն բերելով՝ վերակենդանացուցած էր ծրագիրը, Լիբանանը դիմագրուած ընկերային-տնտեսական ամէնէն ծանր պայմաններուն մէջ: Գրիգորեան իր խօսքին մէջ ներկայացուց Պուրճ Համուտի բարգաւաճման ու զարգացման նպաստող շարք մը ծրագիրներ, որոնց իրագործումը շուտով պիտի սկսի՝ օժանդակութեամբ կարգ մը պետութիւններու ու ոչ-կառավարական կազմակերպութիւններու: Ապա, խօսք առաւ փոխ-քաղաքապետ Մարտիկ Արսլանեանը: Ան իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց Վեհափառ Հայրապետին եւ ընդգծեց քաղաքապետութեան նախաձեռնած յիշեալ ծրագիրներու իրականացման կարեւորութիւնը:

Արտասանուած խօսքերէն ետք, Նորին Ս. Օծութիւնը Հայրապետական ու հայրական սիրով ողջունեց ներկաները: Ան վստահեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ իր գորակցութիւնը Պուրճ Համուտի առաւել ծաղկման ու բարգաւաճման աշխատանքներուն: Ան իր բարձր գնահատանքը յայտնեց քաղաքապետ Մարտիկ Պողոսեանին, քաղաքապետութեան խորհուրդին եւ պաշտօնէութեան, իրենց նուիրեալ աշխատանքին համար: Արամ Ա. Կաթողիկոս յատկապէս ըսաւ, թէ այսօր չկայ հայ մը, որ լսած չէ Պուրճ Համուտի մասին: Պուրճ Համուտը հոմանիշ է հայութեան ներկայութեան. հոմանիշ է համայնքներու համակեցութեան, ինչպէս նաեւ հետզհետէ զարգացող շուկայի: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ յատուկ խնամք տարուի շրջանին նկատմամբ, ամէն իմաստով: Ուրախ եմ, որ Պուրճ Համուտի բարգաւաճման աշխատանք-

քին լծուած է քաղաքապետութիւնը: Շրջանէն ներս ապահովութիւնը, կարգապահութիւնը, մաքրութիւնն ու կազմակերպութիւնը անհրաժեշտութիւն է, շեշտեց Վեհափառ Հայրապետը:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՈԱՄԿԱՎԱՐ ԱՉԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿԳՈՒԹԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ
ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԸ**

Ուրբաթ, 8 Դեկտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանք այցելեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան (Ռ.Ա.Կ.) Լիբանանի վարիչ մարմինը, առաջնորդութեամբ մարմինի Ատենապետ Տոքթ. Աւետիս Տաքէսեանի: Վերջինս Վեհափառ Հայրապետին ուրախութեամբ յայտնեց, որ անցնող տարիներուն կուսակցութեան կեանքէն ներս յառաջացած բաժանումները վերջ գրտած են: Իր խօսքին մէջ ան յիշեցուց, որ Նորին Ս. Օծութիւնը յաճախակի առիթներով շեշտած է կուսակցութեան ներքին միասնականութիւնը ամուր պահելու եւ միջ-կուսակցական գործակցութիւնը ամրապնդելու հրամայականը: Ահա, այսօր, կուսակցութիւնը միացեալ կազմով իր անդրանիկ այցելութիւնը կը կատարէ ձեզի՝ ստանալու համար ձեր Հայրապետական ու հայրական օրհնութիւնը, ըսաւ Տոքթ. Տաքէսեան:

Իր կարգին, Արամ Ա. Կաթողիկոս ուրախութեամբ ողջունեց Ռամկավար Ազատական Կուսակցութեան վերականգնումի աշխատանքները: Ան յիշեց, որ վերջին տասնամեակներուն, յատկապէս Սփիւռքի կեանքին մէջ, կուսակցութիւնը կարեւոր դեր ունեցած է Հայ կեանքի զանազան մարզերէն ներս եւ յոյս յայտնեց, որ Ռ.Ա.Կ.ը վերանորոգ նուիրումով շարունակէ իր ազգային ծառայութիւնը: Այս առիթով Նորին Սրբութիւնը նաեւ վեր առաւ

մեր ազգի կեանքին ներս համախմբումի հրամայականը, մանաւանդ ներկայ ժամանակներուն, երբ անորոշութեամբ ու յուսահատութեամբ լեցուն է մեր կեանքը, Հայաստանէն սկսեալ:

Յայտնենք, որ հանդիպման ներկայ էր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի համատեմապետ՝ Ստեփան Տէր Պետրոսեանը:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ**

Երեքշաբթի, 12 Դեկտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեան:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկումի ենթարկելու Արցախի բռնագրաւումէն ետք ստեղծուած կացութիւնը, Հայաստանի ներքին քաղաքական իրավիճակը եւ ընդհանրապէս Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց առնչուած խնդիրներն ու մտահոգութիւնները:

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՐԺԱՆԹԻՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆԸ**

Հինգշաբթի, 28 Դեկտեմբեր 2023-ի առաւօտեան, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի մօտ Արժանթինի նորանշանակ դեսպան՝ Մարիա Վըրճինիանը:

Նկատի ունենալով, որ դեսպանուհիին առաջին այցելութիւնն է Կաթողիկոսարան, Վեհափառ Հայրապետը համապարփակ կերպով պարզեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը:

Հանդիպման քննարկումները ընդհանրապէս կեդրոնացան Լիբանանի քաղաքական կացութեան, շուտափոյթ նախագահական ընտրութեան կարելոյութեան, համայնքներու միջեւ համախոհութեան եւ քրիստոնէյ-իսլամ առաւել երկխօսութիւն ծաւալելու անհրաժեշտութեան վրայ: Այս ծիրէն ներս, Նորին Սրբութիւնը նաեւ անդրադարձաւ Լիբանանի Հայ համայնքին ու անոր կարելոյ դերակատարութեան:

**ՄԻԶԻՆ ԱՐԵՎԵԼԸԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ԽՈՐՀՈՐԴԻ ԸՆԴՀ. ԶԱՐՏՈՒՂԱՐԸ
ԱՅՑԵԼԵՑ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Շաբաթ, 23 Դեկտեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Միշել Ապսի, ընկերակցութեամբ Ընդհ. Քարտուղարի օգնական՝ Սեդա Խտըշեանի, Խորհուրդի աստուածաբանական բաժանմունքի պատասխանատու Դոկտ. Հայր Անթուան Ալ-Ահմարի եւ Յունուար 2024-ին կայանայիք երգչախմբային համերգի համադրող՝ Մարք Սըրիբճի:

Այցելութեան նպատակն էր Նորին Սրբութեան ներկայացնել Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի յիսնամեակի տօնակատարութեանց առնչուած ծրագիրները եւ ունենալ անոր պատկերացումն ու օրհնութիւնը այդ ուղղութեամբ: Ընդհ. Քարտուղարը առաջարկեց Նորին Ս. Օծութեան, որ Խորհուրդին 50-ամեակին առիթով, զանազան շրջաններէ Լիբանան ժամանող միջ-եկեղեցական օտար հիւրերու մասնակցութեամբ, համագումար մը կազմակերպուի՝ կեդրոն ունենալով Անթիլիասի Մայրավանքը եւ Նորին Սրբութիւնը ըլլայ օրուման գլխաւոր դասախօսը:

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՋ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 5 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2023: Ը. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մեկոյեան:

ԿԻՐԱԿԻ, 12 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2023: Թ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:

ԿԻՐԱԿԻ, 19 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2023: Ժ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան:

ԿԻՐԱԿԻ, 26 ՆՈՅՆՄԱՐԵՐ 2023: Ա. ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերայ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան:

ՇԱՐԱԹ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023: ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԻՈՐՉԱՅՆ ՄԵՐՈՑ՝ ԹԱԴԷՆՍԻ ԵՒ ԲԱՐԹՈՒՂԻՄԷՆՍԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերայ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:

ԿԻՐԱԿԻ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023: Բ. ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան:

ԿԻՐԱԿԻ, 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023: Գ. ՅԻՄՆԱԿԻ: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՅ ՊԱՀՈՑ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

ԿԻՐԱԿԻ, 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023: Դ. ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան:

ԿԻՐԱԿԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023: Ե. ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան:

ԿԻՐԱԿԻ, 31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Չուալերթեան:

Տպարան
Կաթողիկոսության Հայոց
Մեծի Տանն Կիլիկիոյ
Անթիլիաս - Լիբանան